ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

Գայանե Անմեղիկի Ահարոնյան

«Իրավունքի հասկացությունը և էությունը» թեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները հիմնական դպրոցում

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ Գ. Էմինյան

Բովանդակություն

Ներածություն ---------- 3

Հիմնական մաս ---------- 6

Եզրակացություն ---------- 21

Գրականություն ցանկ ---------- 23

Ներածություն

Այսօր ուսուցիչը զբաղվում է ինքնակրթությամբ , որի ընթացքում պարբերաբար ուսումնասիրում է հանրակրթական ոլորտը ուսումնասիրող օրենսդրական դաշտը , պետական և առարկայական չափորոշիչները:

Ոսուցիչը հնարավորություն է ունենում ուսումնասիրել այնպիսի խնդիրներ, որոնք առնչվում են ուսումնադաստիարակչական ողջ գործընթացին: Ուումնական գործում նեգրված մասնակիցների, մասնավորապես սովորողների հոտ միասին պլանավորում այնպիսի ուսուցման գործընթաց, որի արդյունքում սովորողները կկարողանան գնահատել քաղաքացիական հասարակության և պետական իշխանության ինստիտուտների փոխգործակցության անհրաժեշտությունը հանրային բարիքի ստեղծման համար:

Պետական չափորոշիչը ենթադրում է , որ ավագ դպրոցը ավարտողը պետք է հարգի պետությունը, պետական խորհրդանիշները, լինի դրա կրողը, ունենա պետականամետ դիրքորոշում, համոզմունքներ, առանձին դեքերում պատշաճ չի՝ մասնավորապես սովորողները չգիտեն ինչպես վարվեն, երբ հնչում է Հայաստանի Հանրապետության օրհներգը, չգիտեն դրոշի մասին տեղեկատվություն, որն է կոչվում դրոշ և ինչպես է այն կիրառվում, զինանշանը երբ և ինչպես է այն կիրառվում: Առանձին դեպքերում բացակայում է հարգանքը պետական մարմիններում աշխատող զինվորականների , ոստիկանի, ուսուցչի և պետական աշխատողների նկատմամբ:

Կրթությունը անձի որակը բնութագրող հատկանիշ է: Կրթության հանաշխարհային գերխնդիրը սովորածը ուրիշին սովորեցնես և կարողանաս դրա վրա ավելացնել: Կրթության հիմնական նպատակը գիտելիքների հարստացում է և հաջորդ սերունդներին փոխանցելն է:

<< Պետությունը պարտավոր է հասարակական միջավայրի բոլոր ազդեցությունները, մեր կյանքի յուրաքանչյուր դրվագ, հասարակական միջավայրի յուրաքանչյուր քառակուսի մետր ձևավորել աճող սերնդի դաստիարակությանը նպաստելու տեսանկյունից >> [4.,108] :

Հասարակագիտություն առարկայի դասաժամերը ուսուցիչներին հնարավորություն է տալիս սովորողների մոտ խթանելու և զարգանալու ազգային գիտակցությունն ու մտածողությունը, դաստիարակվել որպես պատասխանատու, սոցիալապես հոգատար ապագայի հասուն քաղաքացի: Մեր օրերում սովորողները ոչ հեշտությամբ, բայց կարողանում են առանձին խնդիրներ վերլուծել և մեկնաբանել, ներկայացնել կարծիք, դիրքորոշում:

Չնայած, որ սովորողների մեծ մասը կարողանում են անկաշկանդ արտահայտել իրենց կարծիքը:

Ցանկացած խնդիր վերաբերյալ քննարկումը այն ավելի հասկանալի է դարձնում և մոտեցնեում է դրա լուծման լավագույն ուղուն:

<< Մանկավարժություն >> գրքի հեղինակներ Յու. Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան, գրում են << Մեր ժամանակների ուսուցիչը ոչ միայն պետք է ունենա հարուստ գիտելիքներ, համակողմանի զարգացվածություն և լայն մտահորիզոն, այլև կարողանա իր ունեցածը դարձնել սովորողների սեփականությունը, անընդհատ հարստացնի նրանց գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Այս հիմնխնդիրը կարելի է լուծել ուսուցման և դաստիարակության գործընթացները օպտիմալացնելու , նոր մեթոդներ հայնագործելու, հին մեթոդները կատարելագործելու, դրանք կիրառելիս նորին զուգակցելու, ուսուցման տեխնիկական միջոցները լայնորեն օգտագործելու միջոցով>>: [1, էջ 85]:

Այսօր կրթական համակարգում շեշտը դրվում է աշակերտակենտրոն ուսուցում վրա, ինչը թույլ է տալիս որպեսզի սովորողները ավելի անկաշկանդ ձևավորեն իրենց կարծիքը և բարձրաձայնեն այն:

Հետազոտություն նպատակը

<<Պետություն և քաղաքացիական կրթություն>> թեմայի ուսուցման արդյունավետ պայմանները ավագ դպրոցում :

Հետազոտության խնդիրները

Նորովի մեկնաբանել պետություն և պետականություն հասկացությունները , ներկայացնել պետության կառավարման մոդելները , բացահայտել պետության և քաղաքացիական հասարակություն թեմայի մանկավարժական պայմանները:

Ուսումնասիրելով << Պետություն և քաղաքացիական հասարակություն >> թեման սովորողների մոտ հնարավորություն է ընձեռնվում արտահայտել սեփական կարծիքը դրանց վերաբերյալ՝ պետական խորհրդանիշների, քաղաքական ակտիվության, հասարակակն ակտիվության, քաղաքացիական դրսևորումների, հոգատար վերաբերմունքի և այլի վերաբերյալ:

Հիմնական մաս

Պետություն ասելով սովորաբար հասկանում ենք , որ դա մի մարմին է, որը համախմբում է մարդկանց և կազմակերպում հասարակական աշխատանքներ: Պետությունը ապահովում է երկրի պաշտպանությունը թշնամիներից, կարգավորում նույն տարածքում ապրող մարդկանց համատեղ կյանքը:

<<**Պետությունը,** որևէ ժողովրդի և նրա յուրաքանչյուր ներկայացուցչի բնականոն և մինչև վերջ ինքնադրսևորման՝ քաղաքականության հայտնի առայժմ միակ ձևն է, ազգի կարգաբանական աստիճանը բնորոշող հիմնական քննությունը, մշակույթի բարձրակետը:

Քաղաքական ամբողջականության տեսանկյունից պետությունը քաղաքականապես կազմակերպված ցանկացած համայնքն է, որն ապրում է կառավարման մ[իևնույն համակարգի ներքո: Պետությունները կարող են լինել սուվերեն (ինքնիշխան) և ոչ սուվերեն (ոչ ինքնիշխան): Օրինակ, դաշնային (ֆեդերալ) պետությունները դաշնային (ֆեդերալ) միությունների անդամ են, և միայն մասնակիորեն են սուվերեն, բայց, այնուամենայնիվ պետություններ են: Որոշ պետություններ արտաքին սուվերենի կամ գերիշխանության (հեգեմոնիայի) սուբյեկտ են, որում հիմնական սուվերենությունը գտնվում է մեկ այլ պետության մեջ: Այն պետությունները, որոնք ինքնիշխան են, հայտնի են որպես սուվերեն պետություններ: Ամերիկյան անգլերենի կրողները հաճախ պետություն և կառավարություն տերմինները օգտագործում են որպես հոմանիշներ, որտեղ երկու բառերն էլ ենթադրում են կազմակերպված քաղաքական խմբի առկայություն, որը որոշակի տարածքում իրականացնում է իշխանություն>> :

<< Հայոց պատմության չափորոշչի ու ծրագրի մշակման և ավագ դպրոցում նրա դասավանդման գիտական ու մեթոդական կարևոր մոտեցումներից են՝

- Պետականության անհրաժեշտության՝որպես ազգի հարատևման գրավականի գիտակցության ձևավորումը և ամրապնդումը,
- Ազգային գաղափարախոսության՝որպես պետականության պահպանման և զարգացման կարևոր նախադրյալի, գիտակցության ձևավորումը,
- Պետություն-անհատ, պետություն-հասարակություն ներդաշնակ հարաբերությունների գիտակցության ձևավորումը>>[7.,9]:

Շատ հասարակություններ պետությունների կողմից կառավարվել են հազարամյակներով, մինչդեռ որոշները եղել են պահանջազուրկ հասարակություններ: Ժամանակի ընթացքում կառավարման բազմաթիվ ձևեր են զարգացել՝ իրենց գոյության իրավունքը հիմնավորելով ամենատարբեր արդարացումներով(ինչպես օրինակ Թագավորների աստվածային իրավունքը, հասարակական պայմանագրի տեսությունը և այլն): 21-րդ դարում ժամանակակից ազգ-պետությունը պետության գերիշխող ձևն է, որի սուբյեկտ է հանդիսանում ժողովուրդը:

<<Ազգերի բնականոն ձևավորման հիմնական «հումքը» էթնոսն ու հեռու և մոտ էթնիկական խմբավորումներն են, «բազան» միասնական պատմական տարածքը /հայրենիքը/, իսկ իրականացնողը՝պետությունը>>[3.,400]:

Երկրների պետական կարգը կարող է սահմանվել մի քանի չափանիշերով.

- ժողովրդավարական արժեքի գնահատում՝ ժողովրադավարականից մինչև ոչ ժողովրդավարական կարգեր՝ ավտոտարիզմ, դիկտատուրառազմական ռեժիմ, գաղութատիրություն և այլն.
- եղանակը, որով որոշվում է պետության գլուխը՝ հանրապետություն, միապետություն, աստվածապետություն և այլն.
- Փիլիսոփայուփյուն, որի վրա հիմնված է պետական կարգը՝ կոմունուզմ, կապիտալիզմ ձևն:

«Պետական կարգ» և «կառավարություն» հասկացությունները նույնական չեն. հնարավոր է մեկ պետական կարգ (օր. հանրապետություն) ունեցող երկրում գործի առանձնահատուկ կառավարություն: Իսկ միատար պետություն, դաշնություն (ֆեդերացիա) և միություն (կոնֆեդերացիա) հասկացությունները վերաբերում սահմանադրական կարգին:

Պետության առավել ճշգրիտ սահմանման վերաբերյալ ակադեմիականկոնսենսուս (համաձայնություն) գոյություն չունի:

«Պետություն» տերմինը վերաբերում է քաղաքական երևույթների որոշակի տիրույթի վերաբերյալ տարբեր, բայց փոխկապակցված և հաճախ համընկնող տեսությունների խմբին: Համաձայն Ջեֆֆրիի և Փեինթերի. «Եթե մենք սահմանում

ենք պետության «էությունը» որոշակի վայրում կամ ժամանակաշրջանում, մենք պարտավոր ենք հասկանալ, որ ինչ-որ այլ երևույթ, որը մեկ այլ ժամանակի և տարածության մեջ համարվել է պետություն, ունի տարբեր «էական» բնութագրիչներ»: Սահմանման խնդիրն այն է, որ «պետությունը» և «կառավարությունը» հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ ընդհանուր զրույցներում և նույնիսկ որոշ ակադեմիական քննարկումներում: Համաձայն սահմանման այս սխեմայի՝ պետությունները միջազգային իրավունքի ոչ ֆիզիկական անդամներ են, կառավարությունները՝ մարդկանց կազմակերպություններ: Կառավարության և իր պետության միջև հարաբերությունները ներկայացուցչական և լիազոր մարմնիններից մեկն է:

Քաղաքացիական կրթություն

Կա մի հին ասույթ, թե քաղաքակրթության ընթացքը
մի միցավազք է աղետի և կրթության միջև:
Այն ժողովրդավարությունում, ինչպիսին մերն է, մենք պետք է
համոզված լինենք, որ կրթությունը կհաթի մրցավազքում:
Ջոն Քենեդի

Քաղաքացիական կրթությունն առավել ընդգրկուն, շարունակական և երկարաժամկետ գործընթաց է (այն կարող է և պետք է ընդգրկի նաև ընտրական կրթությունը) և հիմանականում կրթական ծրագրերի մեծ մաս է կազմում: Քաղաքացիական կրթությունը (անվանում են նաև քաղաքացիության մասին կրթություն) ներառում է ժողովրդավարական հասարակության հիմնաքարային գաղափարներ, ինչպես՝ քաղաքացիների համապատասխան իրավունքների ու պարտականությունների, կառավարության, քաղաքականության և հատուկ խմբերի շահերի, զանգվածային լրատվական միջոցերի, բիզնեսի ու ոչ առևտրային հատվածի մասին կրթություն, ինչպես նաև շեշտում են հերթական և մրցակցային ընտրությունների կարևորությունը:

Քաղաքացիական կրթությունը՝ կրթություն է քաղաքացիության համար, այն է՝ կրթություն, որի նպատակն է՝ օգնել մարդկանց սովորել, թե ինչպես դառնալ ակտիվ, իրազեկ և պատասխանատու քաղաքացիներ: Ավելի ստույգ, քաղաքացիական

կրթության նպատակն է պատրաստել ժողովրդավարության մեջ ապրող քաղաքացիներ, որը հիմնովին մարդու իրավունքների խնդիրն է:

Ընդհանրապես, համարվում է, որ քաղաքացիական կրթությունը ներգրավում է երեք տարրեր.

. **քաղաքացիական միտվածություն (արժեքներ)**
. **քաղաքացիական իմացություն (գիտելիք)**
. **քաղաքացիական հմտություններ:**

Քաղաքացիական միտվածությունը ենթադրում է,որ քաղաքացիները. .

- Զարգացնում են իրենց ինքնավստահությունը, որպեսզի ընդունակ ու կարող լինեն մասնակցել քաղաքացիական կյանքին
- Մասնակցում են քաղաքացիական կյանքին:
- Կենսագործում և ապահովում են այն դերերը, որոնք հարակցվում են ժողովրդավարական համակարգերում քաղաքացիության իրավունքների և պտասխանատվությունների հետ:
- Իրենց իրավունքները ու պարտականություններն իրականացնելիս բաց են, հանդուրժող պատասխանատու:

Քաղաքացիական իմացություն նշանակում է, որ քաղաքացիները.

- Հասկանում են իրենց քաղաքական և քաղաքացիական համատեքստը:
- Գիտեն իրենց սոցիալական, տնտեսական և մշակութային, ինչպես նաև քաղաքական և աղաքացիական իրավունքները:
- Հասկանում են քաղաքացիության դերերը, իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունները:

Քաղաքացիական հմտությունները ենթադրում են, որ քաղաքացիները՝

- Ձեռք են բերում բացատրելու, վերլուծելու, հաղորդակցվելու, գնահատելու, դիրքորոշումը պաշտպանելու, գործընթացն ու արդյունքները վերահսկելու ունակություն:
- Գիտելիքներն ու իմացություններն օգտագործում են քաղաքական և քաղաքացիական գործընթացներին իրազեկ մասնակցելու համար:

Քաղաքացիական կրթությունը շեշտադրում է ոչ միայն քաղաքացու իրազեկվածությունը, այլ նաև քաղաքացու մասնակցութոյունը՝ ժողովրդավարական

հասարակության գործընթացներում: Քաղաքացիական կրթությունը, որպես կանոն, բաղկացած է հետևյալ երեք բաժիններից՝ **քաղաքացիական գիտելիք, քաղաքացիական արժեքներ և քաղաքացիական հմտություններ**: Այս համալիր ծրագիրը հնարավորություն է ընձեռում ստանալ համապատասխան գիտելիքներ և հմտություններ՝ իրազեկ և գիտակից քաղաքացի լինելու համար:

Քաղաքացիական կրթությունը շարունակական գործընթաց է և այն կապված չէ ընտրական փուլի հետ:

Միաժամանակ, ընտրողների տեղեկատվությունը և ընտրական կրթությունը կարող են ավելի լայնածավալ քաղաքացիական կրթության մաս լինել: Քաղաքացիակն կրթությունը կարող է իրականացվել դպրոցական կամ համալսարանական ծրագրերի միջոցով, քաղաքացիական կառույցների, ինչպես նաև պետական կառույցների (ոչ անպայմանորեն ընտրությունների կառավարման մարմինների) կողմից:

Քաղաքացիական կրթությունը կարևոր է, որովհետև յուրաքանչյուր հասարակություն կարիք ունի, որպեսզի մարդիկ ազդու կերպով, բազմաթիվ ձևերով ներդրում ունենան համայնքի և շրջակա միջավայրի առողջության և բարեկեցության գործում՝ տեղական, պետական և համաշխարհային մակարդակներում: Ակտիվ և պատասխանատու քաղաքացիների դաստիարակությունը նպաստում է ժողովրդավարական մասնակցության առողջ և գործուն մշակույթի զարգացման գործընթացին:

Ավելին, այսպիսով ավելի հավանական է դառնում, որ մարդիկ հասկանան քաղաքականությունների ու տարբեր գործընթացների տրամաբանությունը և իրապես հետևեն դրանց, քանի որ ներգրավված են այդ որոշումների գործում:

Քաղաքացիական հասարակության կայացմամբ հումանիզացվում է կրթությունը: Իրավական պետության և քաղաքացիական հասարակության գոյության անհրաժեշտ պայման է որոշակի տիպի անհատի ձևավոևումը: Այս իմաստով հասարակության <<սոցիալական ճնշումը>> դպրոցի վրա անընդհատ աճում է, հետևաբար աճում է և նրա՝ սոցիալական և քաղաքական տարբեր խավերին կապող, կոնսոլիդացնող դերը:

<<Քաղաքացիական դաստիարակության նպատակն է անձի մեջ քաղաքացիություն դաստիարակելը>> [1., 339]

Դպրոցը ստիպված է և պետք է լինի ավելի բաց, պատրաստ վերափոխումների՝ իր գործունեության մեջ շեշտը ավելի շատ դնելովսովորողների գործունեության միջոցների յուրացման, <<սոցիալական>> հմտությունների, կարողությունների ձեռք բերման վրա:

Դպրոց /կրթություն/-հասարակական կառավարման կարգ (տվյալ դեպքում ժողովրդավարություն) - քաղաքացիական կրթություն հարաբերություններըդառնում են մեկ փակ շրջանակ, որի փոխհամաձայնեցված և արդյունավետ գործունեության ապահովման մեջ շահագրգռված են հասարակության բոլոր խավերը՝ ծնողները, մանկավարժները, ղեկավարները, գործատուները և այլն:

Քաղաքացիական կրթության դերը ժամանակակից հանրակրթության մեջ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

դպրոց	**Հասարակական կառավարման կարգ**	**Քաղաքացիական կրթություն**

- լրացնում է հասարակության մեջ ժամանակաշրջանի առանձնահատկություններով պայմանավորված արժեքային համակարգի բացերը և սերմանում է բաց հասարակության այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ հանդուրժողականությունը, անձի արժանապատվությունը, համբերատարությունը, ազատությունը, հարգանքը ութիշների նկատմամբ և այլն,
- բեկում է մտցնում հանրակրթության բովանդակության խիստ շեշտված տեխնոկրատական բնույթի մեջ, տալիս է սովորողներին քաղաքացիական և իրավական անհրաժեշտ գիտելիքներ,
- հնարավորություն է ստեղծում լայնորեն կիրառելու ուսուցման նորարարական մեթոդիկաներ, որոնք էլ իրենց հերթին հանարավորություն են տալիս զարգացնելու սովորողների հաղորդակցման ունակությունները, ինքնուրույն մտածողությունը և այլ որակներ:

Քաղաքացիական կրթությունը մեզ սովորեցնում է ճիշտ մտածել և ճիշտ գործել: .<<Նրանում արտահայտված է վարքի ամենաբարձր մոտիվացիան, որը որոշում է հասարակական պարտքով: Քաղաքացիական պարտքը խթանում է մարդու սոցիալական ակտիվությունը նրա կենսագործունեության բոլոր ոլորտներում և ամենիից առաջ իր սոցիալական հայրենքի շահերի պաշտպանության, իր քաղաքացիական պարտականությունների ազնիվ կատարման մեջ՝ աշխատանքում, հասարակական գործունեության մեջ>>[2., 177]

Մեր սեփական աշխատանքային փորձից , եկել ենք , այն եզրակացության , որ այս թեմայի ուսումնասիրման ժամանակ կարելի է դասն անցկացնել հետևյակ կերպ:

Դասի պլան.

Դասարան՝

Առարկան ---------- հասարակագիտություն

Հիմնական հարցերը, որ դասին կքննարկվեն

- Ինչ եք հասկանում պետություն ասելով:
- Ձեր կարծիքով ինչ է պետությունը:
- Որոնք են հզոր պետություն հասնելու ճանապարհները:
- Ներկայացնել քաղաքացիական հասարակությունը ր բացատրել ինչպես հասնել դրան:

Ուսումնասիրելով Հանրակրթական նոր չափորոշիչները այս թեմայի **նպատակն** է լինելու.

- Սովորողները կարողանան մեկնաբանել քաղաքացիական հասարակության նշանակությունը:
- Կարողանան գնահատել քաղաքացիական հասարակության և պետական իշխանության
- Ինստիտուտների փոխգործակցության անհրաժեշտությունը հանրային բարիքի ստեղծման համար:

Դասի խնդիրները, որ մենք կդնենքն մեր առջև կլինեն բազմազան:

Նպատակին հասնելու համար առաջակել եմ հետևյալ ուղիները

Գիտելիք

- Սովորողը կարողանա սահմանել կամ բնութագրել ինչ է պետությունը և ինչպիսի պետություններ գիտեք:
- ԿԿարողաննա ներկայացնել քաղաքացիական կրթության անհրաժեշտությունը:

Հմտություն

- Մեկնաբանեն և վերլուծեն պետության կարևորությունը հասարակության կյանքում: Մեկնաբանեն քաղաքացիական ու քաղաքական մասնակցության ՀՀ օրենսդրությամբ չարգելված ձևերն ու տեսակները ժողովրդավարության և անձիիրավունքների ու շահերրիիրացման տեսանկյունից:
- Ճանաչի և հարգի ՀՀ պետական խորհրդանիշները և ներկայացնի ու վերլուծի ավանդական տոների հիմնական բովանդակությունը:
- Ճանաչի իր հայրենիքը , ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության , աշխարհագրության , մշակույթի մասին:

Դասի ժամանակ կարևոր է նաև սողվորողի դաստիարակչությունը: Այս տեսանկյունից նրանց մոտ զարգանում են տարբեր արժեքներ և վերաբերմունք:

Արժեքներ

- Կկարողանան արտահայտել և պաշտպանել սեփական տեսակետը և դիրքորոշումը, հարգել դիմացինի իրավունքները:

Վերաբերմունք

- Կցուցաբերեն հանդուրժողականություն , ապրակեցում և մարդասիրություն:
- Այս ամենի արդյունքում սովորողների մոտ զարգանում է մտաժողությունը, երևակայությունը, հիշողությունը և ուշադրությոնը:
- Ընդլայնում է իր մտահորիզոնը:
- Կարողնում է հավասարակշռել և ներդաշնակել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, հակումները, մընդունել սեփական յուրահատկությունները:
- Պատկերացում կունենան պետության սկզբունքների, գաղափարախոսության և այլնի մասին:

- ԿԿարողանա մեկնաբանել պետության պատմական ակնարկը զարգացմանմասին:
- Կկարողանի իր վարքագծային դրսևորումների մեջ լինի դրաս կրողը: Լինի շրջահայց, հետևողական

Դասը վարելուց շատ կարևոր եմ համարում ուսումնական միջոցները (ուսումնադիտողական պարագաներ): Դրանք են դասագիրքը, լրացուցիչ նյութերը, QR կոդը, համացանցը:Կարելի է օգտագործել նար ընտրաթերթիկներ, քարտեր և այլն: դասի ժամանակ կարելի է ցուցադրել նաև նկարներ պետույունների մասին տարբեր ժամանակաշրջաններում: Ցանկալի է դիտել մուլտֆիլմեր:

Ուսումնական պրոցեսում կարելի է նաև անդրադառնալ պայմանական-գրաֆիկական միջոցին: Գրաֆիկի միջոցով ցույց տալ տարբեր երկրների զարգացումը պատմական ժամանակահատվածում:

XIX դար Անգլիայի զարգացումը

XIX դար Ֆրանսիայի զարգացումը:

Ցանկալի է ներկայացնել իրավիճակային օրինակներ,որտեղ տեսանելի է պետությունում կոռուպցիայի առկայությունը և նրա բացասական ազդեցությունն անհատ–հասարակություն–պետություն բնականոն փոխազդեցության վրա: Սովորողների հանձնարարել, որպեսզի նրանք միջոցներ գտնեն կոռուպցիայի ռիսկերը նվազեցնելու համար:

Սովորսողները կարող են համայնքային հիմնախնդիրները ուսումնասիրել քաղաքացիական հասարակության հաստատությունների և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների միջոցով: Օրինակների միջոցով հիմնավորի տեղեկատվածության կարևորությունը քաղաքացիական հասարակության ձևավորման գործում:

Կարևոր է նաև մրջառարկայական կապը: Դասը կարելի է կապել Հայոց պատմության և համաշխարհային պատմության- պատմական տեքստի նեկնության,

սկզբնաղբյուրի ուսումնասիման, ինչպես նաև հայ գրականության-համապատասխան տեքստի մեկնաբանության հետ:

Այս դասնի օգտագործում ենք դասի տարբեր տիպեր՝ դաս-դասարանային և այլն: Ուսումնական մեթոդներից և հնարներից խմբային աշխատանք:

Կարելի է դասարանով քննարել պետության տիպերը: Դասարանը բաժանում ենք երկու խմբի: Առաջին խումբը ներկայացնում է ժողովրդավարական , իսկ երկրորդ խումբը բռնապետական : Դասին օգտագործում ենք նաև գրատախտակը:

Ժողովրդավարական	Բռնապետական

Գրելով և ներկայացնելով պարտադիր սկսում ենք քննարկում: Քննարկման արդյունքում սովորողները պետք է հիմնավորեն իրենց կարծիքները:

Առաջնորդվելով մեր կողմից ներկայացված դասի պլանով ուսուցիչը հնարավորություն կունենա հասկանալու, թե որքանով են սովորողները պատկերցում կազմել թեմայի վերաբերյալ : Շատ կարևոր է, որ թեմայի ավարտին սովորողները ընդհանուր պատկերացում ունենան պետության և քաղաքացիական կրթության մասին:

Պետության թեմայի անբաժան մասն է կազմում <<Քաղաքացիական հասարակությունը և կրթությունը>> և սահուն կերպով անցնում ենք այս թեմային, ներկայացնում և լսում կարծիքներ:

Քաղաքացիական կրթության զարգացման արդի միտումները

Ժամանակակից կրթության բովանդակության մեջ ավելի ու ավելի շատ են տեղ գտնում բարդ սոցիալ-բարոյական հիմնախնդիրները, արժեքային համակարգերի բախումները, հակասական, վիճելի հարցերը, դրանց լուծման համար հավասարակշռված, պատասխանատու որոշումներ ընդունելու ուված միջոցների ուսուցմանը:

Խորհրդային շրջանում և մինչև վերջերս մեզանում հանրակրթության բովանդակութայն մեջ սոցիալ-բարոյական, տնտեսական և քաղաքական հիմնախնդիրները չէին արտացոլվում: Եվ դա հասկանալի էր:

Հասարակուայն մեջ տիրո միասնական գաղափարախոսության պայմաններում ոչ միանշանակ, հասկասական հիմնախնդիրներ չպետք էքննարկվեին: Գոյություն ունեին միայն որոշակի ընդունված դրույթներ, որոնք ենթակա չէին քննարկման:

Այսօր պատկերն այլ է: Ժամակակակից ժողովրդավարական գործընթացները անդրադարձել են նաև կրթության բովանդակության վրա:

Հատկապես հասարակագիտական առարկաների բովանդակության մեջ հաստատուն տեղ են գրավում ոչ միանշանակ, բարդ սոցիալ-բարոյական հարցերը՝ ոչ միայն դառնալ ով այդ առարկաների բովանդակության օրգանական և անբաժան մասը, այլ նաև իրենց անմիջական ազդեցությունն ունենալով դասավանդման մեթոդների և ձևի վրա:

Հանրակրթության զարգացման ներկա փուլում քաղաքացիական կրթության նպատակը ոչ միայն արդիական գիտելիքների հաղորդում է, ակտիվ, որոշումներ ընդունելու, հաղորդակցվելու ունակ քաղաքացու ձևավորումը, այլև սովորողների կողմից բաց հասարակության այնպիսի հիմնարար արժեքների յուրացումը, ինչպիսք են՝ հանդուրժողականությունը, ազատությունը, արդարությունը, հարգանքը ուրիշների նկատմամբ և այլն:

Համակեցության կանոնները, մարդու իրավունքները և պետության կոմիցսահմանված իրավական նորմերը ամենավառ կերպով բացահայտում են իրենց դերն եւ նշանակությունը հատկապես հասարակական գործընթացներում դրսևորվող պրոբլեմային իրավիճակներում: Դպրոց մուտք գործած <<Իրավունք>> առարկայաշարը լայն հնարավորություններ է ընձեռնում ոչ միայն տարբեր բովանդակության քննարկումներ և բանավեճեր անցկացնելու, այլև դրանք կազմակերպելու համար: Բարդ հակասական հասարակական խնդիրների քննարկումը քաղաքացիական կրթության հիմնական հնարներից է:

Քաղաքացիական կրթությունը մարդկանց սովորեցնում է քաղաքացիական գրագիտություն:

Ի՞նչ է քաղաքացիական գրագիտությունը:

Փորձենք պարզաբանել, թե ինչպես է մեկնաբանվում <<քաղաքացիական գրագիտություն>> հասկացությունը:

Մասնագետները սահմանում են քաղաքացիական գրագիտությունը որպես ընդունակությունների ամբողջություն, որն ընդգրկում է ոչ միայն տարրական գրագիտությունը (բանավոր և գրավոր), այլև ժողովրդավարական ընկերակցությունում մասնակցություն ունենալու, քննադատաբար մտածելու, բազմակարծության պայմաններում մտածված գործելու, լսելու և այդպիսով ուրիշներին օգնելու ընդունակությունները:

Քաղաքացիական գրագիտությունը զարգացնող ուսումնական դասընթացները պետք է բացահայտեն ժողովրդավարական հասարակության մեջ քաղաքացիականության բարոյական բովանդակությանը, քաղաքացիական պարտքի պատմական, սոցիալական, մշակութային հիմնավորումը, քաղաքացու և պետության միջև բարոյական հարաբերությունների փոխպարտավորեցնող բնույթը, նպաստեն քաղաքացիական առաքինությունների արմատավորմանը:

Սովորողները պետք է կարողանան նաև բացատրել սեփական կյանքի արժեքային բովանդակությունը և իրենց երկրում քաղաքացիական հասարակության զարգացման համապատասխան պայմանները անցյալում, ներկայում և ապագայում:

Քաղաքացիական գրագիտութայն ձևավորումը դիտվում է որպես զարգացման նորարարական եղանակ, որի ընթացքում իրականցվող բազմաթիվ խնդիրներից առանձնացնենք հետևյալները.

- ուսուցման մեջ համագործակցության և ուսումանական աշխատանքում գործընկերության ապահովումը,
- սկզբունքները և ընդհանրացումները նոր հիմնախնդիրների լուծման ժամանակ գործնականում կիրառելու և անկախ մտածելու ընդունակությունների զարգացումը,
- վերլուծական այնպիսի կարողությունների զարգացումը, ինչպիսիք են վարկածների և եզրակացությունների գնահատումը, փաստի և կարծիքի տարբերումը, քննադատական հարցերի ձևակերպումը,
- քննադատության և ինքնառեֆլեքսային կարողությունների զարգացումը,

- սովորողների մասնակցության ապահովումը նշանակալի իրական նախագծերի պատրաստմանը ինչը կարող է նպաստել նրանց շահագրգռվածության և պատասխանատվության բարձրացմանը:

Քաղաքացիական գրագիտութայն դաստիարակումը իրականացվում է դասարանում այն պայմաններում, երբ ռեֆլեքսային օգնությամբ կատարվող ուսուցման շնորհիվ ծնվում է փոխգործողություն: Այս դասընթացներում տրվող գործնական առաջադրանքները կարող են կապող օղակ հանդիսանալ անհատի և այլ մարդկանց միջև, դասավանդման և սեփական ուսուցման միջև, ինչը շատ կարևոր է բարոյական ինքնազարգացման համար:

Վերջին ծամանակներս քաղաքացիական կրթության հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների մեջ մեծ ժողովրդականությունէ վայելում սովորողների,այլ կերպ անվանում են նաև <<սոցիալական նախաձեռնության>> զարգացման մոտեցումը, որն այլ կերպ անվանում են նաև <<սոցիալական նախագծում>>:

Այն ենթադրում է սովորողների ընդգրկում հասարակական հանրօգուտ, կարևոր աշխատանքի մեջ և համայնքի կամ դպրոցի կյանքում նշանակալից իրադարձություններին ու միջոցառումներին նրանց մասնակցության ապահովում:

Մինչդեռ ժամանակակից քաղաքացիական և իրավական կրթության երկակիությունը, կարելի է ասել նաև՝ բարդությունը, պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք իրոք ներառում են ինդոկտրինացիայի որոշակի տարրեր:

Անասկած, քաղաքացիական կրթության լայնածավալ արշավը ժամանակակից հանրակրթական բավանդակության հիմնախնադիրներից մեկն է:

Կարելի է կազմել հարցերի ցանկ՝ դասը ամփոփելու համար:

1. Բացատրե՛ք՝ ինչո՞ւ է անհրաժշտ պետությունը:
2. Բացատրե՛ք՝ ինչպե՞ս երկրում հաստատել ժողովրդավարություն:
3. Ի՞նչն է իրավահավասարության իմաստը:
4. Ինչո՞ւ տեղի կունենա պետության բացակայության ժամանակ:
5. Ո՞րն է խնդրի լուծումը քաղաքացիական կրթությունը :
6. Ի՞նչ կլինի, եթե մարդիկ չլինեն իրավասհավասար:
7. Ուրիշ ի՞նչ տեսանկյունից կարելի է նայել պետությանը :
8. Ի՞նչ կպատահի, եթե պետությունը վերանա :

9. Որո՞նք են պետության սկզբունքները :

Անհրաժեշտությունից ելնելով կատարել պատճառաբանված գնահատում: Գնահատումը իրականացնում ենք նիշային և խրախուսական:

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ իմացա
Ի՞նչպես կարող եմ օգտվել	Ի՞նչ եզրակացություն արեցի

Կարևոր խնդիր է օգտվել նաև ՏՀՏ-ներից, նախօրոք պատրաստված տեսասահիկից: Դասը կարելի է վարել տարբեր մեթոդներով ելնելով նաև դասարանի միջին խտությունից: Վերջում սովորողները ներկայացնում են տնային աշխատքները, քննարկում և հետադարձ կապի միջոցով բացատրում: Կարևոր է նաև հենակետային գիտելիքներին արդիականացումը:

Օրինակ՝

Սովորողները գիտեն ինչ է պետությունը, հարցերի միջոցով պարզում ենք.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ → Մ.Թ.Ա I դար
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ → Մ.Թ. I դար

Հարց ու պատասխանի միջոցով կարելի է պետկեր ունենել ինչպես են յուրացրել նյութը: Ամբողջ դասը անցնելուց հետ սովորողների հետ կատարում ենք ընդհանրացում, համեմատում և ըմբռնում:

Կարևոր է որ սովորսողը հասկանի, ինչի համար է անցնում տվյալ նյութը, ինչի է կարևոր և ում է պետք մեր իմացածը: Նոր նյութի յուրացման համար կարելի է կատարել վարժություններ լրացնել խաչբառ և այլն: Կարևոր է նաև, որ սովորողները կարողանան նյութը վերարտադրեն իրենց բառերուվ և ստացած գիտելիքները կիրառեն ծանոթ իրավիճակում:

Դասի ընթացքում ուսուցիչը քայլում է դասարանով և ստուգում աշխատանքները և կատարում գնահատում: Ցանկալի է, որ գնահատականը լինի ավելի օբյեկտիվ և որ նիշային:

Թեմայի համար հենակետային խնդիր է լինելու նաև աշակերտները որքան հնարավոր է բացատրել քաղաքացիության, իրավունքի ու պարտականության էությունը և պետության նշանակությունը սոցիալական արդար և ներդաշնակ համակեցության ապահովման գործում:

Այս թեման ավարտելուց հետո, վերջնարդյունքում սավորողները պետք է .

- Բացատրել քաղաքացիական հասարակության նշանակությունը պետական իշխանության գործունեության վերահսկողության մեջ:
- Բացատրել պետական իշխանության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների փոխազդեցությունը հանրային բարիքի ստեղծման գործում:
- Հասկանալ և բացատելի հասարակական կազմակերպությունների, շարժումների, միությունների, ՀԼՄ–ների և այլ կազմակերպությունների տեղն ու դերը շահերի պաշտպանության, բազմազանության և բազմակարծության ապահովման առումով:
- Մեկնաբանել կոռուպցիայի առաջացման պատճառները և բացասական ազդեցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա:

Առաջնորդվելով այս պլանով ուսուցիչը հնարավորություն կունենա հասկանալու թե որքանով են սովորողները յուրացրել դասը: Արդյոք հասկացել են քաղաքացիական կրթության նշանակությունը պետության համար : Ապագայում արդյոք նրանք կկարողանա կիրառել իրենց անցածը կյանքում:

Սովորողներն էլ իրենց հերթին իրենց պարտավորված կզգան հարգել իրենց երկրի պետական խորհրդանիշները, հարգանք կունենա դեպի սեփական երկիր:

Այսպիսով, ընդհանրացնելով նյութը, և այս նյութի ուսումնասիրման արդյունքում աշակերտները կարողանում են հասկանալ պետության անկախության և հզորության կարևորությունը, ինչպես նաև , որ ցանկացած պետություն կլինի հզոր եթե այն ժողովրդավար է, եթե այնտեղ օրենքը վեր է բոլորից:

Ինչպիսին մարդն է , այնպիսին էլ հասարակությունն է,
ինչպիսին հասարակութունն է, այնպիսին էլ պետությունն է,
ինչպիսին պետությունն է, այնպիսին էլ մարդու և
մարդկության ապագան է, իսկ ինչպիսին կլինի մարդը՝
կախված է նրանից, թե ինչ է կատարվում նրա հետ այսօր:

Եզրակացություն

Հաշվի առնելով վերոգրյալը կարող ենք եզրակացնել, որ պետություն և պետականություն հասկացությունների նորովի մեկնաբանումը հնարավորություն է ընձեռնում ուսուցչին և սովորողներին գնահատելու ելակետային գիտելիքները պետության և քաղաքացիական հասարակության վերաբերյալ ու կանխատեսել վերջնարդյունքները դասի վերաբերյալ: :

Արդյունավետ օգտագործելով մեր կողմից ներկայացված դասի պլանը ուսուցիչը հնարավորություն կունենա ապահովել ուսուցման գործընթացի ավելի բարձր արդյունավետությունը:

Հանարավորություն է ընձեռնում ուսուցչին գնահատելու ելակետային գիտելիքները <<Պետություն և քաղաքացիական հասարակություն>> թեմայի վերաբերյալ արտահայտելու սեփական կարծիքը:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Ա.Ս. Սահակյան, Մանկավարժություն, «ՄԱՆԿԱՎԱՐԺ 2005» հրատարակչություն, 456 էջ, է:
2. Բաբանցկի Յու.,Երևան«Լույս» 1986, 344, հատոր 1.,236 էջ:
3. Հակոբյան Ս.Մ., Փիլիսոփայության տեսություն և պատմություն, «Երևան, հեղինակային հրատարակչություն» - 2007, 496էջ, էջ:
4. Ղույումչյան Գ.Ե, Մանկավարժություն, գիրք 2, Երևան «Զանգակ-97» 2005, 230Էջ:
5. Պատմություն, հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագրեր, Երևան «Տիգրան Մեծ» 2009, 200էջ:
6. https://escs.am/am/news/6704?fbclid=IwAR3WsoGDshUTI8LYSNvrGsWeM16GfJJUti_I3C9KG17GWDqz3QXEGA6Zr9w
7. https://hy.wikipedia.org/wiki/%D5%8A%D5%A5%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6համացանցից օրը 28.08.2022թ. :

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

Հասարակագիտություն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Պատերազմ և քաղաքականություն

Ղեկավար՝ Ռուդիկ Վարդանյան

Ուսուցիչ՝ Աննա Հովսեփյան

Բովանդակություն

1. Ներածություն.....3

2.Պատերազմների հասկացությունը, դասակարգումը.....5

3.Պատերազմը և քաղաքականությունը.....10

4.Պատերազմի միջազգային իրավական կարգավորումը.....17

5.Եզրակացություն.....19

6.Գրականության ցանկ.....20

Ներածություն

Մարդկությունը պատերազմել է միշտ։ Ըստ պատմաբանների մոտավոր հաշվարկների՝ Երկրի վրա մարդկանց գոյության ողջ ընթացքում տեղի է ունեցել ավելի քան 15000 պատերազմ, որոնց արդյունքում զոհվել է մինչև 3,5 միլիարդ մարդ։ Գիտնականները հաշվարկել են, որ վերջին 5,5 հազար տարվա ընթացքում մարդիկ խաղաղ պայմաններում ապրել են ընդամենը 300 տարի։

Հասարակությունը զարգանում է և հանդես է գալիս պատերազմի ավելի ու ավելի բարդ մեթոդներով: Ռազմական արդյունաբերությունն ավելի արագ է զարգանում, քան արդյունաբերության ցանկացածբայլ ճյուղ ։ Քարե մահակից ու աղեղից մինչև ատոմային, քիմիական, կենսաբանական զենք. Այս ամենն ուղղված է սեփական տեսակի զանգվածային ոչնչացմանը։

Պատերազմների հիմքում ընկած օբյեկտիվ պատճառները կախված չեն մարդու կամքից, բայց դրանք գործում են ոչ թե ինքնուրույն, այլ վերջինիս գործունեությամբ։ Մարդիկ պատրաստվում են, սանձազերծում և մղում պատերազմներ։ «Պատերազմել, թե՞ չպատերազմել» ընտրությունը կատարում են իշխանության սուբյեկտները։ Այս հարցի վերաբերյալ որոշումներն արտացոլում են ինչպես օբյեկտիվ հանգամանքները, այնպես էլ սուբյեկտների տրամադրությունը։

20-րդ և 21-րդ դարերի բազմաթիվ հակամարտություններ ուղղակիորեն հետևանք են պետությունների բարձրագույն ուժային օղակների, հավակնոտ և ագրեսիվ քաղաքական գործիչների ոչ ադեկվատ, հաճախ լիովին իռացիոնալ և նույնիսկ հանցավոր որոշումների: Այդ թվում՝ Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները։

Թեմայի արդիականությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով, նախ՝ ցանկացած պատերազմ ռազմաքաղաքական հակամարտություն է, որն առավել ամբողջական և վառ արտացոլում է քաղաքական մակարդակում հասարակության մեջ առկա սոցիալական հակասությունները և կառավարման խնդիրները։ Երկրորդ՝ մենք ապրում ենք անհանգիստ ժամանակներում. Հենց այսօր էլ աշխարհում տեղի են ունենում մի շարք զինված հակամարտություններ։

Բացի այդ, զանգվածային ոչնչացման զենքերի ի հայտ գալու պատճառով բռնության խնդիրը մեր ժամանակներում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել, քանի

որ այն սպառնում է համաշխարհային աղետի արտաքին և ներքին քաղաքականության մեջ։

Ուսումնասիրության նպատակը՝ ուսումնասիրել պատերազմը որպես քաղաքականության շարունակություն այլ միջոցներով։ Նպատակին համապատասխան՝ կլուծենք հետևյալ խնդիրները.

1. սահմանել պատերազմը, դիտարկել պատերազմների էության վերաբերյալ հիմնական տեսակետները.

2. դիտարկել պատերազմների առաջացման դասակարգումները և տեսությունները.

3. սահմանել բռնությունը՝ որպես կոնֆլիկտի լուծման միջոց.

4. ուսումնասիրել պատերազմական գործողությունների հետ առնչվող միջազգային իրավունքի նորմերը։

Պատերազմների հասկացությունը, դասակարգումը

ՊԱՏԵՐԱԶՄ...Սա թերևս, ամենասարսափելի երևույթն է մարդկության պատմության մեջ: Պատերազմը բերում է մահ, արյուն, տառապանք,կործանում: Այն դարձել է մարդկային քաղաքակրթության մշտական ուղեկիցը: Ցավոք սրտի,չնայած ամբողջ կործանարար ուժին, պատերազմներն ու ռազմական հակամարտությունները հաստատակամորեն մուտք են գործել մարդկության պատմության մեջ: Պատերազմը քաղաքական-հասարակական միավորումների միջև հակամարտություն է, որն արտահայտվում է հակամարտող կողմերի ռազմական ուժերի միջև ռազմական գործողությունների տեսքով: Որպես կանոն, պատերազմը հետապնդում է հակառակորդին սեփական կամքի պարտադրման նպատակ: Այս իմաստով պատերազմը կազմակերպված զինված բռնություն է, որի խնդիրը քաղաքական նպատակների հասնելն է: Պատերազմը հակառակ կողմին սեփական կամքը թելադրելն է: Քաղաքականության մի սուբյեկտը ուժի գործադրմամբ ազդում է մյուսի վարքի վրա, ստիպում նրան հրաժարվել ազատությունից, գաղափարներից, սեփականության իրավունքից, հանձնել ռեսուրսներ, տարածք և այլն:

Ժամանակակից պատերազմների հիմնական բնութագրիչներն են.

1. Պատերազմները կոալիցիոն բնույթ ունեն: երբեմն դա անգամ պաշտոնական դաշնակցային ձևով չի արտահայտվում, սակայն գլոբալ աշխարհում շահերը գլոբալ են, և ցանկացած կոնֆլիկտի ներգրավվում են տարբեր ռազմաքաղաքական ու տնտեսական սուբյեկտներ:
2. Պատերազմների հարթությունները ընդգրկում են ցամաքը, օդը, ջուրը, տիեզերքը, վիրտուալ աշխարհը, որի հետ անքակտելի է նաև մարդու ներաշխարհը:
3. Պատերազմի տարածքը լիարժեք է բոլոր կենսատարածքներում,չկա թիկունք, ապահով և անվտանգ տեղ:
4. Պատերազմի մասնակից են գրեթե բոլորը. Չկա զուտ ԶՈՒ-ի ներգրավվածություն, գրեթե բոլոր գերատեսչությունները, ծառայությունները ունեն կոնկրետ գործառույթներ:
5. Բոլոր գործառույթների ժամանակը կրճատվել է, պատերազմը դարձել է գերարագ պրոցես, մարտական գործողությունները զարգանում են շատ դինամիկ:
6. Պատերազմական կանոնները ճկուն են, դասական և ոչ դասական կանոնները

խառնվել են իրար, ասիմետրիկ, ոչ համաչափ, հիբրիդային լուծումները լայնորեն կիրառվում են գրեթե զուգահեռ, իսկ միմյանց փոխարինում են շատ ճկուն։

7. Խոցման, ավերման, ճնշման համար գործում են ինչպես ուժային, այնպես էլ փափուկ միջոցներ։ Լայնորեն կիրառվում է համոզման մեթոդը։

8. Օպերատիվ արվեստի սահմանները դարձել են անհստակ։ Ավելի ու ավելի հաճախ մարտավարական միջոցներն ու ուժերը լուծում են օպերատիվ, երբեմն նաև ռազմավարական խնդիրներ։

9. Խոցման, ճնշման, քայքայման, ավերման պրոցեսները դարձել են արագ և իրականացվում են մեծ խտությամբ, տարափի ներքո, երբեմն սահմանափակ տեսակի միջոցներով ու ուժերով։

10. Մարտավարական ուժերն ու միջոցները դարձել են լիովին ինքնաբավ և արագաշարժ, դրանք ունեն ունիվերսալ դեր ու կառուցվածք [5]։

Պատերազմներն ըստ իրենց պատճառների կամ նպատակների

Տնտեսական պատերազմներ. տարածքի տնտեսական վերահսկողություն, առևտրային ուղիներ, հումքի արդյունահանում, ջրի վերահսկողություն։

Քաղաքական պատերազմներ. անկախության պատերազմներ, գաղութային ընդլայնման պատերազմներ, ապստամբության պատերազմներ, անջատման պատերազմներ և այլն։

Բ*արոյական կամ գաղափարական պատերազմներ.* սուրբ պատերազմներ, ցեղային պատերազմներ (էթնիկական զտումներ),պատերազմներ, որոնք ոգեշնչված են ազգային արժանապատվությունից, պատվից և այլն։

Իրավական պատերազմներ. վեճեր, որոնք բխում են պայմանագրերի և դաշինքների խախտումից, կամ դրանց կիրառման մեջ չարաշահումներից։

Պատերազմների դասակարգումը

Պատերազմների առաջացման հիմնական պատճառը քաղաքական ուժերի ձգտումն է օգտագործել զինված ուժերը ներքին և արտաքին քաղաքական նպատակներին հասնելու համար։

Ըստ իրենց մասշտաբի տարբերվում են *համաշխարհային* և *տարածաշրջանային* պատերազմներ։

20-րդ դարի սկզբին՝ 1914 թ-ին սկսվեց Առաջին աշխարհամարտը, պատերազմ, որն իր ընդգրկումով իսկապես համաշխարհային էր, իսկ զոհերի թվով՝ աննախադեպ։

Ընդամենը երկու տասնամյակ հետո՝ 1939 թ-ին սկսվեց երբևէ տեղի ունեցած ամենածանր, դաժան ու արյունալի պատերազմը՝ Երկրորդ համաշխարհայինը։

Պատերազմները դասակարգվում են նաև որպես «արդարացի» և «անարդար»։
Արդարացի պատերազմներ են ազատագրական պատերազմները՝ անհատական կամ կոալիցիոն պատերազմները, որոնք համապատասխանում են ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածին կամ ազգային ազատագրական պատերզմները՝ ուղղված ինքնորոշման իրավունքի իրականացման սահմանափակման դեմ։
Անարդար՝ նվաճողական կամ անօրինական ագրեսիա։ Միջազգային իրավունքով բռնությունը որակվում է որպես միջազգային հանցագործություն։
Ըստ բնույթի պատերազմները բաժանվում են երկու տեսակի՝ ջախջախման և հյուծման։
Առաջինի դեպքում ուժային համակարգերը գործում են ավելի արագ և պրոֆեսիոնալ, ավելի քիչ կորուստներով հասնում են իրենց նպատակին, թշնամուն պատճառելով ավելի քիչ վնաս։
Երկրորդ տարբերակը ավելի երկար է տևում և դիմացինին պատճառում է ավելի շատ կորուստ [5] ։

Պատերազմի սկզբունքները

Պատերազմի սկզբունքները հաղթանակի հասնելու համար զինված ուժերն օգտագործելու վերաբերյալ պատրաստի դեղատոմսեր և մեթոդական հրահանգներ չեն։ Լինելով պատերազմի տեսության բուն էությունը՝ պատերազմի սկզբունքներն, այնուամենայնիվ, շատ ավելին են, քան պարզապես տեսություն, և կատարում են կամրջի դեր տեսության և նրա կիրառման միջև։ Պատերազմի սկզբունքները ռազմական, ստրատեգիական մշակույթի կարևոր բաղադրիչն են և շատ բանով ոռշում են այն, թե ինչպես է երկիրը նայում աշխարհին, իր թշնամիներին և հենց ինքն իրեն՝ ըստ այդմ դառնալով ռազմական ոլորտում ընդունվող որոշումների մեծամասնության հենքը։ Ռազմական վերնախավի միջոցով պատերազմի սկզբունքներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են հարցերի լայն շրջանակի վրա, որոնք ուղղակիորեն չեն առնչվում մարտական գործողություններին՝ ներառյալ զինված ուժերի, ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը, զինամթերքի գնումը, զինվորական ուսուցման համակարգը և այլն։
Սուն Ցզիի պատերազմի սկզբունքները. «Տրակտատ ռազմարվեստի մասին» հայտնի աշխատությունում Սուն Ցզին պնդում է, որ «Պատերազմը պետության համար մեծ

գործ է, դա կյանքի և մահու հիմքն է, գոյության և կործանման ուղին»։ Սուն Ցզին խորհուրդ է տալիս պահել միայն այն գեներալներին, ովքեր հետևում են իր ռազմավարությանը, և հավատում էր, որ ի վիճակի է կանխատեսել հաղթողին և պարտվողին՝ ելնելով նրանից, թե ով է հետևում իր պատգամներին։
Մաքիավելիի պատերազմի սկզբունքները. «Պատերազմի արվեստը » աշխատությունում Մաքիավելին գրում է այն մասին, որ գոյություն ունեն ժամանակի մեջ անփոփոխ որոշակի հիմնարար սկզբունքներ, որոնք կարելի է հայտնաբերել պատերազմի մասին բոլոր տրակտատներում։ Նա սահմանում է մի շարք կանոններ, որոնք պետք է օգնեն հրամանատարին պատերազմ մղելիս։ Պատերազմի այսօր ընդունելի շատ սկզբունքներ տեղ են գտել նրա աշխատանքում. « Չկա ավելի կարևոր բան պատերազմի շամանակ, քան իմանալ, թե ինչպես լավագույն ձևով ձևով օգտագործել նպաստավոր հնարավորությունը, երբ այն պատահում է»։
Կլաուզևիցի պատերազմի սկզբունքները. Որոշ հետազոտողներ ժամանակակից պատերազմի սկզբունքները կապում են Կլաուզևիցի անվան հետ։ Նրա «Պատերազմի վարման ամենակարևոր սկզբունքները » հուշագիրը պարունակում է ընդհանուր, հարձակողական և պաշտպանողական սկզբունքների ցուցակը, և չնայած հենց Կլաուզևիցի արած վերապահումներին՝ դրանում, ինչպես նաև նրա հիմնական՝«պատերազմի մասին » աշխատությունում դժվար չէ հայտնաբերել ժամանակակից պատերազմ սկզբունքները [3] ։

Պատերազմը և քաղաքականությունը

Պատերազմ եւ քաղաքականություն. մարդկության հասարակական գիտակցության մեջ արմատավորված երկու հասկացություն, որոնցից մեկը՝ պատերազմը, մյուսի՝ քաղաքականության ուժային դրսեւորումն է, դրանով իսկ՝ վերջինիս տարատեսակներից մեկը։ Ուստի, յուրաքանչյուր պատերազմ ծագում է այն դեպքում, երբ քաղաքականությունն իր բազմաթիվ այլ հնարավորություններով չի կարողանում տրամաբանական լուծում գտնել առաջադրված խնդիրներին։ Քաղաքականության դրսեւորումներից ընդամենը մեկը լինելով՝ կրկնողական շահարկման դեպքում պատերազմը կարող է ձեռք բերել թելադրող բնույթ եւ գերակայել քաղաքականության նկատմամբ։ Ծնվելով քաղաքականության պահանջներից՝ ժամանակի ընթացքում այն ի վիճակի է դառնալ ինքնուրույն ազդեցիկ գործոն, եւ քաղաքականությունը

ստիպված է լինում ծառայել իրենից իսկ սերված երեւույթին: Այս դեպքում պատերազմը դառնում է ինքնանպատակ եւ ինքնավերարտադրող մի գործողություն, մինչեւ որ վերջնականապես չի սպառում իր կարողությունները, նորից զիջելով առաջնությունը քաղաքականությանը:

Պատմական փորձն ուսուցանում է, որ բոլոր պատերազմներն ի վերջո ավարտվում են քաղաքական որոշումներով, եւ շատ հաճախ քաղաքականությունը կարող է արմատական փոփոխություններ կատարել պատերազմի արդյունքներով, մանավանդ, եթե այդ պատերազմում անմիջական կամ կողմնակի մասնակցություն ունեն երրորդ ուժեր, որոնց քաղաքական եւ ռազմական կարողությունները գերազանցում են պատերազմն իրականացնող կողմերի համապատասխան հնարավորությունները [4] :

Պատմականորեն ձևավորվելով որպես պետության անհրաժեշտ օրգան՝զինուժը միշտ գործիք է եղել ու շարունակում է մնալ իշխաղների ձեռքին ոչ միայն իշխանությունը ներքին և արտաքին բռնություններից, հարձակումներից պաշտպանելու համար, այլև ուժի դիրքերից իրականացնելու տվյալ տվյալ քաղաքական համակարգի կողմից մշակված քաղաքականությունը: Ուժային պարտադրող քաղաքականություն զինուժն իրականացնում է բազմազգ պետության ներսում, երբ ազգերի, էթնոսների, հանրույթների անկախական ձգտումները չեն հովանավորվում իշխանությունների կողմից [1] ։

Բոլոր ժամանակաշրջանների պատերազմներն իրենց ակնհայտ տարբերություններով հանդեձ, ունեն մի որոշակի տրամաբանական կաղապար, որի մեջ կարող են տեղավորվել փոքր ու մեծ պատերազմները՝ թույլատրելի սահմանի շեղումներով: Եթե այդ կաղապարը ներկայացնենք հիմնական սկզբունքների տեսքով՝ ապա կունենանք հետեւյալ պատկերը.

ա. Ցանկացած երկարաժամկետ պատերազմ կործանարար է, անկախ վերջնական արդյունքներից: Եթե նույնիսկ դա չի արտահայտվում անմիջապես պատերազմից հետո, դրա հետեւանքները դրսեւորվում են հաջորդող ժամանակաշրջանում տարաբնույթ հասարակական-քաղաքական համաղետների ձեւով: Դա առանձնապես հատկանշական է մարդկային, տնտեսական եւ սպառազինության սահմանափակ կարողություններ ունեցող երկրների համար, թեեւ, իրադարձությունների

տրամաբանությունն ըմբռնելով, ներկայիս մեծ տերությունները եւս գերադասում են զիջումներն ու խնդիրների լուծման քաղաքական ուղիների որոնումները՝ երկարատեւ պատերազմներին: Այսօր, համաշխարհային տերությունների կողմից ձեռնարկվող ռազմական գործողությունների արդյունավետության գլխավոր չափանիշը պատերազմի կարճատեւությունն է: Եթե պատերազմի ժամկետն անցնում է կարելիի սահմանը, ապա անկախ արդյունքներից՝ դա դիտվում է իբրեւ տապալված գործողություն եւ, սովորաբար, ենթակա է կասեցման: Սահմանափակ հնարավորություններով երկրների համար պատերազմների տեւողականությունը կենսական նշանակության խնդիր է եւ կարող է ավելի վճռորոշ լինել, քան բուն պատերազմի արդյունքները:

բ. Պատերազմի ռազմական արդյունքները որոշիչ նշանակություն չունեն, եթե դրանք քաղաքական ատյաններում պաշտպանված չեն: Բոլոր ժամանակներում, իսկ մեր օրերում՝ առավել եւս, պատերազմների վերջնական արդյունքները որոշվում են մեծ քաղաքականության շրջանակներում: Ինչպես եւ նախկինում, սոսկ ուժային միջոցներով խնդիրների լուծումը գերիզոր տերությունների մենաշնորհն է, թեեւ երբեմն նրանք եւս ստիպված են հաշվի նստել քաղաքական իրողությունների հետ: Տարածքային եւ սահմանային որեւէ բնույթի փոփոխություն հնարավոր չէ, եթե այն չի պաշտպանվում մեծ քաղաքականության համապատասխան շրջանակների կողմից: Այսօր աշխարհում գոյություն ունեն քաղաքական եւ տնտեսական մշակված մեխանիզմներ, որոնց գործադրումով կարելի է ծնկի բերել անհնազանդ երկրորդական երկրներին: Քաղաքականապես անպաշտպան երկրների դիմակայությունը մեծ քաղաքականության շրջաններում ընդունված որոշումներին կարող է լոկ որոշ ժամանակով հետաձգել հանգուցալուծումը, բայց էական փոփոխությունների չի հանգեցնում: Պատերազմական իրավիճակի ժամանակային երկարաձգումը եւ նրա հուսահատական, դրանով իսկ արյունալի դրսեւորումները սկզբունքորեն չեն հակասում մեծ քաղաքականության շահերին: Ընդհակառակն, նման պատերազմներից երկրներն ու նրանց ժողովուրդները դուրս են գալիս բազմակողմանիորեն խիստ հյուծված վիճակում, ինչը հնարավորություն է տալիս ամենածայրահեղ թելադրանքը կիրառել նրանց նկատմամբ:

Մեծ քաղաքականության ժամանակակից միտումն ուղղված է հնարավորին չափ «զսպաշապիկի» մեջ ներգրավելուն, ուր նրանց ազգային, հասարակական եւ քաղաքական նկրտումները իրականացվում են սահմանված կանոնակարգի շրջանակներում: Չնախատեսված խախտումները հասցվում են նվազագույնի՝ կիրառելով ներքին եւ արտաքին ազդեցության անհրաժեշտ լծակները: Աննշան բացառություն են կազմում այն երկրները, որոնք կարողանում են իրենց նկրտումները բարձրացնել համամարդկային խնդիրների մակարդակի, նրանց հանգուցալուծումը միահյուսել մեծ քաղաքականության շահերի հետ, եւ դրանով իսկ համապատասխան աջակցություն ստանալ հզոր տերություններից: Ուստի պատմության տրամաբանությունը բացառում է լոկալ պատերազմներում ռազմական հաղթանակների քաղաքական վավերացումը առանց մեծ քաղաքականության համապատասխան շահագրգռվածության եւ հուշում է, որ դրանք խնդիրների հանգուցալուծման համար սպառիչ գործոն լինել չեն կարող:

գ. Պատերազմում հաղթում է այն կողմը, որը ճանաչում է քաղաքականության առաջնայնությունը եւ պատերազմը ենթարկում է նրա պահանջներին: Վերեւում արդեն նշեցինք, որ պատերազմն ընդամենը մեկն է քաղաքականության տարատեսակներից եւ, ըստ այդմ, բնական է ճանաչել քաղաքականության առաջնայնությունը: Բնական այս իրավիճակի ընկալման եւ գործնական կիրառման աստիճանից է կախված նաեւ պատերազմների հանգուցալուծումը հօգուտ այս կամ այն կողմի: Պատերազմի եւ քաղաքականության տրամաբանությունները ոչ միշտ են համընկնում, եւ միայն տվյալ երկրի քաղաքական ընտրախավի կարողություններն են, որ հնարավորություն են տալիս լավագույն ձեւով համադրել այս երկուսը միմյանց հետ: Այնուամենայնիվ, խիստ սկզբունքային խնդիր է՝ թույլ չտալ պատերազմի եւ նրա հետ կապված շահագրգիռ պետական կառավարման օղակների եւ ոչ պետական մարմինների գերակայության հաստատումը քաղաքականության նկատմամբ: Փորձը ցույց է տալիս, որ արհեստականորեն հասնել այս նպատակին հնարավոր չէ: Եթե պատերազմող երկրի քաղաքականությունը թույլ է, ապա այն վաղ թե ուշ կորցնում է վերահսկողությունը պատերազմի նկատմամբ: Պատերազմի ընթացքը իրեն ենթարկելու թույլ քաղաքականության փորձերը դատապարտված են անհաջողության եւ լավագույն դեպքում կարող են արտահայտվել անձնատուր

լինելու բռնի պրոցեսով, եթե դրա համար կան բավարար ուժեր եւ ազդեցության լծակներ: Սահմանափակ հնարավորություններով պատերազմող երկրների համար ուժեղ քաղաքականությունը կենսական նշանակություն ունի, եւ եթե որոշակի ռազմական թուլությունը կարող է արդյունավետորեն փոխհատուցվել ուժեղ քաղաքականության առկայությամբ, ապա հակառակն ակնկալելու հույսերը խիստ նվազագույն են:

դ. Պատերազմում երրորդ ուժերի քաղաքական եւ ռազմական միջամտությունը կամ դրա հնարավորությունը չի ծառայում պատերազմող երկրի շահերին, եթե այդ ուժերը նրա կայուն դաշնակիցները չեն եւ կամ աշխարհքաղաքական նկատառումներով չեն պաշտպանում նրա կողմից հետապնդվող նպատակները: Ցանկացած պատերազմ երրորդ ուժերի կողմից ենթակա է շահարկման, առավել եւս՝ տարածքային պատերազմները փոքր պետությունների միջեւ: Ազդեցիկ երրորդ ուժերի միջամտության լավագույն տարբերակը նրանց կայուն աջակցությունն է պատերազմող կողմերից մեկին: Այս դեպքում ռազմական գործողությունների արդյունքները եւ նրանց քաղաքական վավերացումը հստակ դրսեւորում են ունենում: Սա որոշ իմաստով դրական գործոն է նաեւ պարտվող կողմի համար, որովհետեւ զրկում է նրան պատրանքներով առաջնորդվելու հնարավորությունից եւ հարկադրում ժամանակին դադարեցնել պատերազմը, դրանով իսկ խուսափելով քաղաքական, տնտեսական եւ մարդկային կարողությունների ծայրահեղ վատնումից:

Իրադարձությունների զարգացումն առավել ողբերգական ընթացք է ընդունում այն դեպքում, երբ երրորդ ուժերի միջամտությունը կրում է «անկողմնակալ» բնույթ, որն արտահայտվում է տակտիկական նպատակներով պատերազմող կողմերից որեւէ մեկին ժամանակավոր աջակցություն ցույց տալով: Այս դեպքում երկու կողմն էլ դատապարտված են վերջնական հաջողությունն ապահովելու երկարատեւ պատրանքի եւ իրենց երկրները հասցնում են հյուծվածության առավելագույն աստիճանի: Նման պատերազմի քաղաքական հանգուցալուծման ժամանակ բուն պատերազմող կողմերը որեւէ որոշակի դեր չեն խաղում, եւ խնդիրը լուծվում է մեծ տերությունների միջեւ ձեռք բերված համաձայնությունների համապատասխան: Երրորդ ուժի ժամանակավոր աջակցությունը կարող է դրական գործոն դառնալ միայն այն դեպքում, երբ տվյալ պատերազմող կողմը ունի քաղաքական կամ այլ

բնույթի ազդեցիկ լծակներ, որոնց կիրառմամբ նա կարող է արձանագրել ձեռք բերած նվաճումները: Հենց դա էլ ուժեղ քաղաքականության եւ պատերազմի նկատմամբ վերահսկողության իրականացման արտահայտությունն է, երբ առավելագույն բարենպաստության իքս ժամին պատերազմող երկիրն ի վիճակի է կանգնեցնել իրադարձությունների զարգացումը եւ դա վավերացնել քաղաքական որոշումներով:

ե. Տարածքային խնդիրների հետ կապված պատերազմների ավարտը խնդրի լուծման վերջնական տարբերակ լինել չի կարող եւ անխուսափելիորեն կրկին երեւան կգա ապագայում: Անկախ պատերազմի արդյունքներից, տվյալ երկիրը պետք է անընդմեջ աշխատանք տանի իր անվտանգության երաշխիքները ձեռք բերելու եւ ամրապնդելու ուղղությամբ: Ապագայի համար անչափ կարեւոր է այն խնդիրը, թե ինչպիսի կարողություններով է դուրս եկել երկիրը տվյալ պատերազմից: Եթե նույնիսկ այդ պատերազմը հաղթական է, բայց հաղթանակի զոհասեղանի վրա վատնվել են այդ երկրի ու նրա ժողովրդի կարողությունները, որոնք գերազանցում են թույլատրելի սահմանը, ապա հեռանկարում կպահանջվի ուժերի առավելագույն գերլարում, որպեսզի հնարավոր լինի վերականգնել կորուստները եւ անհրաժեշտ ձեւով նախապատրաստվել նոր փորձություններին: Սակայն պատմությունը ցույց է տալիս, որ փոքր եւ սահմանափակ կարողություններով ժողովուրդների համար հաղթանակի, իսկ առավել եւս՝ պարտության նման տարբերակը ճակատագրական է լինում: Եւ այստեղ վճռորոշ դեր պետք է խաղա քաղաքականությունը՝ իրադարձությունները վերահսկելու իր կարողությամբ: Այն ժողովուրդները, որոնք հաղթելու հավակնություն ունեն ոչ միայն տվյալ փուլում, այլեւ հեռանկարում՝ պետք է ունենան նաեւ ինքնակառավարման եւ ինքնազսպման գործուն մեխանիզմներ, որոնք գործի են դրվում իրավասու մարմինների կողմից կրիտիկական կետի սահմանման դեպքում: Եւ այդ պարագային համազգային կարգապահության եւ ինքնագիտակցականության բարձր մակարդակի դրսեւորում է անհրաժեշտ: Դա այն պարտադիր նախապայմանն է, որ զրկել եւ զրկում է շատ երկրների իրենց ճակատագիրը խոհեմաբար տնօրինելու հնարավորությունից:

զ. Ե՛ւ պատերազմում, ե՛ւ քաղաքականության մեջ որոշիչը կարողությունների աստիճանն է: Պատերազմում թերացող ժողովրդին քաղաքականությունն անվտանգության կայուն երաշխիքներ ապահովել չի կարող, իսկ քաղաքականության

մեջ անկարող պետությանը չի փրկում նույնիսկ ժողովրդի բացառիկ անձնազոհությունը: Հաջողությունն ապահովվում է այն դեպքում, երբ ստեղծարար ու արդյունավետ քաղաքական միտքը ներդաշնակում է պաշտպանվելու ընդունակ ժողովրդի ամուր կամքի հետ: Եւ, այնուամենայնիվ, քաղաքականության դերը վճռորոշ է, քանզի նա է կոչված ապահովել այն պայմանները, որոնք խթանում են տվյալ ժողովրդի քաղաքական, տնտեսական եւ հոգեւոր առաջընթացը, նա է, որ ի վիճակի է դադարեցնելու եւ կանխելու պատերազմները եւ, վերջապես, նրա կարողությունների աստիճանն է որոշում այս կամ այն ժողովրդի տեղը համաշխարհային քաղաքականության աստիճանակարգում: Այն ժողովուրդները, որոնք անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում քաղաքականությունն ապահովող համակարգերի ձեւավորման վրա, համապատասխան միջոցներ չեն հատկացնում քաղաքականության իրականացման համար եւ քաղաքականությունն իրականացնող իրավասու մարմիններից չեն պահանջում աշխատանքի շոշափելի արդյունքներ՝ անպաշտպան են իրադարձությունների զարգացման առաջ եւ վտանգում են թե՛ իրենց, թե՛ սերունդների ապագան:

20-րդ դարի վերջին քառորդը որակապես նոր աստիճանի վրա բարձրացրեց պատերազմի նկատմամբ քաղաքականության առաջնայնության խնդիրը: Երկրորդ աշխարհամարտից հետո ձեւավորված նոր իրողությունների պայմաններում մեծ տերությունները զրկված են իրենց ազգային խնդիրները ուժի գործադրման միջոցով լուծելու հնարավորությունից, ինչը, սակայն, չի կարող օրակարգից դուրս թողնել այդ խնդիրները: Արեւմուտքը առաջ քաշեց եւ հետեւողականորեն պաշտպանում է բոլոր, այդ թվում նաեւ՝ տարածքային եւ սահմանային խնդիրների լուծման միայն քաղաքական ուղիների ընտրությունը, որոնց հնարավորությունն ապացուցում է Եւրոպայում եւ Ասիայում արմատական փոփոխություններ կատարելով: Կասկածից վեր է, որ հեռանկարում որոշիչ դերը պատկանելու է ուժեղ քաղաքականությանը, իսկ ուժային գործելակերպը մնալու է չափազանց նեղ շրջանակի երկրների մենաշնորհը, որի գործնական կիրառումը կձգտեն ամեն կերպ սահմանափակել: Սա պետք է լինի Արեւմուտքի կողմից կառուցվող նոր աշխարհակարգի քաղաքական հիմնաքարը եւ, չանդրադառնալով նրա հաջողության հնարավորությանը, անհրաժեշտ է, սակայն, անպայմանորեն հաշվի առնել, որ Արեւմուտքն ի վիճակի է զոհաբերել բոլոր նրանց,

ովքեր կխոչընդոտեն իր կենսական շահերին համապատասխանող ծրագրի իրականացմանը [4] :

Պատերազմի միջազգային իրավական կարգավորումը

Համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում միջազգային իրավունքում առաջացավ «Ուժ կամ ուժի սպառնալիք չգործադրելու սկզբունքը» ՝ սկզբնապես որպես ագրեսիվ պատերազմի արգելման սկզբունք: Այս սկզբունքը փոխարինեց մինչ այդ միջազգային իրավունքում գոյություն ունեցող պետության պատերազմի իրավունքին, որի համաձայն՝ յուրաքանչյուր պետություն կարող էր այլ պետության դեմ պատերազմ սկսել վեճի դեպքում: ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն.«Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամները իրենց միջազգային հարաբերություններումձեռնպահ են մնում ուժի սպառնալիքից կամ դրա գործադրումից ինչպես ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ, այնպես էլ Միավորված ազգերի նպատակների հետ անհամատեղելի արևէ այլ ձևով» [2] :

ՄԱԿ-ի Կանոնադրությունը նախատեսում է զինված ուժի իրավաչափ գործադրման միայն երկու դեպք՝ ինքնապաշտպանության նպատակով և ՄԱԿ-ի անվտանգության հորհրդի որոշմամբ՝ խաղաղությանը սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի դեպքում:

Ռազմական գործողություններ սկսելու մասին 1907 թ. Հաագայի կոնվենցիան սահմանում է, որ պետությունների միջև ռազմական գործողությունները չպետք է սկսվեն առանց նախնական նախազգուշացման, որը կարող է ունենալ կամ պատերազմի պատճառաբանված հայտարարման, կամ պատերազմի պայմանական հայտարարմամբ վերջնագրի ձև:Այդ նորմը շարունակում է գործել նաև այսօր: Միևնույն Ժամանակ, ըստ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1974թ. Ընդունած ագրեսիայի բնորոշման, ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն, ինքնապաշտպանություն չհանդիսացող պատերազմ հայտարարելու փաստը չի օրինականացնում հակահիրավական պատերազմը, այլ ագրեսիայի գործողություն է: Պատերազմ հայտարարելու փաստը ինքնին դառնում է միջազգային հանցագործություն:

Պատերազմի դեպքում խաղաղ ժամանակի համար նախատեսված քաղաքական, տնտեսական և այլ պայմանագրերի գործողությունը դադարում է, գործողության մեջ են մտնում Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը։ Ի տարբերություն միջազգային իրավունքի մյուս ճյուղերի, որոնց հիմքը հնարավոր հակամարտությունները առանց ուժային միջոցների գործադրման լուծելու ձգտումն է, միջազգային մարդասիրական իրավունքն ուղղված է բռնության գործադրումը պետությունների միջև փոխհամաձայնեցված որոշակի նորմերի ենթարկելուն։ Միջազգային մարդասիրական իրավունքը ընդգրկում է երկու բնագավառ՝

1.պատերազմ վարելու եղանակների առնչությամբ սահմանափակումների սահմանում (Հաագայի իրավունք).

2.ռազմական գործողություններին անմիջականորեն մասնակցություն չունեցող կամ մասնակցությունը դադարեցրած անձանց պաշտպանությունը (Ժնևի իրավունք) [2] ։

Եզրակացություն

Ուսումնասիրված գիտական գրականության մեջ, պաշտոնական քաղաքական փաստաթղթերում բավականաչափ ձևակերպված և փաստարկված է պատերազմի և քաղաքականության կապը, որի մասին նշում էր Կառլ Կլաուզևիցը. «Պատերազմը սոցիալ-քաղաքական երևույթ է, քաղաքականության շարունակությունը բռնի միջոցներով»:

Կարելի է պնդել, որ պատերազմի և քաղաքականության կապը միշտ էլ եղել է, բայց Կլաուզևիցի ժամանակներից շատ տարիներ անց էլ այն մշտապես ապացուցվել է պատմական պրակտիկայում: Այժմ՝ Կլաուզևիցից 200 տարի անց, պարզ է, որ 19-րդ դարի, 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի պատերազմները լիովին հաստատեցին նրա բանաձևը, թեև պատերազմները զգալիորեն տարբերվում էին և, անշուշտ, կտարբերվեն միմյանցից:

Միաժամանակ, մեր մոլորակի վրա հինգուկես հազար տարվա պատմական ժամանակաշրջանում տեղի ունեցած մի շարք պատերազմների ուսումնասիրության հիման վրա կարելի է եզրակացություն անել. Իսկապես, ցանկացած պատերազմի ամենակարևոր էությունը զինված պայքարն է, քանի որ զենքը եղել է բռնության հիմնական և միակ միջոցը անցյալի պատերազմներում, մնում է ներկայում և հավանաբար կմնա ապագայում:

Այսպիսով, պատերազմը դիմակայություն է պետությունների, երկրների կոալիցիաների, ինչպես նաև նրանց ներսում գտնվող քաղաքական ուժերի միջև: Այդ դիմակայությունը միշտ իրականացվում է քաղաքական նպատակներով՝ կապված ուժով քաղաքականության շարունակության հետ: Դրա ընթացքում կողմերը կիրառում են բռնության տարբեր միջոցներ: Ցանկացած պատերազմի էություն դրսևորվում է հենց երեք հատկանիշներով՝ քաղաքական նպատակներ, բռնության միջոցներ, դիմակայության ձևեր և մեթոդներ:

Արդյունքում կարելի է ասել, որ ինչպիսին էլ լինի պատերազմը՝ քաղաքացիական, գաղութային, ազգային-ազատագրական, հեղափոխական, այն միշտ քաղաքական ենթատեքստ է ունենալու:

Գրականության ցանկ

1. Բ.Ա. Խաչատրյան, Ս.Ս. Հայրապետյան., Քաղաքագիտություն, Երևան, 2000
2. Վ. Քոչարյան., Միջազգային իրավունք, Երևան, 2002
3. Հ. Արզումանյան., «Պատերազմի շարունակականությունը և արևմտյան ռազմական մշակույթը»
4. https://www.lragir.am/2014/03/18/96462/
5. https://hy.wikipedia.org/wiki/%D5%8A%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%A6%D5%B4

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Հերթական ատեստավորման ենթակա ուսոցիչների վերապատրաստման դասընթացներ

Արամ Մելիքի Ղազարյան

Թեմա՝ << Բարոյական արժեքներ>> թեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները միջնակարգ դպրոցում

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ Գ. Էմինյան

Վանաձոր 2022թ

Բովանդակություն

1. **Ներածություն: Թեմայի արդիականությունը----------2**
2. **Բարոյականության արժեհամակարգը----------4**
3. **Արժեքներ և արժեհամակարգ ----------8**
4. **Եզրակացություն----------11**
5. **Օգտագործված գրականության ցանկ----------13**

Ներածություն

***Թեմայի արդիականությունը*:** Բարոյականություն բառը ներմուծվել է Ցիցերոնի կողմից: Լատիներեն mores նշանակում է հասարակական բարքեր, չգրված կանոններ: Բարոյականությունը այն «չգրված» կանոնների միությունն է, որոնց շնորհիվ կյանքը ավելի համակարգված է:

Ի՞նչ է բարոյականությունը, ինչպե՞ս կարելի է սահմանել այն:

Բարոյականությունը մարդկային վարվելակերպի, վարվեցողության և դրանց առնչվող հասկացությունների համակարգ է, որն աշխարհիկ ընկալումով պետք է ընդունելի և գովելի համարվի հասարակության կողմից, իսկ կրոնական տեսակետով՝ պետք է հաստատված, ընդունելի ու գովելի համարվի Աստծո կողմից: Քանի որ աշխարհիկ ընկալմամբ հասարակությունն է սահմանում բարոյականության նորմերը, ապա տարբեր հասարակությունների պարագայում բարոյականության հասկացություններն ու վարվելաձևերը կարող են արմատականորեն տարբերվել և նույնիսկ բոլորովին միմյանց հակառակ լինել: Այսպիսի հակադրություն ակնհայտ է արևմտյան և արևելյան հասարակությունների բարոյական ընկալումներում և հասկացություններում, ըստ այդմ էլ՝ արտաքին վարվելակերպի մեջ:

Բարոյականություն ասելով՝ մարդիկ հաճախ պատկերացնում են առավելաբար սեռական կյանքին առնչվող իրողությունները, և հասարակությունների տարբերություններով էլ կարող են հակադրվել արտաամուսնական և մինչամուսնական կյանքի ու ապրելակերպի մասին պատկերացումները: Արևմտյան հասարակություններում ավելի ազատ մոտեցում կա այս հարցին, մինչդեռ արևելյան հասարակություններն ավելի պահպանողական ու ավանդական են ընտանիքին վերաբերող հարցերում:Կախված միջավայրից, ժամանակաշրջանից և մարդկային մտածելակերպի փոփոխությունից՝ երբեմն ոչ բարոյական ընկալված երևույթներն օրինականացվում են՝ դառնալով նոր ժամանակների համար բոլորովին ընդունելի ու բարոյական: Ուրեմն, բարոյականության սահմանումը լի է հարաբերականություններո՞վ:

«Բարոյականություն» հասկացությունը հարաբերական է դառնում, երբ զրկվում է կրոնական հիմքից: Բարոյականության նորմերը պետք է հաստատվեն բարոյական բարձր գաղափարներ և իդեալականություն ունեցող անձի, ատյանի կողմից, որպիսին իր կատարելության մեջ կարող է լինել միմիայն Աստված: Երբ մարդն է իր տրամաբանությամբ բարոյականության չափանիշներ սահմանում, կրոնական-քրիստոնեական բարոյականության հետ համեմատած՝ ապաբարոյականացվում է, ընկնում նույնիսկ պղծության մեջ: Արևմտյան զարգացած երկրների տարբեր օրենքներ, որոնք վերաբերում են բարոյական կյանքի կողմերին, հասնում են նույնիսկ անհեթեթության և պղծության՝ աստվածաշնչյան-քրիստոնեական բարոյական սկզբունքների հետ համեմատությամբ ցույց տալով, թե իրական բարոյականության ինչպիսի գահավիժումներ են եղել արդի աշխարհում:

Թեմայի նպատակը: Ուսումնասիրել բարոյական արժեքներ հասկացության էությունը:

Ներկայացնել թեմայի վերաբերյալ ուսումնասիրման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները:

Խնդիրները

1. Ներկայացնել բարոյական աժեքներ հասկացության էությունը:
2. Ուսումնասիրել բարոյական արժեքների նշանակությունը:
3. Նորովի մեկնաբանել բարոյական արժեքների կառուցվածքը և տեսակները:
4. Թեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները 10-րդ դասարանում:

Բարոյականության արժեհամակարգը

Բարոյականությունը մարդկային վարվելակերպի, վարվեցողության և դրանց առնչվող հասկացությունների համակարգ է, որն աշխարհիկ ընկալումով պետք է ընդունելի և գովելի համարվի հասարակության կողմից: Բարոյականությունը հիմնվում է ազատության հասկացության վրա, սակայն ազատության ընկալումը բոլորվին տարբեր և անգամ հակադիր է աշխարհիկ ու կրոնական տեսանկյուններից: Եվ քանի որ ազատության հասկացությունն աղավաղվում է, ըստ այդմ էլ՝ աղավաղվում են բարոյականության հասկացությունն ու ընկալումը:[1]

Աշխարհիկ տեսակետով ազատություն նշանակում է ցանկացածն անելու թույլտվություն, իհարկե, սահման է դրվում օրենքին հակառակ ցանկությունների իրագործումը: Սակայն կրոնական տեսակետից ազատությունը նշանակում է ազատություն մեղքից և ոչ թե՝ թույլտվություն ցանկությունների իրագործման: Քանզի եթե մեղքի մեջ ենք, նշանակում է, որ ծառաներն ու կամակատարներն ենք մեղքի: Եվ ահա ազատության հասկացության այս տարբերությունն է պատճառը, որ աշխարհիկ ընկալմամբ բարոյականության ազատությունը տանում է բարոյականությունից ազատության, խղճի ազատությունը՝ խղճից ազատության, խոսքի ազատությունը՝ խոսքի սանձարձակության և այլն: Մարդուն տրվում է **ազատություն**՝ մտածելու և ազատ գործելու համար, բայց միշտ կարևորվում է՝ **«չկորցնելով բարոյականության սահմանը»:** [2]Ո՞վ է գծում այդ սահմանը: Մարդն ինչպե՞ս պետք է հասկանա կամ զգա, որ մոտենում է այն հատելուն: Բարոյականության հարցերում սահմաններ գծում են օրենքը և կրոնը: Օրենքի գծած սահմանները հաճախ կարող են խիստ թերի լինել բարոյականության հասկացության առնչությամբ: Քրիստոնեությունը բարոյականությունը, ի տարբերություն պետական օրենքի, բարձրացնում է ավելի բարձր աստիճանի՝ նշելով նույնիսկ մտավոր [3]ոլորտում բարոյականության նախանձախնդրության մեծ անհրաժեշտությունը: Այսպիսին են Աստծո տասը պատվիրաններից հատկապես վերջինը՝ **«մի ցանկացիրը»՝ մերձավորի**

---

[1] Ալբերտ Նալչաջյան « Հոգեբանության հիմունքներ»:

[2] «Մարդ և հասարակություն» գրտամեթոդական վերլուծության ամսագիր 2013թ:

[3] Ալբերտ Նալչաջյան « Հոգեբանության հիմունքներ»:

ունեցվածքի վրա աչք չունենալը, որը բերում է բարոյականության բարձրագույն դրսևորման հորդորը:

Բարոյականության մեջ բարոյական և միաժամանակ արդյունավետ, նպատակահարմար է այն միջոցը, որն անհրաժեշտ ու բավարար է ազնիվ նպատակին հասնելու համար և չի աղճատում նրա բարոյական արժեքը: Միջոցը բարոյական գործունեության մեջ պետք է ամենալավ, այլ ոչ թե ամենակարճ կամ ամենա արագ ճանապարհով հանգեցնի դրական բարոյական նպատակին և, ընդ որում, չփոխի ավելի ընդհանուր բարոյական արժեքների բնույթը:[4]

Այսպիսով, բարոյական ընտրությունը միշտ կատարվում է գիտակցաբար, ինքնակամ, համաձայն անձի ներքին համոզմունքների և այդ իսկ պատճառով՝ անհամատեղելի Է գործածի համար անձնական պատասխա- նատվությունից փախչելու, հանգամանքներով արդարանալու, որևէ հեղինակության հղումներ անելու փորձերի հետ: Պատասխանատվություն կրելը՝ կատարած արարքների հետևանքներն ինքն իր վրա վերցնելն է, և, բառի լայն իմաստով, դրանց համար վարձահատույց լինելը: Այլ կերպ ասած, պատասխանատվությունը ազատության անհրաժեշտ ատրիբուտն է: Ինքն իրեն պատասխանատու զգալ՝ նշանակում է ընդունակ լինել ակտիվորեն գործելու սեփական դիրքերից, գործելու իրադարձությունների տրամաբանությանը համապատասխան՝ հասկանալով և գիտակցելով, թե ինչպիսի հետևանքներ կունենա քո վարքը շրջապատի վրա: Իսկ դա ենթադրում է կանխատեսել սեփական արարքի հետևանքները և ձգտել կանխարգելել իրադարձությունների հնարավոր բացասական Բարոյականության վրա առանձնահատուկ ազդեցություն են թողնում պատմական կողմերը, որոնք ներառում են մարդկանց քաղաքական պայմանները, ավանդույթներն ու սովորույթները, այսինքն ՝ նրա մշակույթը և, վերջապես, քաղաքակրթության գործոնը, որը ներառում է սոցիալական նպաստների և հարմարավետության մակարդակը: Այս ամենը, միմյանց հետ զուգակցված, մարդկանց մտքում ձևավորում է վարքի որոշակի կարծրատիպ, որը փոխվում է ժամանակի ընթացքում ՝

[4] .«Անձի հոգեբանության տեսական և կիրառման հարցեր» գիտական հոդվածների ժողովածու:

ենթարկվելով քաղաքականության փոփոխվող ազդեցություններին և բարեկեցության ընդհանուր մակարդակի բարձրացման կամ անկմանը:

Այս ամենը վկայում է այն մասին, որ բարոյականությունը գործում է որպես մարդու և Աստծո կամ մարդու արտաքին և ներքին «ես» -ի հարաբերությունների ոլորտ և, հետևաբար, հենվում է սկզբունքի վրա. **«Դարձիր կատարյալ, ինչպես քո Աստվածը, որովհետև մարդը ստեղծվել է Նրա պատկերով և նմանությամբ»:** Մինչդեռ բարոյականությունը հասարակության մեջ մարդկանց միջև հարաբերությունների ոլորտ է և, հետևաբար, որոշվում է հետևյալ սկզբունքով. **«Ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեին»:**[5]

Սրանից հետևում է, որ բազմաթիվ բարոյական բարքեր դառնում են տարրալուծման, ոմանց օտարությունից, որոշ ժողովուրդներից ՝ ուրիշներից, հանդես գալով որպես վեճերի, հակամարտությունների, պատերազմների անսպառ աղբյուր: Բարոյական դրույթների միասնությունը տարբեր մարդկանց, սոցիալական խմբերի և տարբեր ազգերի ՝ տարբեր բարոյականությամբ, բայց միևնույն հիմնական արժեքներով միավորման և փոխըմբռնման երաշխավորն է:

Այսպիսով, եկեք ընդգծենք բարոյականության և բարոյականության միջև եղած տարբերությունները.

- բարոյականությունը իմանենտ է գիտակցության համար, իսկ բարոյականությունը ՝տրանսցենդենտալ դրա համար.
- բարոյականությունը մշտական է, և բարոյականությունը փոփոխական է.
- բարոյականությունը մեկն է, իսկ բարոյականությունը ՝ հոգնակի;
- բարոյականությունը մարդուն ներառում է հոգևոր ամբողջության մեջ, իսկ բարոյականությունը ՝մարդուն սոցիալական ամբողջության մեջ.
- բարոյականությունը մարդուն տալիս է իր կյանքի նպատակը, իսկ բարոյականությունը ՝միջոցները:

Հարց է առաջանում. Կա՞ նմանություն բարոյականության և էթիկայի միջև: Ստացվում է, որ կա, քանի որ մեծ հաշվով դրանք մեկ են: Քանի որ

[5] .«Անձի հոգեբանության տեսական և կիրառման հարցեր» գիտական հոդվածների ժողովածու:

բարոյականությունը բարոյականության տարածա-ժամանակային պրոյեկցիա է, իսկ բարոյականությունը ՝իդեալական համընդհանուր կամ բացարձակ բարոյականություն: Հետեւաբար, բարոյականությունը բարոյականության դրսեւորման ամենացածր ձեւն է, իսկ բարոյականությունը ՝հաստատված բարոյականության բարձրագույն ձեւը: Պատկերավոր համեմատելով դրանք միմյանց հետ, կարող ենք ասել, որ բարոյականությունը պտտվող անիվի «առանցքն» է, իսկ բարոյականությունը ՝դրա եզրը:

Բարոյականությունն անփոփոխ է բովանդակությամբ և չափազանց պարզ ձևով: Այն բացարձակ է և արտահայտում է մարդու (և մարդկության) շահերը որպես ամբողջություն: Հիմնական բարոյական ուղեցույցներից մեկը վերաբերմունքն է մեկ ուրիշի նկատմամբ, ինչպես սեփական անձի, այնպես էլ սերը մերձավորի նկատմամբ, ինչը նշանակում է, որ բարոյականությունը սկզբնապես չի ընդունում բռնությունը, արհամարհանքը, նվաստացումը և ինչ -որ մեկի իրավունքների խախտումը: Ամենա բարոյականն այն մարդն է, ով կատարում է բարոյական գործեր ՝ նույնիսկ դրա մասին չմտածելով: Նա պարզապես չի կարող այլ կերպ վարվել: Բարոյականությունն ուղղված է առաջին հերթին ինքնահաստատմանը, իսկ բարոյականությունը ՝մեկ այլ անձի նկատմամբ անհետաքրքրված հետաքրքրությանը: Բարոյականությունը ամենամոտն է իդեալին, տիեզերքին:[6]

Այսպիսով, մարդկային վարքի Կարգավորումն ու ազատ ընտրությունը՝ որպես բարոյականության նախապայման ուսումնասիրելը, արդիական է թե՛ տեսական, թե՝ գործնական առումներով: Տեսական առումով խնդրի ուսումնասիրությունը պայմանավորված է բարոյական արժեքների վրա հիմնված քաղաքացիական հասարակություն ստեղծելու պահանջներով, իսկ գործնական առումով՝ սոցիալ-տնտեսական ու քաղաքական նոր պայմաններում համապատասխան կողմնորոշիչների մշակման խնդրով: [7]

---

[6] Սարգսյան Ա. Հ. «Մշակույթի տեսություն» Եր., 2003:

[7] .«Անձի հոգեբանության տեսական և կիրառման հարցեր» գիտական հոդվածների ժողովածու:

Արժեքներ և արժեհամակարգ

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:Արժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Սուբյեկտի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը:[8] Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցությանը տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների բանահյուսության մեջ: Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ հանրության մեջ բնականոն գործելու համար: Այսպիսով անհրաժեշտ է տարբերակել արժեք-միջոց և արժեք-նպատակ հասկացողությունները: Օրինակ <<իշխանությունը>>, մի բան է որպես միջոց, մեկ այլ բան որպես՝ նպատակ, նմանապես փողը և փառքը: Երբ իշխանությունը, փողն ու փառքը դառնում են անձի գերագույն արժեք, դա հիվանդագին և ախտածին երևույթ է, մինչդեռ որպես միջոց դրանք համարվում են կյանքի ընդունելի ու անհրաժեշտ տարրեր:

Առանձնացնենք նաև արժեք-արժանիքները, որոնք անձի համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են, այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է <<անհատ-ազգ>> փոխհարաբերությունների կարգավորման առումով: Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես **<<հաստատակամություն>>, <<աշխատասիրություն>>, <<համբերատարություն>>** և այլն: Պետք է տարբերակել

[8] Զեյնալյան Ն. Ա. «Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017

ազգային արժանիքներ հասկացողությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ՝ **արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն:**

Արժանապատվությունը սեփական <<Ես>>-ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը: Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ:

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա:[9]

Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է: Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է: Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի առաջացման:Պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է: Այն անհատներն ու ազգերը, ոոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները վրա է հասնում ոգու սովը:Ոգեղենությունը պեք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը: Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են ՝ հավատն ու սերը:Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը,

[9] Զեյնալյան Ն. Ա. «Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017

մարդկային բանականության հաստատման համար միակճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Վերջիններս մարդու խմբային ինքնության բոլոր դրսևորումներում դիտարկվում են որպես «ամենահիմնարարն ու տարողունակը»: Անընդհատ վերափոխվողհասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասինմոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբարնոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները: Այս հանգամանքն ավելի է բարդացնում ազգային արժեքների պահպանության խնդիրը, որի լուծման հարցը դրված է ինչպես պետության, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու վրա:[10]

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Անձի արժեքային համակարգի ձևավորումն իրականանում է մի շարք գործոնների ազդեցությամբ: Այդ գործոններն են ընտանիքը, հասարակությունը, դպրոցը, շրջապատի սոցիալական արժեքները և այլն:Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն: [11]Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այդ գործընթացում հատկապես կարևորվում է ներքնայնացման գործընթացը՝ որպես սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքները: Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալականպայմանները, անձիսոցիալականացման բնութագրիչները:

---

[10] .Սարգսյան Ա. Հ. «Մշակույթի տեսություն» Եր., 2003:

[11] Ալբերտ Նալչաջյան « Հոգեբանության հիմունքներ»:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է «Բարոյական արժեքների» խորը ուսումնասիրությունը, արդիական խնդրիների հետազոտումը և ժամանակակից փուլում դրանց ըմբռնման և վերարտադրության մակարդակի ստուգաբանությունը: Արդի մարտահրավերների հետ կապված կարևոր են հատկապես արժեքների պահպանումը, որոնք մեր ազգի գոյության երաշխիքն են և գրավականը: Բարոյական արժեքներով դաստիարակված մարդը առաքինի է, բարեկիրթ: Այդպիսի մարդու նիստուկացը, գործողություններն ու արարքները , մարդկանց հետ հարաբերությունները, աշխարհահայացքն ու աշխարհընկալումը յուրահատուկ են և օրինակելի: Բարոյական զարգացումից զուրկ մարդը հասարակության համար անտանելի բեռ է:

Բարոյական Արժեքը առարկայի կամ երևույթի առանձնահատկությունն է, սակայն նրա նշանակությունն ու օգտակարությունը սահմանված չէ բնության կողմից: Այն գնահատվում է ոչ միայն օբյեկտի ներքին կառուցվածքով, այլև հիմնվում է կոնկրետ գործողությունների ժամանակ նրան տրված սուբյեկտիվ գնահատականների վրա, որոնք մտնում են հասարակական ոլորտի մեջ, քանի որ մարդը հետաքրքրված է, կամ ունի դրա կարիքը:

Բարոյական արժեքը գործում է որպես մարդկային համընդհանուր իդեալ, որպես վերացական գաղափար այն հատկանիշների հիման վրա, որոնք պետք է լինեն սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում, որը մշակվում է հասարակության գիտակցության մեջ:

Դրանք ներառում են կյանքը, ազատությունը, երջանկությունը, խաղաղությունը, մարդկության կյանքը, արդարության մասին գաղափարները, իրավունքներն ու պարտականությունները, ընտանեկան կապերը, ինքնապահպանման և ինքնահաստատման արժեքները, և այլն:

Արժեքները ձևավորվում են մեր մեջ դաստիարակության հետ միասին: Բայց մեր դաստիարակությունը չի ավարտվում ընտանիքով: Մենք շատ բան ենք ստանում մեր ընկերների և շրջապատի մարդկանց հետ շփվելիս: Առավել մեծ ազդեցություն

կարող է թողնել մի անձնավորություն, որին բոլորից շատ ես հարգում և դա անպայման չէ, որ լինի տան անդամ:

Կան արժեքներ, որոնք երբեք չեն կորցնի իրենց նշանակությունը: Դրանցից են.

1.Առողջությունը

2.Սերը, ընտանիքը, երեխաները, տունը

3.Մտերիմները, ընկերները, շփումը

Հաշվի առնելով մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները՝ հասարակագիտություն առարկայից աշակերտների հետ մեկտեղ եկանք այն եզրահանգման, որ այս արժեհամակարգի պահպանումը կլուծի բազում խնդիրներ՝ մարդուն մարդ դարձնելով: **Մարդու արժեքը մարդն ինքը չէ, որ որոշում է, այն միշտ որոշվում է նրա ապրած կյանքով, արած ու չարած գործերով:**

Օգտագործված գրականության ցանկ

1.Ալբերտ Նալչաջյան « Հոգեբանության հիմունքներ»: էջ 150

2.«Անձի հոգեբանության տեսական և կիրառման հարցեր» գիտական հոդվածների ժողովածու:էջ 1-15

3. Զեյնալյան Ն. Ա. «Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017 էջ 210

4 «Մարդ և հասարակություն» գրտամեթոդական վերլուծության ամսագիր 2013թ: էջ 50

5.Սարգսյան Ա. Հ. «Մշակույթի տեսություն» Եր., 2003:էջ 258 տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017: էջ 110

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՌՈԲԵՐՏԻ ՕՀԱՆՅԱՆ

Հավասարությունթեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները 8-րդ դասարանում

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ Գ. Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3
2. «Հավասարություն» հասկացությունը 5
3. «Հավասարություն» դասի ուսուցումը 8-րդ դասարանում 8
4. Եզրակացություն 13
5. Գրականություն 15

Ներածություն

«Հավասարությունը արդարացիության փորձաքարն է, իսկ միասին նրանք կազմում են ազատության էությունը»:

Ի. Ջեյմս

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդկությունը վերջնականապես ըմբռնեց հավասարության նշանակությունը և որոշում կայացրեց համընդհանուր ճանաչման արժանացնել այդ սկզբունքը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 1-ին հոդվածում նշված է «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ , խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրական ոգով»: [4]

Հավասարությունը ժամանակակից ժողովրդավարական պետության անհրաժեշտ տարրն է, մարդկանց բարեկեցության նախապայմանը, քանի որ առանց հավասարության անիրագործելի է տնտեսական և քաղաքական զարգացումը: Եթե յուրաքանչյուր ոք չունենա երկրի տնտեսական գործընթացներին ներգրավվելու, իր ստեղծագործածը զարգացնելու, պետական պաշտոններ զբաղեցնելու հավասար հնարավորություն, ապա հասարակությունը կարող է կորցնել հսկայական ռեսուրսներ: Հավասարության և խտրականության արգելումը պետության ժողովրդավարական կառավարման հիմքն է: Իսկ ժողովրդավարական արժեքներին ու հավասարության սկզբունքներին հետևելը հասարակության խաղաղ համակեցության գրավականն է:

Հենց ներքոհիշյալն է հիմք հանդիսացել հետազոտական աշխատանքի թեմայի ընտրության հարցում: Կարևորելով թեման՝ հետազոտական աշխատանքի մեջ ցանկանում եմ ներկայացնել դասանյութի ուսուցման մեթոդական իմ փորձը: Դասանյութի ուսուցման նպատակն է, որ սովորողները ձեռք բերեն մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ գիտելիք՝ գործնական առաջադրանքների միջոցով զարգացնելով դրանց վերաբերյալ վերլուծական հմտություններ ու վերաբերմունք:

Դասանյութի ուսուցման վերջնարդյունքում աշակերտը կկարողանա բացատրել հավասարություն հասկացությունը, համեմատել սոցիալական հավասարությունն ու իրավահավասարությունը, բացահայտել սոցիալական հավասարության և

իրավահավասարության դրսևորումները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, կդառնա հավասարություն արժեքի կրողն ու կերտողը արդի հասարակության մեջ։

Այս հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել հավասարության վերաբերյալ սովորողների պատկերացումները և ներկայացնել «Հավասարություն» թեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները 8-րդ դասարանում։

Հետազոտությանս խնդիրներն են՝

1. Բացահայտել սովորողների պատկերացումները հավասարության և արդարության մասին։ Այս բացահայտումը հնարավորություն կընձեռի կառուցել դասը, գտնել հիմնական շեշտադրումները։
2. Ներկայացնել հավասարության և արդարության հասկացությունները։ Եզրույթների ներկայացման համար հիմք կհանդիսանան և դասագիրքը, և ՀՀ օրենսդրությունը, և համաշխարհային գրականությունը, և առօրյա կյանքը։
3. Վեր հանել Հավասարություն թեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները։ Այս թեմայի ուսումնասիրությունը խիստ կարևոր է և արդիական, յուրաքանչյուր աշակերտ կյանքի այս կամ այն պայմաններում բախվել է այս թեմայի հետ, այն բավականին նուրբ թեմայ է, յուրաքանչյուր սխալ ձևակերպված միտք, կամ անտեղի օրինակ անդառնալի հետևանք կարող է ունենալ թե աշակերտի, թե ուսուցչի համար։

«Հավասարություն» հասկացությունը

Հավասարության պրոբլեմը ծագել է դասակարգերի առաջացման հետ և արտահայտել հասարակությունը արդարության սկզբունքով վերակառուցելու ճնշված դասակարգերի ու դասերի իդեալը: «Հավասարություն» հասկացությանը տարբեր պատմական դարաշրջաններում տրվել է սոցիալական տարբեր բովանդակություն: Հավասարության իրականացումն են հետապնդել թե՛ ստրուկների ապստամբությունները, և թե՛ միջնադարյան գյուղացիականշարժումները:

Դասակարգային պայքարի պրակտիկային զուգընթաց տեսականորեն հիմնավորվել են նաև հասարակական անհավասարության առաջացման պատճառները, առաջադրվել դրանց վերացման հնարավոր ուղիները: Ուտոպիստների ու լուսավորիչների ազդեցությամբ 17-րդ դարի Անգլիական և 18-րդդարի Ֆրանսիականհեղափոխություններում ձևավորվածարմատականհոսանքներին պատակըհամընդհանուրհավասարությանհաստատումնէր (չեվելլերները՝ Անգլիայում, Գրակքոս Բաբյոֆի «հավասարներիդավադրությունը»՝ Ֆրանսիայում):

Կապիտալիստական հասարակարգում առաջին անգամ հռչակվեց իրավահավասարության սկզբունքը, վերացվեցին դասերը և դասային արտոնությունները:

Համընդհանուր հավասարության հաստատելու տեսական հիմնավորումն ու իրականացումը ռուս հեղափոխական դեմոկրատների և Միքայել Նալբանդյանի հիմնականնպատակնէր:

Մարդկային հասարակության մեջ, ինչպես նաև բնության մեջ ընդհանրապես բացարձակ հավասարություն գոյություն չունի: «Հավասարություն» բառը գալիս է լատիներենից *aequalĭtas, -ātis,* կազմված տերմինի հետ *æk̆ɣuս* (հավասար, հարթ, հավասարակշռված): «Հավասարության» հոմանիշը «արդարություն» է: Ըստ Մ.Մ. Ռոզենտալի «Փիլիսոփայական բառարանի» ՝ «հավասարությունը հասկացություն է, որը նշանակում է մարդկանց միատեսակ դրություն հասարակության մեջ»:[3, էջ 238]

ՀՀ Սամանադրության հոդված 28-ը և 30-ը փաստում են. « Բոլորը հավասար են օրենքի առջև» և «Կանայք և տղամարդիկ իրավահավասար են»:[2, էջ 5]

Կարևոր է, որպեսզի հավասարությունը սահմանազատվի հավասարեցումից, վերջինս ինքնին հակասում է հավասարության գաղափարին, քանի որ հավասարությունը հնարավորությունների հավասար ապահովումն է, ինչը մարդկանց այս կամ այն ոլորտներում ինքնաիրացման հնարավորություն է ընձեռնում: Հավասարության գաղափարի համաձայն՝ պետությունը էականորեն անհավասար իրավիճակում գտնվող անձանց չպետք է վերաբերվի հավասարապես: Նշվածի խախտումը անուղղակի խտրականություն է: Օրինակ՝ ինքնակառավարման մարմինը քաղաքում փողոցի մայթերը երեսապատելու մրցույթ է հայտարարում և նախագծով չի նախատեսում սահմանափակ կարողություններով անձանց համար թեքահարթակների տեղադրումը, նա խախտում է հավասարությունը, քանի որ նախագծի իրականացմամբ երեսպատված ճանապարհը կարծես թե բոլոր մարդկանց համար է, սակայն դրանից չեն կարողանա օգտվել սահմանափակ կարողություններով մարդիկ:

Հավասարություն նշանակում է ապահովել, որ ձեր միջավայրում բոլորն ունենանա հավասար հնարավորություններ՝ անկախ նրանց կարողություններից, ծագումից կամ ապրելակերպից:Գոյություն ունի հավասարության մեկ ուրիշ տեսակ՝ իրավահավասարությունը:

Իրավահավասարությունը ժողովրդավարության ամենակարևոր սկզբունքներից մեկն է, որը ենթադրում է բոլորի հավասարությունը օրենքի առջև՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Այս սկզբունքի խախտումը խտրականություն է: [1, էջ 263]

Իրավահավասարությունը հիմնվում է մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց պաշտպանությունը ապահովող օրենսդրական նորմերի վրա՝ ապահովելով պետության իրավական համակարգին բոլորի հավասար հասանելիությունը:

Ըստ սոցիալական հավասարության՝ բոլոր մարդիկ, բոլոր սոցիալական շերտերը հավասար են իրավունքներով և ազատությամբ, անկախ ազգից, ռասայից, կրոնական

հայացքներից, կարծիքից, քաղաքական հայացքներից, հաշմանդամության աստիճանից։ Սոցիալական հավասարությունը մտնում է լիբերալիզմի գաղափարների մեջ։[5]

Այս տերմինը լուսավորության տարիներին է հայտնվել և աշխարհիկ բնույթ ստացել։ Այժմ հնարավոր չէ կառուցել զարգացած քաղաքացիական հասարակություն՝ առանց սոցիալական հավասարության և իրավահավասարության։

«Հավասարություն» դասի ուսուցումը 8-րդ դասարանում

«Հավասարություն» թեման ծրագրային է և հատկացվում է մեկ դասաժամ: Նյութը զետեղված է 8-րդ դասարանի հասարակագիտության դասագրքում/Զանգակ, 2018/, դաս 13՝ էջ 84-89:

Դասի ուսումնասիրման նպատակն է , որ աշակերտը իմանահավասարություն հասկացությունը, ներկայացնի հավասարության դրսևորումները (սոցիալական հավասարություն, իրավահավասարություն և այլն) և խմբավորի դրանք: Դասանյութի ուսուցման վերջնարդյունքում աշակերտը կկարողանա բացատրել հավասարություն հասկացությունը, համեմատել սոցիալական հավասարությունն ու իրավահավասարությունը, բացահայտել սոցիալական հավասարության և իրավահավասարության դրսևորումները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, կդառնա հավասարություն արժեքի կրող ու կերտող արդի հասարակության մեջ:

Որպես դասի խթանման փուլի մեթոդ ընտրվում էմտագրոհը ՝ հավասարություն բառի շուրջ: Օրինակ՝

արդարություն

խնդիր **հավասարություն** **սեռային հավասարություն**

առողջ հասարակություն

Այնուհետև ուսուցչի հետևյալ հարցադրման միջոցով վեր ենք հանում աշակերտների հիմնավորումը.

- Ինչու՞ են ընտրել այդ բառը և ինչո՞վ է այն կապվում հավասարություն եզրույթի հետ:

Օրինակ՝ խնդիր բառը ընտրած աշակերտը ասում է , որ հավասարությունը մաթեմատիկական տերմին է և օգտագործվում է խնդիրներ լուծելիս: Կամ մի ուրիշ աշակերտ նշում է, որ հավասարություն ասելով, հասկանում է արդարություն, քանի որ

եզրույթը հասարակագիտության ժամին է տրվել, ուրեմն այն կապ ունի հասարակական հարաբերությունների հետ։

Վերլուծելով աշակերտների հնչած պատասխանները՝ ուսուցիչը տալիս է հետևյալ հրահանգը.

- Յուրաքանչյուր աշակերտ թղթի վրա նշի իր պատասխանը, դասի վերջում ինքնուրույն պիտի որոշի, թե որքանով է փոխվել իր իմացությունը և կարծիքը հավասարության մասին։

Դասի ընկալման փուլի համար ընտրվում է «Մագնիսական բառեր» մեթոդը։ Դասարանը , ըստ շարքերի, բաժանվում է երեք խմբի։ Յուրաքանչյուր խմբին տրվում է դասանյութի մի ենթավերնագիրը՝

- «Հավասարություն» հասկացությունը
- Իրավահավասարություն
- Սոցիալական հավասարություն

Ուսուցիչը տալիս է հստակ հրահանգներ, որոնց կատարման համար խմբերին տրվում է միևնույն ժամանակը։

Հրահանգ մեկ՝ Յուրաքանչյուր խումբ կարդում է իրեն առաջադրված հատվածը, այն բաժանում առանձին ամփոփ պարբերությունների։

Հրահանգ երկու՝ Յուրաքանչյուր պարբերությունից դուրս է գրում մագնիսական բառը, այսինքն այն բառը, որն ամենակարևորն է այդ հատվածում։

Հրահանգ երեք՝ Յուրաքանչյուր մագնիսական բառին տալ 4-5 բնորոշող բառեր՝ ըստ տեքստի։

Հրահանգ չորս՝ Ըստ բնորոշ բառերի և մագնիսական բառի կազմել նախադասություններ։

Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ իր կազմած նախադասությունը բարձրաձայնում է և գրում գրատախտակին։ Մյուս խմբերը որոշում են և տալիս գնահատական , թե արդյոք կազմած նախադասությունը հասկանալի էր և մատչելի,

հասկացան արդյոք , թե ինչի մասին է խոսքը, թե կարիք կա լրացուցիչ բացատրության: Հարկ է նշել, որ միմյանց գնահատելիս աշակերտները պետք է ուղղորդվեն հետևյալ սկզբունքներով՝ նախ ասում են երկու կոնկրետ դրական կողմ, ապա մեկ դիտարկում/ բացասական կողմը, բայց նուրբ առանց ավելորդ կտրուկության, օրինակ՝ չեն ասում այս միտքը սխալ է, այլ՝ կարելի էր վերոնշյալ միտքը ձևակերպել հետևյալ կերպ/ և վերջում ասում են մեկ առաջարկություն: Գնահատման այս ձևը խրախուսելի է բոլորի համար:

Մեթոդի արդյունքում աշակերտները սովորում են համագործակցել, լսել միմյանց, աշխատել տեքստի վրա, տեքստից առանձնացնել կարևորը, հենակետայինը: Եվ որ ամենակարևորն է՝ աշխատել մեկ նյութի վրա, բայց սովորել մի քանիսը:

Ամփոփման խոսքը, իհարկե, վերապահվում է ուսուցչին : Նա պետք է ամփոփի աշակերտների ձևակերպումները, շտկի բացթողումները, գիտականորեն հիմնավորում և բացատրություն տա հավասարություն, իրավահավասարություն և սոցիալական հավասարություն եզրույթներին:

Կշռադատման փուլում դասարանը բաժանվում է նոր երեք խմբերի՝ ըստ աշակերտների մտածողության տիպերի/ Հովարդ Գարդների տեսություն/: [6, էջ 40-42]Այստեղ կարելի է առանձնացնել տրամաբանական, լեզվական և միջանձնային մտածողության տիպերը:

Տրամաբանական մտածողությամբ օժտված խումբ: Այստեղ ներգրավված են այն աշակերտները, որոնք ունեն տրամաբանական մտածողություն, կարողանում են ստեղծել պատճառահետևանքային կապեր: Այս խմբին առաջարկվում է դիտել նկար 1-ը:

Լեզվական մտածողությամբ օժտված խումբ: Այստեղ ընդգրկված են այն աշակերտները, ում մտածողությունը հիմնված է խոսքի վրա՝ բանավոր կամ գրավոր: Նրանք լավ են յուրացնում տեքստային առաջադրանքը: Այս խմբին հանձնարարվում է կարդալ հատված Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքից:

- *Ավա՜ղ, սինյորա, ներեցեք ինձ, որ ես չլսեցի ձեզ և թեպետ այլևս չեկա ձեզ մոտ, բայց չմոռացա ձեզ, այլապես ձեր այս նամակը այսպես խնամքով չէի պահի ինձ մոտ: Սա մի անգնահատելի գանձ է, որ դուք պարգևեցիք ինձ, և այս գանձն աչքիս լույսի պես կպահեմ*

մինչև մահս, որովհետև եթե ձեր այս նամակը չլիներ, ես թերևս այն չլինեի, ինչ որ եմ այժմ: Ես մոռացա ձեզ, այո՛. բայց, ինչպես երևում է, դուք մոռացել եք այն ***անդունդը****, որ մեզ բաժանում էր իրարից: Դուք* ***վերևն*** *էիք,-ես* ***ներքևը****, և այդ ձեզ իրավունք էր տալիս արհամարհանքով նայելու դեպի* ***ներքև****: Բայց դուք հաշվի չէիք առել, որ* ***ներքև*** *գտնվողները երբեմն թևեր են առնում, թռչում վերև, և, վրիժառության զգացումով լեցուն: Այն օրը, որ դուք ձեր բարձունքից արհամարհանքով մերժեցիք ինձ-****ներքև*** *գտնվողիս, ես երդվեցի վրեժ առնելու և, դրա համար ուրիշ միջոց չգտա, բայց եթե միայն բարձրանալ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ, մինչև որ իր ձեռակերտ ապարանքի բարձունքից ինձ վրա նայող քմահաճույքն ինքը գար իմ անձեռակերտ բարձունքի առջև ծնրադրելու: Այսօր ես հասա իմ նպատակին: Բայց նորից սիրել նրան, ով խաղում է ուրիշի նվիրական զգացումների հետ, ով տարբերություն է դնում* ***վերևի*** *և* ***ներքևի*** *միջև, ավա՜ղ, սինյորա, ես չեմ կարող:*



Նկ. 1

Միջանձնային մտածողությամբ խումբ: Այստեղ ընդգրկված են այն աշակերտները, որոնք նյութը ընկալում են ակտիվ շփման , միմյանց հետ քննարկման արդյունքում :Այս խմբին առաջարկվում է դիտել հետևյալ տեսահոլովակը:

https://youtu.be/CfRlHsEGGsk:

Խմբերին հանձնարարվում է ուսումնասիրել իրենց տրամադրված նյութը և պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- ✓ Նկատեցի՞ք, արդյո՞ք, հավասարության խախտում:
- ✓ Բերված իրավիճակների համար ի՞նչ լուծում կառաջարկեիք դուք:
- ✓ Ի՞նչն է նման վերաբերմունքի պատճառը:
- ✓ Ի՞նչ զգացողություն կունենայիք, եթե ձեզ հետ նույն կերպ վարվեին:

Քննարկման արդյունքում արդեն հստակ պարզ կլինի, թե որքանով են աշակերտները յուրացրել ուսումնասիրվող նյութը: Հարկ եղած դեքպում, ուսուցիչը կրկին հանդես է գալիս որպես ուղղորդող և մտածողությունը շտկող անձ:

Դասի վերջում անպայման կատարվում է անդրադարձ: Վերադառնալով դասի սկզբում հանձնարարվածին՝ աշակերտները վերընթերցում են իրենց կատարած նշագրումը և ինքնուրույն որոշում, թե որքանով է փոխվել իր իմացությունը և կարծիքը հավասարության մասին:

Այնուհետև յուրաքանչյուր աշակերտ նշում է երեք բան, որ իմացավ, երկու բան, որ կարևորեց և մեկ բան, որի շուրջ կցանկանա քննարկում կազմակերպել:

Որպես տնային առաջադրանք հանձնարարվում է գրել փոքրիկ էսսե «Անհավասարության զոհը» վերնագրով՝ ցանկալի է, որ այն հիմնված լինի իրական փաստերի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդի պայմաններում մարդկության առջև ծառացել են համամարդկային խնդիրներ։ Այդ հիմնախնդիրները վերաբերում են համաշխարհային խաղաղությանը, էկոլոգիային, էներգետիկային, առողջությանը, գիտությանը, կրթությանը։ Այս խնդիրները հնարավոր է լուծել միմիայն համատեղ ջանքերի շնորհիվ։ Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ժամանակակից հասարակարգերում մեծ ուշադրության է արժանանում ճիշտ կրթության ապահովումը։ Կրթության միջոցով է փորձ արվում լուծել նաև սոցիալական հավասարության հիմնախնդիրը, որը մարդկանց հուզել է սկսած անտիկ ժամանակներից։ Մտածողների մի մասը հավասարության պրոբլեմը փորձել է լուծել օրենքների կամ «արդար» կառավարման միջոցով։ Մյուսները հարցի լուծումը կապել են «լուսավորյալ» միապետների հետ։

Սակայն պարզ է մի բան, որ հասարակության առաջընթացը հնարավոր է միայն առողջ հասարակության պայմաններում։ Պատահական չէ, որ Ֆրանսիական հեղափոխության կարգախոսն էր «Ազատություն, հավասարություն, եղբայրություն»։

Ընդգրկելով «Հավասարություն» թեման Հասարակագիտություն առարկայի դպրոցական դասընթացի մեջ՝ պետությունը փորձ է արել դեռ դեռահասության շրջանում շեշտադրել, կարևորել վերոհիշյալ թեման՝ այն համարելով զարգացման գրավականներից մեկը։

Այսպիսով, իմ հետազոտական աշխատանքի մեջ փորձ արեցի ներկայացնել «Հավասարության» կարևորությունը արդի աշխարհում, ցույց տվեցի դասի ուսուցման իմ փորձը, որը բավականին արդյունավետ էր և ուսանելի։ Հետազոտական աշխատանքի մեջ ցույց տվեցի , թե ինչպես կարելի է բացահայտել աշակերտների գիտելիքները հավասարություն և արդարություն թեմաների մասին։ Այն հնարավորություն ընձեռեց կառուցել դասը, հենվել աշակերտների նախնական գիտելիքների վրա; Ներկայացրեցի Հավասարություն և Արդարություն հասկացությունները, փորձելով այն դարձնել մատչելի, հիշվող և պիանի գիտելիք։ Ներկայացրեցի դասի ուսուցման առանձնահատկությունները, նորագույն մեթոդների կիրառությունը։

Դասի վերջնարդյունքում աշակերտը կբացատրի իրավահավասարությունը և կներկայացնի մարդու իրավունքների հիմքում ընկած արժեքները (արժանապատվություն, հավասարություն, հակախտրականություն, հանդուրժողականություն / ընդունում, հարգանք)։

Յուրացնելով թեման՝ աշակերտները կլինեն հասարակության լիիրավ անդամներ, կդառնան հայրենիքի համար պիտանի և արժանապատիվ քաղաքացիներ, կսովորեն տարբերել հավասարությունը, հավասարեցումից, կկարողանան ձեռք բերած գիտելիքները ծառայեցնել ի նպաստ սոցիալական հասարակության զարգացման։

Դասից հետո կատարելով դասի վերլուծություն՝ հասկացա , որ աշակերտներին շատ է հուզել այս թեման, քանի որ հենց իրենք կամ իրենց մերձավորը երբեմն դարձել են անհավասարաության զոհ։ Հաջորդ դասին ստուգելով տնային հանձնարարությունը և կատարելով դասահարցում՝ ակնհայտ դարձավ աշակերտների յուրացրած հետևյալ մտքերը.

1. Մարդիկ գտնվում են հավասարության մեջ
2. Սոցիալական հավասարության ապահովման առհավատչյան իրավահավասարությունն է
3. Հավասարություն նախ պետք է լինի դպրոցում, դասարանում պետք է իշխի հավասարության մթնոլորտը,
4. Ֆիզիկապես անհավասար լինելով հանդերձ, մարդիկ հավասար են օրենքի առջև

Թեմայի յուրացման արդյունքում կարող ենք արձանագրել, որ հավասարության գաղափարակիր աշակերտը դառնալու է ապագայի ակտիվ քաղաքացի։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խրապանյուկ Վ. Ն. -«Պետության և իրավունքի տեսություն», Երևան 1997, 435էջ
2. ՀՀ Սահմանադրություն, 2015թ, 44էջ
3. Ռոզենտալ Մ. Մ. «Փիլիսոփայական բառարան»-Երևան 1975թ., 467էջ
4. https://www.arlis.am/ 31.08.2022
5. https://hy.wikipedia.org/wiki/ Ունիվերսալական_հավասարություն 31,08,2022
6. Гарднер Г.-Структура разума: теория множественного интеллекта 2007г, 512էջ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա հասարակագիտության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Գարիկ Գրիշայի Մամուլյան

Վանաձորի թ. 13 ավագ դպրոցի հասարակագիտության ուսուցիչ

Հետազոտական աշխատանք

Թեմա «Ժողովրդավարության » թեմայի առանձնահատկությունները

Ղեկավար Գ. Էմինյան

Վանաձոր 2022

Բովանդակություն

1. Ներածություն 3
2. Ի՞նչ է ժողովրդավարությունը.....4
3. Ժողովրդավարության պատմություն.....6
4. Կատարյալ ժողովրդավարություն 8
5. Ժողովրդավարության ինստիտուտները 9
6. Օրենսդրական իշխանության կառուցվածքը 10
7. Ներկայացուցչական մարմինների ընտրական համակարգը 11
8. Եզրակացություն 14
9. Գրականություն 15

Ներածություն

Թեմայի արդիականությունը. Ժամանակակից աշխարհում քաղաքական համակարգի դասակարգման ամենատարածված չափանիշներից է ժողովրդավարական քաղաքական համակարգը՝ որպես հանրային իշխանության պատկանելության սկզբունք: ժողովրդավարական քաղաքական համակարգում հանրային իշխանությունը պատկանում է ժողովրդին, և ժողովրդաիշխանությունն իրականացվում է քաղաքակիրթ ընտրությունների և հանրաքվեների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Ժողովրդավարական քաղաքական համակարգին բնորոշ է հանրային իշխանության լիազորությունների «զսպում և հակակշռում», իրավական և սոցիալական պետություն, քաղաքացիական հասարակություն, մարդու իրավուքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն, բազմազանություն և բազմակարծություն, օրենքի գերակայություն և իրավահավասարություն, ազատ, արդար և թափանցիկ ընտրություններ, քաղաքական մեծամասնության և փոքրամասնության գործընկերություն տարրերը և այլն:

Հետազոտության նպատակ. ներկայացնել ժողովրդավարության պատմությունը և արդի մոտեցումները, վեր հանել ժամանակակից հասարակության պահանջմունքներից բխող ժողովրդավարական խնդիրները:

Հետազոտության խնդիրները. ուսումնասիրել իշխանության տարանջատման սկզբունքները, ներկայացնել ժողովրդավարական իշխանության իրսցման ձևերը և սկզբունքներիը, բացահայտել թեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները:

Ժողովրդավարություն

Հին հունարեն δημοκρατία ժողովրդի իշխանություն, δῆμος- ժողովուրդ և κράτος իշխանություն, քաղաքական ռեժիմ, որի հիմքում ընկած է գործընթացի կամ նրա որևէ մակարդակի վրա մասնակիցների հավասար մասնակցությամբ խմբային որոշումների կայացման ընթացակարգը: Չնայած այն հանգամանքին, որ տվյալ ընթացակարգն ընդունելի է առկա յուրաքանչյուր հասարակական կառուցվածքի համար, այնուամենայնիվ այսօր վերջինիս գոյության բաղադրիչը հանդիսանում է հենց պետության առկայությունը, քանի որ այն ենթադրում է իշխանության առկայություն: Այս դեպքում ժողովրդավարության սահմանումը հիմնականում սահմանափակվում է հետևյալ հատկանիշներով.

- Առաջնորդների նշանակումն իրենց ընտրողների կողմից տեղի է ունենում ազնիվ և մրցակցային ընտրությունների միջոցով:
- Ժողովուրդը հանդիսանում է լեգիտիմ իշխանության միակ աղբյուրը:
- Հասարակությունը հանուն իր շահերի բավարարման և ընդհանուր բարեկեցության իրականացնում է ինքնակառավարում:

«Ժողովրդավարությունը հասարակության յուրաքանչյուր անդամի համար պահանջում է մի շարք իրավունքների ապահովում: Ժողովրդի կառավարման հետ փոխկապակցված են մի շարք այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ օրինականություն, քաղաքական և սոցիալական հավասարություն, ազատություն, ինքնորոշման իրավունք, մարդու հիմնարար իրավունքներ և այլն» [1;58]:

Քանի որ ժողովրդի իշխանության իդեալը դժվարհասանելի է և ենթակա է բազմաթիվ սահմանումների, առաջարկվում էին բազմաթիվ պրակտիկ ընթացկարգեր: Մինչև XVIII դարն ամենատարածված ընթացակարգը եղել է ուղիղ ժողովրդավարությունը, երբ քաղաքացիներն իրենց որոշումների կայացման իրավունքն իրականացրել են ամիջականորեն՝ փոխհամաձայնեցման (կոնսենսուս) կամ փոքրամասնությանը մեծամասնությանը ենթարկվելու ճանապարհով: Ներակայցուցչական ժողովրդավարության պայմաններում նույն իրավունքն իրականացվում է իրենց կողմից ընտրված պատգամավորների կամ այլ պաշտոնատար անձանց միջոցով, որտեղ ընտրված կառավարողները կայացնում են

որոշումներ՝ հաշվի առնելով կառավարվողների նախասիրությունները, վերջիններիս հաշվետու լինելով իրենց գործողությունների համար:

Մի շարք ավտորիտար վարչակարգերն ունեցել են ժողովրդավարական կառավարման արտաքին հատանիշներ, սակայն այնտեղ իշխանության կրողը եղել է միայն մեկ կուսակցություն, իսկ վարվող քաղաքականությունը կախված չի եղել ընտրողների նախասիրություններից: XXI դարի վերջին քառորդում նկատվել է ժողովրդավարության տարածման միտում, որի խոչընդոտներից են եղել անջատողականությունը, ահաբեկչությունը, բնակչության արտագաղթը, սոցիալական անհավասարության աճը: Այնպիսի միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ, ՀԱՊԿ և ԵՄ ենթադրում են, որ պետության ներքին գործերի վերահսկումը, այդ թվում նաև ժողովրդավարության հարցերը և մարդու իրավունքների իրականացումը, մասնակիորեն պետք է լինեն միջազգային հանրության ազդեցության ոլորտում:

Ժողովրդավարության պատմություն

Պատմականորեն առաջինն անվանում են հենց նախնադարյան-համայնական ժողովրդավարությունը: Ժողովրդավարութունն առաջացել է Հին Հունաստանում և Հին Հռոմում,որի որոշակի տարրերն առկա են եղել միջնադարյան քաղաք-պետությունների ավանդույթներում և Եվրոպայի իշխանական ներկայացուցչական մարմիններում, ինչպես նաև նոր ժամանակի բրիտանական գաղութներում: Հնագույն քաղաք-պետությունների օրենսդիր, գործադիր և դատական իշխանության կրողը եղել է ժողովը, որի մեջ ընդգրկված են եղել բոլոր քաղաքացիները: Այն հնարավոր էր, քանի որ այդ քաղաքների բնակչությունը հիմնականում չէր գերազանցում 10000 հոգի, իսկ կանայք և ստրուկները զուրկ էին քաղաքական իրավունքից: Քաղաքացիներն ունեին գործադիր և դատական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունք, որոնք ընտրվելու սկզբունքով էին, իսկ մյուսները նշանակվում էին վիճակահանության սկզբունքով: Սակայն Հռոմեական Հանրապետության հնագույն ժողովրդավարական ինստիտուտները դադարեցրեցին իրենց գործունեությունը:

«Հարկ է նաև նշել, որ ժողովրդավարությունը հնագույն ժամանակներում համարվել է փիլիսոփայական մտորումների առարկա և հասկացությունը կարող էր ունենալ այնպիսի նշանակություն, որը բավականին տարբեր էր տվյալ բառի ժամանակակից նշանակությունից» [1;67]:

Պլատոնը նշել է, որ ժողովրդավարությունը նախանձող աղքատների իշխանություն է: Իր ութերորդ «Պետություն» գրքում նա պնդում էր, որ ավելորդ ժողովրդավարությունը հանգեցնում է բռնությանը: Նմանատիպ կարծիքի էր նաև Արիստոտելը՝ նշելով, որ ժողովրդավարությունը մեծամասնություն կազմող աղքատ քաղաքացիների կառավարում է՝ որոնք ցանկանում էին բավարարել իրենց անձնական շահերը: Նա նշում էր, որ նմանատիպ կառավարման ձևը հանգեցնում է ժողովրդավարության, քաղաքականության կատարյալ ձևի խեղաթյուրմանը:

Իսկ միջնադարյան Եվրոպայում ժողովրդավարական կառավարման հիմքում ընկած է եղել կրոնի գործոնը, մեծ նշանակություն է ունեցել նաև փորձի փոխանակումը, երբ միապետը փորձում էր արժանանալ տարբեր խավերի կողմից իր հանձնարարականների հավանությանը: Լուսավորության դարաշրջանը, Ամերիկյան

և Ֆրանսիական հեղափոխությունները խթանեցին մտավոր և հասարակական զարգացումը, հատկապես քաղաքացիական և քաղաքական հավասարության մասին պատերացումները: XIX դարից սկսած, ազատ ընտրությունների ճանապարհով ընտրված պատգամավորների ժողովները դարձան ժողովրդավարական կառավարման կենտրոնական ինստիտուտները: Մի շարք պետություններում ժողովրդավարությունը սկսեց ընդգրկել նաև ընտրական գործընթացի, խոսքի ազատության և իրավունքի գերակայության ոլորտներում, նշելով, որ այն հաստատում է մրցունակություն այն պետություններում, որտեղ հաստատված էր կոմունիստական կառավարման ձևը, որտեղ և հռչավում էր ժողովրդահավասարության գաղափարը, որը ենթադրում էր դասահավասարություն: Մինչև XX դարը ժողովրդավարությունը ենթադրում էր, որ լիիրավ քաղաքացիության կրողները կազմում են հասարակության մեծամասնությունը՝ սեփականատիրական արտոնակարգով, ռասայական, գենդերային /սեռական/ և ազգային հատկանիշներով, երբ մյուսները դուրս էին քաղաքական որոշումներ ընդունելու գործընթացից: Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում XVIII դարի վերջում ընտրական իրավունքից օգտվողների թիվը կազմում էր ընդհանուր բնակչության 2-5 %-ը, իսկ Մեծ Բրիտանիայում, ժամանակակից ժողովրդավարության հայրենիքում, կանայք միայն 1928 թվականից ունեին տղամարդկանց հետ հավասար ընտրական իրավունք, չեղարվեց բազմակի ընտրությունը, երբ ընտրողը ուներ մի քանի ձայնի իրավունք, իսկ ԱՄՆ-ում ԱՄՆ սեփականատիրական արտոնակարգը հիմնարար վերացավ 1964 թվականին:

«Չնայած ժողովրդավարության զարգացման միտմանը, այն այսօր էլ հանդիսանում է բազմաթիվ բանավեճերի առարկա: Քննարկումները տարվում են լիիրավ քաղաքացիների, ժողովրդավարական ներկայացուցչական ընթացակարգերի, ժողովրդավարության համար անհրաժեշտ պայմանների, ժողովրդավարական քաղաքականության թույլատրելի սահմանների, էթնիկ և մշակութային փոքրամասնությունների պաշտպանությամբ զբաղվող տարբեր հասարակաան կազմակերպությունների և սոցիալական խմբերի վրա ժողովրդավարական սկզբունքների տարածման, ժողովրդավարության մեթոդաբանության շուրջ» [2;124-125]:

Այսօր ժողովրդավարական ռեժիմի հրամայականներն են սոցիալական անհավասարությունը, ահաբեկչությունը, անջատողականությունը և բնակչության արտագաղթը: Այնպիսի միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ, ՀԱՊԿ, ԵՄ և այլն, ենթադրում են մասնակից պետությունների ինքնիշխանության մասնակի սահմանափակում, որպեսզի միջազգային հանրությունը կարողանա ազդեցություն ունենալ առանձին պետությունների կողմից վարվող քաղաքականության վրա, հատկապես մարդու իրավունքների պաշտպանության ասպարեզում, սակայն հարկ է նաև նշել, որ վերոնշյալ միջազգային կազմակերպությունն ունեն համամատաբար ավելի քիչ ժողովրդավարաան ինստիտուտներ:

Կատարյալ ժողովրդավարություն

«Կատարյալ ժողովրդավարություն» հասկացությունն ունի երկու նշանակություն: Համաձայն առաջինի՝ գաղափարն ընդունվում է որպես հնարավոր համակարգերից ամենակատարյալը: Երկրորդ նշնանակությունը ենթադրում է ազատական ժողովրդավարության ինստիտուտների առկայությունը ինչպիսին է այլ կառավարման ձևերի ժողովրդավարությունը:

Այդ բոլոր հարցերը ենթադրում են պատասխանների լայն շրջանակ: Օրինակ, համաձայն Ռոբերտ Դալի, ժողովրդավարության գաղափարը ենթադրում է որոշակի հանրության առկայություն (դեմոս), որտեղ յուրաքանչյուր անդամ հավասարաչափ իրավասու է լինել մասնակից այդ հասարակության կառավարման գործընթացին, ունի անհրաժեշտ գիտելիքներ այն մասին, թե ինչպիսի քաղաքական ընտրությունն է թույլատրում լավագույնս պաշտպանել իր շահը: Քաղաքական որոշումների կայացումը՝ ելնելով վերոնշյալ սկզբունքներից, պահանջում է տվյալ հասարակության բոլոր քաղաքացիների հավասար և արդյունավետ հնարավորությունների առկայություն:

Ժողովրդավարական հիմնարար մոդելների խնդիրը քաղաքացիների գործունեության որոշման շրջանակի որոշումն է, որոնց վրա տարածվում է քաղաքական հավասարությունը, բայց նման դեպքում խոսքն այն հասարակության

մասին է, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի ունի պետությամբ կառավարելու հավասար հնարավորություններ, սակայն համաձայն ժամանակակից մետեցումների, բոլորը կամ մեծամասնությունը պետք է լինեն լիրավ քաղաքացիներ: Համաձայն Կարլ Փոփերի, ժողովրդավարությունն իրենից ներկայացնում է բաց հասարակություն, որտեղ բոլոր անդամները քննադատորեն են տրամադրված թաբի հանդեպ՝ հիմնվելով անձնական մտավոր ունակությունների և քննադատական մտածողության վրա, ինչպես նաև ելնելով այն պայմանավորվածություններից, որոնք ձեռք են բերվել համատեղ քննարկումների արդյունքում:

Ժողովրդավարության ինստիտուտները

Տարբեր պետությունների ժողովրդավարության իրականացման մոտեցումների համեմատությունն ինքնին յուրօրինակ է: Դրա հետ մեկ տեղ հնարավոր է նաև իրականացնել բազմաթիվ դասակարգումներ՝ ելնելով իշխանության գերիխող ճյուղից, իշխանության տարածքային աստիճանակարգից, գործող կուսակցությունների քանակից և այլն: Հետագա ընդհանրացումը հնարավորություն է տալիս բացահայտել այն հիմնարար քաղաքական ինստիտուտները, որոնք անհրաժեշտ են կատարյալ ժողովրդավարության հաստատման համար:

«Ժողովրդավարության պրակտիկ իրականացումը կախված է մի շարք պայմաններից, հատկապես բնակչության թվաքանակից և տարածքի չափից» [3;11]: Օրինակ, խոշոր վարչական միավորումներն ի տարբերություն փոքր միավորների իրենց կազմով առավել միատարր են և քաղաքաան կյանքին մասնակցելու համար ունենում են լավագույն հնարավորություններ: «Առավել սեղմ հանրություններում հնարավոր է կազմակերպել արյունավետ բանավեճեր և ներայացնել այնպիսի հնարավորություններ, որոնց միջոցով քաղաքացին կարող է անմիջականորեն ազդել վարվող քաղաքականության վրա: Դրա համար, իրենց չափերով փոքր կառույցներին առավել հեշտ է բավարարել ժողովրդավարացման չափանիշներով» [2;198]:

Սակայն հարկ է նաև նշել, որ բնակչության թվաքանակի նվազմամբ ցածրանում է նաև իշխանության իրական ծավալը և որոշումների կայացման հնարավորությունները, հատկապես այն հարցերի շուրջ, որոնք առնչվում են պաշտպանության և տնտեսական ոլորտների հետ: Այս հակասության լուծման

ճանապարհներից մեկի հիմքում ընկած է տարբեր մակարդակների միավորներում վարչական և հասարակական ուղղություններում ազդեցության ոլորտների բաժանման սկզբունքը՝ քաղաքների և շրջանների բաժանման ճանապարհով, որը հնարավոր է հաստատել կառավարման ներկայացուցչական ձևերի ներդրման արդյունքում:

Օրենսդրական իշխանության կառուցվածքը

Պառլամենտական (խորհրդարանական) ժողովրդավարություն: Կառավարությունը նշանակվում է օրենսդրական մարմնի կողմից: Կառավարությունը և կառավարության ղեկավարը (վարչապետը) նույնպես կարող են հաշվետու լինել պետության ղեկավարին (միապետին, նախագահին կամ որևէ այլ հատուկ մարմնին): Պառլամենտական հանրապետությունում պետության ղեկավարը պարբերաբար ընտրվում է պառլամենտի կողմից կամ այդ պաշտոնը համատեղելիության կարգով զբաղեցնում է կառավարության ղեկավարը: Նախագահական հանրապետության պայմաններում նախագահն ընտրվում է ժողովրդի կողմից և հանդիսանում է գործադիր իշխանության ղեկավարը: Գոյություն ունեն նաև խառը համակարգեր: Միապալատ պառլամենտ: Նորմատիվ ակտերն ընդունվում են հանդիպումների ժամանակ, կառավարության բոլոր անդամների մասնացությամբ: Երկպալատ պառլամենտ: Գործադիր ժողովը կազմված է երկու պալատներից, որոնք ձևավորվում և գործում են առանձին-առանձին: Մեկ նորմատիվ ակտը կարող է արժանանալ միայն մեկ պալատի հավակնությանը, իսկ մյուսը՝ երկու պալատների հավակնությանը:

Ներկայացուցչական մարմինների ընտրական համակարգը

Մեծամասնական (մաժորիտար) ընտրական համակարգ: Տարածքը բաժանված է շրջանների, որոնցից յուրաքանչյուրն օրենսդրական ժողովում ունի մեկ ներկայացուցչի իրավունք: Այդ պատգամավորը դառնում է այն թեկնածուն, ով հավաքում է ձայների մեծամասնությունը:

Համամասնական ընտրական համակարգ. Քաղաքական կուսակցություններն օրենսդրական ժողովում ստանում են այնքան տեղեր, որոնք համամասնական են իրենց կողմից հավաքած ձայների քանակին:

Խմբային ընտրական համակարգ: Բնակչության որոշակի խմբեր առաջադրում են իրենց պատգամավորներին՝ համաձայն նախօրոք քննարկված քվոտայի:

Երկկուսացական համակարգ: Քաղաքական դաշտում գերիշխում են երկու խոշոր կուսակցություններ;

Բազմակուսակցական համակարգ: Կառավարության նշանակմանը հիմնականում հաջորդում է իշխող կոալիցիայի (դաշինքի) ձևավորումը՝ երկու կամ ավելի կուսակցություններից, որոնք առաջադրվում են օրենսդրական ժողովին:

Այսօր մի շարք ազատական ժողովրդավարության համար բնորոշ են հետևյալ ինստիտուտների առկայությունը

- Ընտրովի պետական պաշտոններ: Ժամանակակից ժողովրդավարությունները ներկայացուցչական են, համաձայն հիմնական օրենքի՝ նորմատիվ ակտերի և որոշումներ իրականացման հանդեպ անմիջական վերահսկումն իրականացվում են ժողովրդի կողմից ընտրված անձինք:
- Ազատ, արդար և հաճախակի անցկացվող ընտրություններ, որին իրավունք ունի մասնակցել յուրաքանչյուր քաղաքացի՝ (որպես ընտրող և որպես թեկնածու), համադրելով քաղաքացիների և իրենց միավորումների հետ շարունակական բաց քաղաքական մրցակցությունը:
- Կառավարության պատրաստակամությունը: Տարվող քաղաքականությունը կախված է ինչպես ընտրությունների արդյունքներից, այնպես էլ ընտրողների նախասիրություններից:

- Խոսքի ազատություն: Քաղաքացիներն կարող են ազատ արտահայտել իրենց կարծիքը, քննադատել իշխանությանը, քաղաքական կուսակցությանը, հասարակական և տնտեսական կարգը և գերիշխող գաղափարախոսությունը:
- Տեղեկատվության այլընտրանքային և անկախ աղբյուրներից օգտվելու կարողություն: Քաղաքացիներն ունեն այլ քաղաքացիներից, ՁԼՄ-ներից, գրքերից և այլ աղբյուրներից տեղեկատվություն փնտրելու և ստանալու հնարավորություն: Տեղեկատվության այլընտրաքային աղբյուրները պետք է հասանելի լինեն և վերահսկողության չենթարկվեն որևէ քաղաքական խմբի կողմից:
- Զարգացած քաղաքացիական հասարակություն, հասարակական կազմակերպությունների ինքնավարություն և վերջիններիս պետական ինստիտուտների վրա ազդելու ունակություն: Քաղաքացիներն իրավասու են հաստատել հարաբերականորեն անկախ խմբեր, այդ թվում նաև քաղաքական ուսակցություններ:

Այն քաղաքական համակարգերը, որոնք ներառում են վերոնշյալ ինստիտուտներն անվանվում են «Պոլիարխիա»: Պոլիարխիայի կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն ենթադրում է քաղաքական մրցակցություն, քաղաքականության մեջ մասնակցային իրավունք և դաշնակցային կառավարում (կոալիցիա): Նմանօրինակ կառավարումը հակադիր է բռնատիրական կառավրամանը, երբ քաղաքական վեկտորի ընտրության ժամանակ գերիշխող է դառնում միայն մեկ խմբի նախասիրությունը: Կարևոր է նաև մրցակցող ընտրանու պահանջարկը բնակչության լայն խավերի աջակցությանն արժանանալու համար, ինչը հիմնականում բնորոշ է օլիգարխիային: Ժան Բոդրիյարը ենթադրում է, որ ժամանակակից ժողովրդավարական հասարակությունն իրենից ներկայացնում է սպառողի հասարակություն, որտեղ հավանական է իրական զգացողությունների, մշակույթի, իրական արժեքների բացակայություն, որտեղ մարդկային կյանքի իմաստավորումը գնում է դեպի յուրաքանչյուր գնով կապիտալիստական տնտեսության աճի որոշմանը և գլոբալացման արդյունքում առաջացած ժողովրդավարությունը վերածվում է ապրանքի տեսականու, որը որպես խնդիրների լուծման միջոց բարիությամբ փաթեթավորված վաճառվում է այլ մշակույթներին, որի պարտադրված լինելու դեպքում առաջացնում է մերժողական դիրքորոշում: Որոշ

հետազոտողներ պնդում են, որ ժողովրդավարության առաջխաղացումը միջազգային տնտեսական գլոբալիզացիայի հետևանք է, որը ևս հանգեցնում է միջազգային մրցացուցյանը, արտագաղթի ուժեղացմանը, ինպչպես նաև զարգացած պետություններում աշխատավորների սոցիալական իրավունքների ուժեղացմանը: Մի շարք հեղինակներ այն կարծիքին են, որ ժողովրդավարական սկզբունքներն անհրաժեշտ է զարգացնել ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական դաշտում: Տնտեսական ժողովրդավարությունն ուսումնասիրվել է Բերնշտեյնի և իր հետևորդների աշխատություններում: Այն որոշում է որպես չափորոշիչների հավաքածու, որոնք անհրաժեշտ են տնտեսական իշխանության բաշխման ժամանակ՝ անորոշությունների շտկման համար: Ժողովրդավարության ժամանակակից տեսության մեջ առկա են երեք հիմնական ուղղություններ՝ ֆենոմենոլոգիական, բացատրական և նորմատիվ: Ֆենոմենոլոգիական տեսությունը բնութագրում և դասակարգում է առա ժողովրդավարական համակարգերը: Բացատրական տեսությունը հաստատման ժամանակ փորձում է հաստատել թե ում նախասիրություններն են ժողովրդավարության հաստատման ժամանակ որևէ դեր խաղալու:, ինչպիսին են լինելու որոշումների կայաման մեխանիզմերը, ինչպես խուսափել անցանալի հետևանքներից: Իսկ նորմատիվ տեսության ժամանակ առարկա է հանդիսանում ժողովրդի իշխանության էթիկական կողմը՝ երբ և ինչու է ժողովրդավարությունը ցանկալի հենց բարոյականության տեսակետից, ինչպիսի սկզբունքներ պետք է լինեն ժողովրդավարության ինստիտուտների հիմքում, ինչպիսիք են ժողովրդավարական հասարակություններում քաղաքացիներից ողջամիտ սպասումները: Այս տեսության մեջ կարևոր ներդրում են ունեցել Արիստոտելը, Ջոն Լոքը, Դեվիդ Յումը, Շառլ Լուի Մոնտեսքյոն, Ժան-Ժակ Ռուսոն, Ջոն Ստյուարդ Միլլը, Ջոն Դյուին, Յուրգեն Հաբերմասը, Ջոն Ռոլզը, Հանա Արենդտը և այլ մտածողները: Ժողովրդավարությունն իրենից ոչ միայն ժողովրդական կառավարում է ներկայացնում, այլ նաև մարդու իրավունքների համակարգ: Այդ իրավունքների խախտումը կասկածի տակ է դնում կառավարման ժողովրդավարությունը: Ժողովրդավարությունը պահանջում է կայուն պետության առկայություն որպես լեգիտիմ ուժի օգտագործման միակ աղբյուր:

Եզրակացություն

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ ժողովրդավարությանը բնորոշ առանձնահատկություններն են՝

1.Իշխանությունները բաժանված են անկախ թևերի՝ օրենսդիր, գործադիր, դատական, որոնցից յորաքանչյուրը իրականացնում է հստակ ֆունկցիա:

2.Քաղաքացիները օժտվածեն լայն իրավունքներով և ազատություններով՝ Ինչը արգելված չէ օրենքով, թույլատրելի է: Քաղաքացիները ազատ կարող են իրենց կարծիքը արտահայտել իշխանությունների վարած քաղաքականության շուրջ:

3.Ազատ գործում է ընդդիմությունը և օգտվում է քաղաքական բոլոր իրավունքներից և ազատություններից;

4.Գործում է բազմակուսակցական համակարգ:

5.Բանակը և հատուկ ծառայությունները գործում են օրենքի շրջանակներում և ծառայում են պետության ներքին և արտաքին անվտանգությանը:

6.ԶԼՄ-երը ազատ են գրաքննությունից, ազատ քննադատում են իշխանություններին, երբ նրանք վատ են կատարում իրենց սոցիալական պարտականությունները:

7.Տնտեսության մեջ առկա է սեփականության տարբեր ձևեր՝ պետական, մասնավոր, կորպորատիվ:

8.Ժողովրդավարության պայմաններում հնարավոր է ունիտար-միակազմ և ֆեդերատիվ-կոնֆեդերատիվ պետության ձևեր: Ունիտար պետության ժամանակ տեղական իշխանությունները ավելի մեծ իրավունքներով են օժտված:

9.Ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանված են լայն իրավունքներով:

Գրականություն

1. Խաչատրյան Ս. Պետրոսյան Ս. Արնաուդյան Ա. Զոհրաբյան Ա. Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր: Ձեռնարկ մանկավարժների համար: Երևան 2005, Տիգրան Մեծ 396 էջ:
2. Խաչատրյան Ս. Պետրոսյան Ս. Տեր-Մկրտչյան Թ. Խախամյան Տ. Ավանեսյան Վ. Քաղաքացիական կրթություն. Ժողովրդավարության հիմնարար արժեքներ: Ուսումնական ձեռնարկ 8-9 դասարանների համար: Երևան 2005, Էդիտ պրինտ, 211 էջ:
3. Մասնակցային ժողովրդավարություն: Ձեռնարկ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիա, Երևան 2015, Ասողիկ, 149էջ:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթականատեստավորմանենթակահասարակագիտությանուսուցիչներիվերապատրաստմանդասընթաց

Մարիա Շահնազարյան

Ջրաշենիմիջնակարգդպրոցիհասարակագիտությանուսուցչուհի

Հետազոտականաշխատանք

Թեմա

«Գնահատմանառանձնահատկություններըքաղաքացիականկրթությանուսուցմանժամանակ »

ՂեկավարՌ. Վարդանյան

Վանաձոր 2022

Բովանդականություն

1. Ներածություն:
2. Ի՞նչ է գնահատումը:
3. Գնահատմանայլընտրանքայինտեսակները:
4. Ուսուցիչըորպեսգնահատող:
5. Եզրակացություն:
6. Գրականություն:

Ներածություն

Հոդվածում անդրադարձ է կատարվել գնահատման տեսակների, նպատակների, գործառույթների շուրջ, ներկայացվել է գնահատման առանձնահատկությունները հասարակագիտական առարկաների արդյունավետ դասավանդման ընթացքում, առանձնացվել է գնահատման մանկավարժահոգեբանական պահանջների կատարման անհրաժեշտությանը և ուսուցչիկողմից գնահատելու կարողությունների զարգացմանը:Գնահատումը համարվում է ուսումնառության ամենից բարդ մակարդակը, որովհետև գնահատման ժամանակ սովորողներից պահանջվում է ընդունված կարծիքից բացի օգտագործել սեփական կարծիքը, կատարել եզրակացություններ, դատել որևէ երևույթի, իրադարձության, գործունեության նշանակության կամ արժեքաբանական կողմի մասին:

Մեր նպատակը ամենևին էլ գնահատման տեսակները կամ բաղադրիչները ներկայացնելը չէ, որովհետև դրանք պարզաբանված են միավորային գնահատման պաշտոնական համակարգում, այլ գնահատման այն հնարավոր ձևերի և միջոցների մասին քննարկումների ծավալումն է, որոնք սակավ են օգտագործվում ուսուցիչներիկողմից՝ հատկապես, հասարակագիտական առարկաների բովանդակության, ուսուցման մեթոդների և գնահատման ուսումնասիրման ժամանակ:

Գնահատման առանձնահատկությունները քաղաքացիական կրթության ուսուցման ժամանակ

Գնահատումը տեղեկատվություն ստանալու, հավաքելու, կուտակելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ամբողջացնելու և վերահսկելու գործընթաց է: Գնահատումը ներառում է ամենօրյա գործունեության, իրական կյանքում յուրացրածի մասնակի կիրառությունների, որոշակի ձեռքբերումների դիտարկում, ինչպես նաև նյութի յուրացումը ստուգող չափորոշչային պահանջներ [1, էջ 12]:

Գնահատումը որակական(մակարդակային) և քանակական(միավորային) դրսևորումներ ունի: Գնահատվում են ինչպես գործընթացները (ինչ-որ բան ստեղծելու, նախատեսելու, իրականացնելու), այնպես էլ արդյունքները: Կարելի է առանձնացնել գնահատման երկու տեսակ՝ **ընթացիկ** և **ամփոփիչ:** Ընթացիկ գնահատումը կատարվում է ամբողջ ուսման ընթացքում և նրա արդյունքների հիման վրա կազմակերպվում է բարելավված ուսուցում: Այն ունի ուսուցողական բնույթ, իսկ ամփոփիչ գնահատումը կատարվում է ուսումնառության վերջում և նպատակ ունի ամփոփել արդյունքները: Հնարավոր է նաև գնահատման այլ տարբերակներ՝

- **Վարկանիշային գնահատում**(սովորողները միավորներ են հավաքում իրենց պատասխանների, հաճախումների, տետրը վարելու, ակտիվության և ալնի համար), այդ միավորները գումարվում են և դառնում սովորողի համար «վարկանիշ»:
- **Պարգևներիմիջոցով գնահատում** տարրական դասարաններում որպես պարգևներ օգտագործվում են փոքր հուշանվերներ, մատիտ, քաղցրավենիք, սակայն դա երբեմն կարող է հանգեցնել գժտությունների և վեճերի, մի քանիսի ինքնասիրությունը շոյելումիջոցովմյուսներին նեղացնելով:
- **Խոսքային գնահատում** (կեցցես, գերազանց է, հետաքրքիր դիտողություն է, անհաջող լրացում է և այլն): Ուսուցիչըմիշտ օգտագործում է այսպիսի գնահատականներ, սակայն դա հիմնականում դիտարկվում է որպես օժանդակ գնահատական:
- **Ստուգարքային գնահատում,** երբ ընթացիկ գնահատում չի կազմակերպվում, սակայն թեմայի կամ բաժնի վերջում իրականացվում է ընդհանուր հարցում, և յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է ուսումնական նյութի որոշակի հատվածի վերաբերյալ իր գիտելիքները:

- **Գնահատման սանդղակ (ռուբրիկ) -** առաջացել է լատիներեն «rubrica terra» արտահայտությունից, որը նշանակում է կարմիր հող: Հազարամյակներ առաջ այն օգտագործել են խիստ կարևոր և արժեքավոր երևույթնշելու համար: Այսօր էլ սկզբնաղբյուրի իմաստը պահպանվել է, իսկ ավելի պարզ ասած՝ ռուբրիկը կազմված է գնահատման հաստատուն սանդղակից և դրա կետերից յուրաքանչյուրի կատարման որակը բնութագրող առանձնահատկությունների մի ամբողջ շարքից: Ռուբրիկները խթանում են ուսումնառությունը՝ ըստ նախօրոք սահմանված չափորոշիչների սովորողներին առաջարկելով առաջադիմության հստակ նպատակներ [2, էջ 17]:

Ուսումնական հաստատություններում այսօր գործող գնահատման համակարգը հնարավորություն է տալիս գնահատելու սովորողներիկողմից առաջադրանքների կատարման արդյունավետությունը, այսինքն՝ նրանց աշխատանքի վերջնական արդյունքը: Աշխատանքի արդյունքների վերջնական գնահատումը շատ կարևոր է, սակայն հարկավոր է հիշել, որ գոյությունունեն գնահատման ուրիշ տարրեր, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու փոփոխությունների գործընթացը, անհատական մոտեցումը, մոտիվացիան և այլն: Այդ տարրերից կարելի է առանձնացնել հետևյալները՝

- սովորողների ակտիվությունը, սովորելու շարժառիթները, համառությունը, պատրաստակամությունը,
- աշխատասիրությունը, երկար ժամանակ աշխատելու կարողությունը,
- ստեղծագործական մոտեցումը, նորմոտեցումներ կիրառելու ցանկությունը, անձնական գործողություններըվերլուծելու կարողությունը և այլն:

Հասարակագիտական առարկաների ուսումնառության ժամանակ գնահատումը որպես ուսումնական գործընթաց ունի հետևյալ նպատակները.

- բարելավել հանրակրթության բովանդակային գործունեության արդյունքները,
- վերահսկել սովորողների հումանիտար գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման աստիճանը,
- չափել սովորողի ուսումնառության գործընթացները և արդյունքները,
- չափել ոչ միայն ուսումնառության, այլև ցանկացած գործունեության արդյունքները և վերագնահատել դրանք,
- ձևավորել, զարգացնել, վերահսկել սովորողների արժեքային որակները,
- բացահայտել յուրաքանչյուր սովորողի և ուսումնական հաստատության կողմիցհասարակագիտական առարկաների չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

Նկատի ունենալով ուսուցման հասարակագիտական առարկաների ժամանակակից պահանջները՝ գնահատման նոր համակարգը ենթադրում է ըստ փուլային գնահատման երեք տեսակի գնահատում: Մասնավորապես, առաջին փուլում կամ ուսումնառության սկզբում իրականացվում է հայտորոշիչ գնահատում, երկրորդ փուլում կամ ուսումնառության ընթացքում՝ ձևավորող, իսկ երրորդ փուլում՝ ամփոփիչ գնահատում: Մեր նպատակը ամենևին էլ գնահատման տեսակները կամ բաղադրիչները ներկայացնելը չէ, որովհետև դրանք պարզաբանված են միավորային գնահատման պաշտոնական համակարգում, այլ գնահատման այն հնարավոր ձևերի և միջոցների մասին քննարկումների ծավալումն է, որոնք սակավ են օգտագործվում ուսուցիչներիկողմից՝ հատկապես, հասարակագիտական առարկաների բովանդակության, ուսուցման մեթոդների և գնահատման ուսումնասիրման ժամանակ:

Իրական գնահատում- սա գնահատման այն եղանակն է, երբ սովորողներին առաջարկվում է իր յուրացրած գիտելիքները կիրառելով, կատարել այնպիսի առաջադրանք, որը վերցված է իրական կյանքին նման իրադրություններից: Դա կարող է լինել պլանավորելու, շարադրելու, ապացուցելու, սեփական դիրքորոշումները հիմնավորելու առաջադրանք՝ կապված տեղական սոցիալ-տնտեսական, մշակութային, կրթական որևէ կոնկրետ խնդրի հետ:

Ձեռքբերումների վրա հիմնված գնահատում– սա իրական գնահատման ընդլայնված տեսակն է, որը հնարավորություն տալիս ուսուցչին հետևելուսովորողին առաջադրանքների կատարման ժամանակ և գնահատելու նրան՝ հիմնվելով նրա՝ սեփական գիտելիքները և հմտությունները ներդնելու ճանապարհով կատարված առաջադրանքի արդյունքը: Սովորողին կարող են, օրինակ, հանձնարարել ստեղծելնորնյութի մասին տեսահոլովակ կամ լրագրական տեղեկույթ և այլն:

Արժեքային գնահատում – սա դատողություն է սովորողի կատարած առաջադրանքի որակի մասին: Այսպիսի դատողությունները կարող են տարբեր ձևով մեկնաբանվել: Գնահատումը պահանջում է ուսուցման մեթոդների և ուսուցանվող նյութի հանգամանալից ընտրություն: Գնահատումը հիմնվում է սովորողիկողմից կատարված առաջադրանքի որակի մասին դատողությունների վրա:

Չափում – Սա քանակական վերլուծության պարբերական գործընթաց է, որի ժամանակ առանձին առաջադրանքների կատարման համար սովորողներին գնահատականներ են նշանակվում, և սրանց հիման վրա որոշում ուսումնական նյութի յուրացման մակարդակը: Այս երկու գործընթացներն էլ՝ ձևական(քանակական) և ոչ ձևական, կարող են գործածվել սովորողներիկողմիցնյութի յուրացման որակական աստիճանը պարզելու նպատակով: Չափումը ներառում է թեստային

աշխատանքների անցկացում և արդյունքների ամփոփում, մինչդեռ արժեքային գնահատումը հիմնվում է սովորողիկողմից ստացված միավորների վերլուծության ու արժևորման վրա:

Ինքնագնահատում - անվանում են այն հատուկ գործողությունները, որոնցառարկան մարդու սեփական հատկություններն ու վիճակներն են՝ որպես գործունեության և շփման սուբյեկտ: Սովորողի համար ինքնագնահատումը կարևոր է բոլոր ուսումնական առարկաների ընթացքում: Ինքնագնահատումը իրականացվում է երեք փուլով՝ նախնական ինքնագնահատում, առաջադրանքի ինքնուրույն կատարում, ինքնուրույն աշխատանք:

Թղթապանակ – օգտագործվում է գրավոր աշխատանքների ստուգման ժամանակ: Գործունեության վրա հիմնված գնահատման համակարգում թղթապանակը աշակերտների կարողությունների վկայությունն է բովանդակային և ամբողջ կյանքի ընթացքում ուսումնառության չափորոշիչներին համապատասխանելու իմաստով: Թղթապանակով գնահատման համար ընդունված է չափորոշիչները բաժանել ըստսովորողի ձեռքբերումների: Օրինակ՝ սովորողը կարող է ընտրել այնպիսի շարադրություն, ուր առավելագույնը կկարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցության շրջանակում իր ընդհանուր իմացությունը: Նա կարող է թղթապանակի մեջ ընդգրկել համայնքային որևէ խնդրի մասին իր նկատառումները՝ ցուցաբերելով համագործակցելու իր կարողությունները:[3, էջ 230]:

Երբ նկատի ենքունենում ձեռքբերումների վրա հիմնված առաջադրանքների մշակումը, ապա այս հարցում ուսուցիչների առաջին գործառույթը դառնում է այն, թե տվյալ առարկայի բովանդակության վերաբերյալ ինչըպետք է ստուգել և ինչպիսի հանձնարարություններ պետք է կազմել: Հանձնարարություններ կազմելու գործընթացը ենթադրում է.

- առարկայի խոր իմացություն,
- գնահատման սկզբունքների և ձևերի իմացություն,
- առաջադրանք ձևակերպելու հմտություններ և դրանց գնահատման սանդղակներ կազմելու և միավորները հաշվարկելու հմտություններ,
- դիտարկում:

Հանձնարարություններ կազմելու գործընթացը ուսուցիչներից պահանջում է հետևյալ մոտեցումները՝

- գնահատել կարևոր, էական բովանդակությունը,
- գնահատել միայն այն գիտելիքներնու կարողությունները, որոնք բխում են անցած նյութից,

- առաջադրանքները պետք է ձևակերպել հստակ և հակիրճ: Դրանք կազմելիս հարկավոր է օգտագործել տարբեր մեթոդներ: Առաջադրանքները չպետք է բառացիորեն կրկնենուսուցչի տված հանձնարարությունները, որպեսզի դրանով սովորողներինչմղեննյութի մեխանիկական սերտման:

Առաջադրանքների գիտական ձևակերպումը կամ թեստերի կազմումը այսօր ուսուցիչների համար (հատկապես փորձառություն չունեցող) ահավոր դժվարություն է ներկայացնում: Ձեռք բերված կամ հրամցված թեստերն էլ հիմնված չեն դասավանդման այն մեթոդների վրա, որոնքօբյեկտիվ են արտացոլում ինչպես տվյալ առարկայի բովանդակությունը, այնպես էլ գնահատման առանձնահատկությունները: Լորրի Ա. Շեպարդը, որ գնահատման մասնագետ է, գրումէ.« Դպրոցներումօբյեկտիվթեստերի առատությունը ազդել է ոչ միայն այս կամ այն առարկայի ուղղությամբ գիտելիքներիձեռք բերման վրա, այլև արդարության սկզբունքի և ապացույցների կարծիքի վրա» [4]:

Սովորաբար գնահատումը ենթադրում է հետևյալ գործառույթները.

- վերահսկման,
- դաստիարակչական ,
- ուսուցանող

Սովորողների համար կարելի է առանձնացնել գնահատման հետևյալ գործառույթները.

- խթանող,
- կողմնորոշող,
- կարգավորող,
- դաստիարակող,
- վերաբերմունք դրսևորող,
- սոցիալական [5. էջ 7]:

Գնահատման գործընթացում հաճախ ուսուցչի առաջ հառնում են բարդ խնդիրներ, որոնց պատասխանելը այսօր հրամայական պահանջ է դարձել:

Ի՞նչ չափանիշներով պետք է գնահատել սովորողների բանավոր պատասխանները:

Ի՞նչպես գնահատել յուրաքանչյուր աշակերտին խմբային աշխատանքի ժամանակ:

Որո՞նք են գնահատման այլընտրանքային տարբերակները:

Ի՞նչըպետք է անպատճառ գնահատվի:

Հասարակագիտական առարկաների գնահատականը ինչքանո՞վ է կապված սովորողների աշխարհայացքի հետ:

Պե՞տք է արդյոք տառասխալների համար իջեցնել աշակերտի գնահատականը:

Գնահատման կարևոր խնդիրներից մեկը նրա ինքնանպատակ լինել-չլինելու հարցն է: Գնահատականը պետք է նպատակաուղղված լինի սովորողիինչպես կրթական, այնպես էլ անհատական կարողությունների զարգացմանը և ոչ թե կազմակերպվի միայն գնահատական նշանակելու համար:

Գնահատման գործընթացի հիմնական գործող անձը, անշուշտ ուսուցիչն է, սակայն գնահատման արդյունքները կապվում են գլխավորապես սովորողներիհետ, ուստի նրանց կարող ենք գնահատման գործընթացի ու արդյունքի հիմնական սպառողներ համարել: Ներկայումս ուսուցիչները գրեթե յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին տարբեր առարկաների գծով գնահատման գործիքներինոր փաթեթներ են ստանում և պարտավոր են հասկանալ այդ միջոցների համապատասխանությունը, ուստի կարիք ունեն գնահատման ոլորտում հատուկ նախապատրաստության, քանի որ կրթության այս բնագավառը միակողմանի ութերի է եղել: Այստեղ մենք նկատի ունենք խորհրդային դպրոցը, երբ գնահատման իմաստը բովանդակային գիտելիքների ծավալը որոշելն էր և այն աշակերտները, տեսական լավ պատրաստվածություն ունեին, համարվում էին լավագույները, սակայն իրական կյանքում նրանք շատ հաճախ անհաջողության էին մատնվում: Մինչդեռ ուրիշները, որ դպրոցում գնահատվելու հույս անգամ չունեին, շատ հաջողակ էին լինում հետագա կյանքում: Բազմաթիվ լավ ուսուցիչներ հասկանում էին, որ գնահատումը պետք է լինի բազմակողմ և ամբողջական՝ ներառելով ոչ միայն տեսական գիտելիքները, այլ նաև կարողությունները, ինչպիսիք են ճնշմանը դիմանալը, ինքնակառավարումը, վստահությունը սեփական ուժերին, սեփական դիրքորոշումը և այլն:

Ե.Դ. Բորժովիչը իր « Ուսումնական գործընթաց, վերահսկողություն, ախտորոշում, շտկումներ, գնահատում» գրքում ներկայացնում է գնահատմանը ներկայացվող հետևյալ մանկավարժական պահանջները [6, էջ 221]:

ա. Սովորողին գնահատելիս պետք է հիմնվել անհատական համեմատական կողմնորոշման վրա՝ սովորողի առաջընթացը, զարգացման առանձնահատկությունները, ուսումնական գործընթացի յուրահատկությունները համեմատել ոչ թե մյուսսովորողների, այլ հենցիրհետ:

բ. Գնահատելիս անհրաժեշտ է առաջնորդվել լավատեսական մոտեցմամբ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողից ակնկալվող ուսումնական հաջողությունները և գնահատել նույնիսկ ամենափոքր դրական առաջընթացը:

գ. Գնահատականը օգտագործել որպես հետադարձ կապ, որն անհրաժեշտ է սովորողի աշխատանքի արդյունավետությունը գնահատելու, այլ ոչ թե նրան խիստ վերահսկողության տակ առնելու կամ ճնշելու համար:

դ. Պետք է գնահատել ոչ միայն վերջնական արդյունքը, այլ ուսումնական գործընթացում սովորողի աշխատանքը, որը կարելի է կազմակերպել բովանդակային ծավալուն գնահատականի օգտագործմամբ:

ե. Սովորողներին անհրաժեշտ է մասնակից դարձնել գնահատման գործընթացին, նրանց սովորեցնել գնահատել ինչպես սեփական, այնպես էլ ընկերների աշխատանքը, համատեղ մշակել գնահատման չափանիշներ, սովորողներիմեջ ձևավորել ինքնավերահսկման կարողություններ: Գնահատման գործընթացում առանցքային դերակատարությունը թերևս վերապահված է ուսուցչին, սակայն գնահատման արդյունքները կապվում են գլխավորապես սովորողներիհետ: Սովորողների ուսումնական գնահատման համար հիմք են հանդիսանում ուսուցչիկողմից գնահատման կարողությունների վերաբերյալ հետևյալ չափորոշչային պահանջները. «ուսուցիչը պարտավոր է ճիշտընտրի գնահատման համար նախատեսված եղանակները, ծանոթ լինի հասարակագիտական առարկաների գնահատման տարբեր մեթոդների, ճշգրիտ գնահատականներ նշանակելու և արդյունքները մեկնաբանելու կարողություններ ունենա»: Սովորողների գիտելիքների գնահատման ժամանակ ուսուցիչը պարտավոր է առաջադրանքներն ընտրելըստ չափորոշչային պահանջների և ոչ թե կիրառի սովորողների համեմատական գնահատման տարբերակը, որովհետև գնահատման համեմատական միջոցըսովորողներիմոտ առաջացնում է տագնապ, թերարժեքության զգացում, ինքնագնահատականի նվազեցում և այլն:Բացի այս մոտեցումը՝ ուսուցիչըպետք է իմանա, որկոնկրետ գիտելիքի համար սովորողի ստացած գնահատականը միայն աշակերտի աշխատանքի արդյունքը չէ, այլ աշակերտի աշխատանքին տրված գնահատականը իրմեջ ներառում է նրա անձնային որակները, բնավորությունը, տրամադրվածությունը, հոգեկան իրավիճակը և այլն: Այդ իսկ պատճառով սովորողների գիտելիքների որակի գնահատման գործընթացին ներկայացվում են մի շարք պահանջներ, որոնցից հիմնականը գնահատման օբյեկտիվությունն է, արդարացիությունը, արժանահավատությունն ու վավերականությունը: Հետևաբար, ուսուցչիկողմից գնահատման առանցքային հարցը ընկալվում է այն ժամանակ, երբ ուսուցիչն այդ գործընթացը դարձնում է բաց ու մատչելի սովորողների համար և ընդունում նրանց որպես գործընկերներ: Նման համագործակցության պայմաններում սովորողները պարտավոր են տիրապետել գնահատման հետևյալ առանձնահատկություններին՝

1. սովորողները պարտավոր են իմանալ միավորային գնահատման տեսակների և նրանց ներկայացված չափորոշչային պահանջների մասին,

2. ուսուցիչներիհետ մշակել գնահատման չափանիշները, դրանք կիրառել սեփական գործողությունների կամ առաջադիմության աճի և անհատական զարգացման վրա,

3. հասկանալ,թե ուսուցչիկողմից նշանակված գնահատականը ինչպես է ազդում անձնական ուսումնառության վրա կամ իրենց ինքնագնահատականը ինչպես է առնչվում ուսուցչիկողմից կատարված գնահատմանը,

4. ուսուցիչը պարտավոր է սովորողին մասնակից դարձնել իր աշխատանքի արդյունքները ստուգելու և գնահատելու գործում՝ նրանց ինքնաստուգման և ինքնագնահատման չափանիշներ տալով:

Այսպիսով, գնահատման նոր համակարգի ներդրումը պայմանավորված է հանրակրթության ոլորտումտեղիունեցող փոփոխություններով, կրթության որակն արմատապես բարելավելու և յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեությունը ակտիվացնելու և զարգացնելու անհրաժեշտությամբ:

Եզրակացություն

Այսպիսով՝ գնահատումը ոչ միայն կրթական, այլ կյանքի բոլոր բնագավառներին առնչվող խնդիր է: Գնահատումը կլինի թերի և ոչ համարժեք, եթե այն միայն օգտագործվում է որպես վերահսկման գործիք: Թեև գնահատումը կարևոր է հանրակրթության բոլոր աստիճաններում, սակայն հիմնական և ավագ դպրոցում սովորողների տարիքային առանձնահատկությունների բերումով այն յուրահատուկ նշանակություն ունի, որովհետև այս տարիքային խմբերում աշակերտները նախ՝ շատ զգայուն են գնահատման սխալների նկատմամբ, երկրորդ՝ շատ հարցերի բոլորովին այլ տեսանկյունից են նայում և հնարավոր է, ոչ համարժեք գնահատական են տալիս և երրորդ՝ նրանք ապրում են գնահատման տեսանկյունից բազմազան աշխարհներում՝ դեռահասության և պատանեկության ենթամշակութային խմբերում, որոնքորպես կանոն, հակադրվում են գնահատման ընդունված համընդհանուր սկզբունքներին:

Գրականություն

1. Հասարակագիտության պետական չափորոշիչ, Ե. 2009թ. էջ 12:
2. Հայոց պատմության և Համաշխարհային պատմության ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու, Ե. 2007թ. էջ 17:
3. «Հասարակագիտություն»,Ուսուցման բովանդակություն և դասավանդման ակտիվ մեթոդներ, ուսումնական ձեռնարկ, Ե. 2010թ. էջ 230:
4. www. civitasarmenia. org:
5. Սովորողների առաջադիմության գնահատման ընթացակարգ, Ե. 2007թ. էջ 7:
6. «Հասարակագիտություն», Ուսուցման բովանդակություն և դասավանդման ակտիվ մեթոդներ, ուսումնական ձեռնարկ, Ե. 2010թ. էջ 221:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ԳԵՈՐԳԻ ՎԻԼԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«Իրավունքի հասկացությունը և էությունը» թեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները հիմնական դպրոցում

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ Գ. Էմինյան

Բովանդակություն

Ներածություն 1

Գլուխ 1

Գլուխ 1.1 Իրավունք հասկացության էությունը և արժեքը.....6

Գլուխ 1.2 Հասկանանք իրավունքի էությունը, նշանակությունը..... 8

Գլուխ 1.3.....10

Գլուխ 2.

Գլուխ 2.1 Իրավունքի հասկացությունը և էությունը թեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները հիմնական դպրոցում.....13

Եզրակացություն 19

Գրականություն.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Մենք արդեն գիտենք, որ ժամանակակից գրեքե բոլոր պետություններում, այդ թվում ՀՀ պետական իշխանությունը բաժանվում է թևերի օրենսդիր, գործադիր և դատական: Պետական իշխանության բաժանման ու հավասարության այս տարբերակը 18-րդ դարում առաջարկել է ֆրանսիացի մտածող Շառլ Մոնտեսքյոն իր «Օրենքների օգտին» աշխատությունում: Դատական իշխանությունը ի դեմս դատարանների ունի հատուկ գործառույթ: Այն կոչված է իրականացնելու արդարադատությունը: Դատական իշխանությունը դատարաններին պատկանող իշխանությունն, որով նրանք իրականցնում են արդարադատությունը: Նրանք Հայաստանում արդարադատություն կարող են իրականցնել միայն դատարանները: Դատարաններն իրենց հերթինն արդարադատություն կարող են իրականացնել միայն սահմանադրությանը համապատասխան: Արգելվում է միջամտություն արդարադատության իրականացմանը որևէ պաշտոնատար անձի կամ այլ անձանց կողմից: Արդարադատության իրականացման անհրաժեշտություն հիմնականում առաջանում է, երբ առկա է լինում անձանց միջև պետութան և անձանց միջև վեճ: Լինում են նաև այլ դեպքեր: Արդարադատության իրականացնելը դատարանների բացարձակ իրավասությունն է: Արդարադատությունն իրականացվում է օրենքով սահմանված եղանակով և վարույթային ընթացակարգով: Դատարանները պարտավոր են առաջնորդվել միայն այն նորմերով, որոնք ամրագրված են օրենսդրության մեջ: Քաղաքացիական արդարադատությունն ու դատավարությունն իրականացվում է քաղաքացիական դատավարության օրենսգրքեր: Յուրաքանչյուր ոք ունի դատական պատշպանության իրավունք: Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև անկախ քաղաքացիությունից, սեռից, ազգությունից: Դատարանում գործի քննությունը հրապարակային է և բաց, եթե դատարանն ինքը չի որոշում, որ դատական նիստն այնցնի դռնփակ: Դատարանը որպես անաչառ կողմ, թույլ է տալիս որ կողմերը ներկայացնեն իրենց պահանջները: Հայաստանում դատավարության լեզուն հայերենն է:

Հետապնդումից այլ երկրներում ապաստան որոնելու և այդ ապաստանից օգտվելու իրավունքը: Այս իրավունքի համար չափորոշիչը պարունակվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածում: Այս իրավունքը Հայաստանի Հանրապետությունում ապահովվում ՀՀ Սահմանադրության 54-րդ հոդվածը, ինչպես նաև՝ «Քաղաքական ապաստանի մասին» և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքներով: Հայաստանի Հանրապետությունը քաղաքական ապաստան է տրամադրում օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան. և նաև, որ Հայաստանի Հանրապետությունում չի թույլատրվում այն անձանց հանձնումն այլ պետությունների, ովքեր հետապնդվում են քաղաքական համոզմունքների համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հանցագործություն չհամարվող գործողությունների (անգործության) համար:

Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը: Այս իրավունքն առանձնահատուկ նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար, որը հանդիսանում է հնադարյա կրոնադավանական պետություն: Այն երաշխավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 41-րդ հոդվածով, ըստ որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական

[4] ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Բազմակողմ միջազգային պայմանագրեր, Եր., 2008, հատ. 1, էջ 166:

արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը։»:

Իսկ այն դեպքերում, երբ համաձայն Սահմանադրության նույն հոդվածի երկրորդ պարբերության՝ «Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար։»:

Այդ սահմանադրական դրույթի իրացման նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվեց «Այլընտրանքային ծայա-ռության մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածով սահմանվեց, որ այլընտրանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը:

Մեփական կարծիքն ու համոզմունքներն արտահայտելու, ցանկացած ձևով տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության իրավունքը: Այս իրավունքի ոլորտում միջազգային չափորոշիչներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն ընդհանուր առմամբ չի հակասում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (հոդվ. 42) երաշխավորում է յուրաքանչյուր անձին ունենալու իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Միաժամանակ, Սահմանադրության նույն հոդվածում հռչակելով անձի խոսքի ազատության իրավունքը՝ ամրագրելով, որ արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն, իրավունք վերապահելով ազատորեն տեղեկություններ և գաղափարներ փնտրել, ստանալ, տարածել տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Դրա հետ մեկտեղ, երաշխավորելով լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը, ինչպես նաև՝ տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:

5. Դասի պլան

Լոռու մարզ, Միխայելովկայի միջնակարգ դպրոց

Ուսուցիչ՝ Ռեգինա Դավիդյան

Դասարանը՝ 9-րդ

Առարկան՝ Հասարակագիտություն

Դասի թեման՝ Մարդու իրավունքներ

Դասի տիպը՝ ամփոփման դաս

Դասի նպատակը՝

- <u>ՈՒսուցողական՝</u> Մարդու իրավունքների և դրանց պաշտպանության վերաբերյալ գիտելիքների և հմտությունների ձևավորումը,
- <u>Կիրառական</u>՝ Աշակերտը իմանաիր հիմնական իրավունքները և կարողան տիրապետել իր իրավունքների պաշտպանությանմեխանիզմներին:
- <u>Դաստիարակչական՝</u> Զարգացնել այլոց իրավունքների հարգման ունակությունները:

Դասի խնդիրները՝

Սովորողներըձեռքկբերենմարդուհիմնարարիրավունքներիվերաբերյալգիտելիք,

գործնականառաջադրանքներիմիջոցովզարգացնելովդրանցվերաբերյալվերլուծական հմտություններուվերաբերմունք:

Դասի մեթոդները՝ խմբային աշխատանք, հետադարձ կապի հարցաթերթիկ:

Կոմպետենցիաները՝

- <u>Հիմնական՝</u>1. <u>Իրավաբանական</u> – ներկայացնիմարդուիրավունքներիհիմքումընկածարժեքները (արժանապատվություն, հավասարություն, հակախտրականություն, հանդուրժողականություն/ընդունում, հարգանք):
- <u>Երկրորդական՝</u>2. <u>Լեզվական</u> - կսովորեն նոր տերմիններ, ինչպիսիք են՝ մարդու իրավունքներ, արժնապատվություն և պաշտպանություն,

  3. <u>Սովորելու</u> – խմբում աշխատելով՝ սովորում են միմյանց սովորեցնել, խնդրի լուծման համար փնտրել տարբեր եղանակներ

4. Ինքնաճանաչողական և սոցիալական – խմբում աշխատելով՝ սովորում են համագործակցել, հարգել ընկերներին, հետևել խմբի կանոններին, քաջալերել և օգնել ընկերներին:

Անհրաժեշտ պարագաները՝ համակարգիչ, պրոյեկտոր:

Դասի ընթացքը՝ **Կազմակերպչական մաս՝** Դասարանը նախօրոք բաժանված կլինի չորս խմբի (յուրաքանչյուր խմբում՝ 5-6 աշակերտ):

Դասի բուն մաս՝ Աշակերտների օգնությամբ կներկայացվի մարդու իրավունք հասկացությունը, պատմական զարգացումը և պաշտպանության մեխանիզմները:

Խմբային աշխատանք – Յուրաքանչյուր խմբի կհանձնարարվի լուծել մարդու իրավունքների խախտման հետ կապված մեկ խնդիր: Աշխատանքին կտրամադրվի 5-10 րոպե ժամանակ: Այնուհետև յուրաքանչյուր խումբ կներկայացնի իրեն տրված խնդրի լուծումը և կկատարի եզրահանգումներ:

Խնդիրների լուծումները ներկայացնելուց հետո յուրաքանչյուր խումբ կներկայացնի իրեն նախօրոք հանձնարարված հետազոտական աշխատանքի արդյունքներն ու եզրակացությունները:

Աշխատանքի վերջում խմբի անդամներին կգնահատի խմբի ավագը՝ օգտվելով գնահատման ռուբրիկից և հաշվի առնելով նրա ներդրումը հետազոտական աշխատանքում և գնահատականները կլրացնի նախապես տրված աղյուսակում: Խմբերից յուրաքանչյուրը կհաշվի իրենց խմբի միջին գնահատականը, ըստ որի էլ կորոշվի հաղթող խումբը:

Վերջում խմբերի ավագները կներկայացնեն իրենց խմբի անդամների կողմից լրացված հարցաթերթիկները:

Եզրակացություն

Ընդհանրացնելով ողջ նյութը՝ պետք է նշել, որ իսկապես մարդու իրավունքների հիմնահարցը ժամանակակից հասարակության կարևոր հիմնահարցերից մեկն է: Դեռևս անտիկ ժամանակների այնպիսի մտածողներ, ինչպիսիք են հանդիսանում Ցիցերոնը, Արիստոտելը, Լոկը, Մոնտեսքյոն և շատ ուրիշներ, արդեն խոսում էին մարդու բնական իրավունքների մասին:Արդեն իրենց ժամանակ այս մտածողները նշում էին, որ բոլոր մարդիկ ծնված օրվանից հավասար են, ուստի նրանք հավասար իրավունքներ և հիմանարար ազատություններ ունեն: Բնականաբար ժամանակի ընթացքում այդ հայացքները ավելի ու ավելի կատարելագործվեցին և բազմաթիվ մտածողներ սկսեցին պայքարել մարդու իրավունքների պաշտպանության և չոտնահարման համար: Հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ բազմաթիվ պետություններ մեծ զրկանքներ ու արհավիրքներ տեսան, հասկացան, որ այս ամենը այն բանի հետևանքն է, որ պետությունների մեծ մասըչէր հարգում ինչպես իր ժողովրդի, այնպես էլ մյուս պետությունների ժողովուրդների իրավունքները: Որպես հետևանք եղեվ այն, որ աստիճանաբար մի շարք պետություններ սկսեցին միավորվել՝ ձգտելով համատեղ ջանքերով հռչակել, ճանաչել ու պաշտպանել մարդու իրավունքները” Այս ամենը հող նախապատրաստեց մարդու իրավունքների պաշտապանությունը հետապնդող համաշխարհային այնպիսի կառույցների ձևավորմանը, ինչպիսիք են հանդիսանում ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ն, Եվրոպական Խորհուրդը և այլն: 1948թ. ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը հիմք հաղիսացավ, որպեսզի շատ պետություններ իրենց Սահմանադրություններում ամրագրեին դրույթներ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ: Ըստ էության՝ շատ մտածողներ Մարդու իրավունքները բաժանում են երեք «սերնդի», որոնք տարբեր ժամանակաշրջաններում են ձևավորվել ու հանդես եկել: Առաջին սերնդին են պատկանում քաղաքական ու քաղաքացիական իրավունքները, որոնք ավելի վաղ են հանդես եկել, երկրորդ սերնդի իրավունքները դրանք սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներ են, իսկ երրորդ սերնդին են պատկանում խմբային

իրավունքները: Այս երեք «սերնդի» իրավունքներն էլ սերտորեն փոխկապակցված են և լրացնում են միմյանց:

Ինչ վերաբերվում է մեր պետությանը, ապա պետք է նշենք, որ երկար ժամանակ գտնվելով ԽՍՀՄ-ի կազմում, այն չէր կարողանում ամբողջովին ճանաչել ու պաշտպանել մարդու իրավունքները: Սակայն 1991թ. անկախացումից հետո բազմաթիվ խնդիրների շարքում օրակարգի հարց դարձավ նաև այս հիմնադրույթը: 1995թ. Սահմանադրության մեջ ամրագրվեցին մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները սահմանող մի շարք օրենքներ: Հատկապես մեծ ձեռքբերում էրայնպիսի իրավունքների ամրագրումը, ինչպիսիք են ազատ ընտրելու իրավունքը,խոսքի ազատությունը, խաղաղ երթեր, հանրահավաքներ անցկացնելու և նմանատիպ բազմաթիվ այլ իրավունքներ, որոնք կարևոր քայլեր էինժողովրդավարական պետություն ձևավորելու ճանապարհին: Անցումային շրջանումգտնվող մեր պետություններում սկզբնական շրջանում այդ օրենքները գրեթե չէին իրականացվում, վերջին ժամանակահատվածում բավականին լուրջ առաջընթաց է գրանցվել ամրագրված այդ օրենքների կենսագործման ու իրականացման ոլորտում: Այդ մասին է վկայում 2007թ. մեր հանրապետությունում ստեղծված Մարդու իրավունքների Պաշտպանի ինստիտուտը, որը կոչված է պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները: Այսօր այդ ինստիտուտը բավականին լուրջ քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ և կարևոր տող է զբաղեցնում ՀՀ պետական համակարգում: Պետք է նշել, որ մարդու իրավունքները, մարդու բնական,անօտարելի իրավունքներն և ցանկացած ժողովրդական պետության պարտավոր է ոչ միայն դրանք օրենքով ամրագրել, այլև պետք է կարողանա պաշտպանել ու հարգել դրանք:

Այսպիսով մարդկությունն անցել է բավականին երկար և դժվարին ճանապարհ, մինչև որ «մարդը բոլոր իրերի չափանիշն է» սկզբունքը վերածվել է իրական նշանակություն ունեցող արժեքի:

Օգտագործված գրականությանցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, Երևան 2015թ
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր 1948թ.
3. Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան և ՀՀ օրենսդրությունը, հրապարակված Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտի (ՄԻԺԻ) կողմից, Երևան 2000
4. ԱտովմյանՄ. «Մարդուիրավունքներրքոիրավունքներնեն» Երևան, 2004թ
5. Երիցյան Ա.Հ. Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնահարցեր (տեսական և կիրառական վերլուծություն), Երևան, 2001:
6. ՍարգսյանՎ., Ռոյթեր Վ.. Իցոյներ Կ., Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և հայաստանյան ընթացակարգեր», Երևան 2006
7. Башилов М. “Государство и право”, Москва 2004,
8. Бойцова В.В. “Службы защиты прав человека”, Москва 1999
9. ДаниленкоГ.М. Международнаязащитаправчеловека (Вводныйкурс). М., 2000.
10. “Права человека” под. ред. Е.А. Лукалиева. Москва 1999
11. Шершеневич Г.Ф. “Историч философии и права”, Москва 2001
12. www.ombids.am
13. www.parliament.am
14. www.concourt.am

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

Հասարակագիտություն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Քաղաքացիական իրավունք

Ղեկավար՝ Ռուդիկ Վարդանյան

Ուսուցիչ՝ Սաթենիկ Փիլոսյան

Բովանդակություն

Ներածություն----------

1Քաղաքացիական իրավունքի հասկացությունը----------

2 Քաղաքացիական իրավունքի համակարգը և աղբյուրները----------

3.Եզրակացություն----------

Ներածություն

Իրավունքն այն երևույթներից է, առանց որի անհնար է քաղաքակիրթ հասարակության գոյությունն ու կենսագործունեությունը: Այն ուղեկցում է

յուրաքանչյուրին ծննդյան պահից մինչև մահ: Դվար է գտնել մարդկանց մեջ հարաբերությունների մի ոլորտ, որը դուրս մնա քաղաքացիական իրավունքի կարգավորիչ ազդեցությունից: Ժողովրդավարական պետության մեջ իրավական կարգավորման նպատակը անձի իրավունքների և ազատությունների ապահովումն է, իսկ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները Սահմանադրությունը հռչակում է բարձրագույն արժեք: Հասարակական հարաբերությունները կարգավորելիս իրավունքը հանդես է գալիս որպես մարդկանց ազատության ընդհանուր մասշտաբ և հավասար չավ: Իրավունքին ներքնապես բնորոշ է արդարությունը: Այն իրենից ներկայացնում է նորմատիվորեն ամրապնդված և իրականացված արդարություն:

Իրավունքը հասարակության պետական կառավարման հզոր միջոց է: Պետականորեն կազմավորված հասարակությունն առանց իրավունքի չի կարող կարգավորել նյութական բարիքների արտադրությունը, կազմակերպել դրանց քիչ թե շատ արդարացի բաշխումը: Իրավունքն ամրապնդում և զարգացնում է սեփակա նության այն ձևերը, որոնք ներքնապես բնորոշ են տվյալ հասա րակությանը: Իրավունքն ամրապնդում է պետական և հասարա կական կարգի հիմքերը, բազմակուսակցական քաղաքական հա մակարգը, ժողովրդավարական ընտրական համակարգը, պանի վածային լրատվական միջոցները, քաղաքացիական հասարա կությունը, իրավական պետությունը և այլն:

Մեր երկրում շուկայական տնտեսության ձևավորումն էականորեն բարձրացնում է իրավունքի դերը հասարակության մեջ: Շուկայական տնտեաության պայմաններում իրավահավասար և ինքնուրույն սուբյեկտները տնտեսական կապերի մեջ են մտնում ղեկավարվելով սեփական շահերով և ձգտում են պաշտպանել դրանք: Այդ քաոսում միայն իրավունքը կարող է ապահովել կայունություն, կանխատեսելիություն և վերահսկելիություն, առանց որի հնարավոր չէ հասարակության բաղարակիրթ զալլայումը:

Թեմայի արդիականությունը: Քանի որ քաղաքացիական իրավունքը ՀՀ-ում կարգավորում է հասարակական հարաբերությունների լայն շրջանակ, դիցուկ՝ գույքային և անձնական ոչ գույքային հարաբերություններ, ինչով էլ պայմանավորված է վերջինիս արդիականությունը ՀՀ իրավունքի ճյուղերի համակ**արգում:**

Թեմայի նպատակն է ներկայացնել քաղաքացիական իրավունքի ողնաշարային նշանակությունը ՀՀ իրավական համակարգում:

Թեմայի խնդիրն է սահմանել քաղաքացիական իրավունքի հասկացությունը և հատկանիշները, վերլուծել քաղաքացիկան իրավունքի կարգավորման առարկան , օբյեկտը, սուբյեկտային կազմը:

1. Քաղաքացիական իրավունքի հասկացությունը

Քաղաքացիական իրավունքը , որպես Հայաստանի Հանրապետության իրավունքի միասնական համակարգի ինքնուրույն և հիմնարար ճյուղ կոչված է կարգավորելու որոշակի խումբ հասարակական հարաբերություններ:

Քաղաքացիական իրավունքը մասնավոր իրավուքնի ճյուղերից է: Այն իրենից ներկայացնում է իրավական նորմերի համակցություն, որի կողմերի իրավահավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնավարության հիման վրա կարգավորում է գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների բնագավառը: Այդ բնագավառի հարաբերություններն էլ կազմում են քաղաքացիական իրավունք առարկան:

Իրավունքի կարգավորման առարկա ասելով հասկանում ենք հասարակական հարաբերությունների այն ամբողջությունը, որը կարգավորվում է օրենսդրության տվյալ ճյուղի կողմից: Իսկ մեթոդը յուրահատուկ եղանակների, միջոցների , հնարքների համակարգ է , որոնց միջոցով իրավունքը ներգործում է հասարակական հարաբերությունների վրա՝ սահմանելով դրանց մասնակիցների վարքագծի կանոններ, նրանց վերապահելով իրավունքներ և նրանց վրա դնելով պարտականություններ [1;3]

Քաղաքացիական իրավուքնի կողմից կարգավորվող հարաբերությունների օրենսդրորոն սահմանված շրջանակը ամրապնդված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածում, ըստ որի քաղաքացիական իրավուքնի նորմերը սահմանում են քաղաքացիական շրջանառության տնտեսական հարաբերությունների մասնասնակիցների իրավական վիճակը, սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների ծագման հիմքերն ու իրականացման կարգը, կարգավորում են պայմանագրային և այլ պարտավորություններ, ինչպես նաև այլ գույքային և անձնական ոչ գույքային հարաբերություններ:[Քաղ օր, հ 1-ին, մաս 2]:

Ինչպես տեսնում ենք, քաղաքացիական իրավունքի առարկան կազմող հարաբերությունները օրենսդրորեն ուղղակիորեն բաժանվում են երկու խմբի՝ գույքային և անձնական ոչ գույքային:

Քաղաքացիական իրավունքի կողմից կարգավորվող հարաբերությունների մեջ կենտրոնական տեղը պատկանում է գույքային հարաբերություններին: Գույքային հարաբերությունները տնտեսական հարաբերություններ են, որոնք ծագում են առանձին անձնանց միջև նյութական բարիքների պատկանելիության, օգտագործման և մեկից մյուսին փոխամցման կապակցությամբ: Գույքային հարաբերությունների օբյեկտ է հանդիսանում գույքը լայն իմասով՝ իրերը, աշխատանքները, ծառայությունները, գույքային իրավումնքները և այլն[2;313]:

Քաղաքացիական իրավունքը կարգավորում է ոչ բոլոր գույքային հարաբերությունները, այլ միայն նրանք, որոնք ունեն ապրանքադրամական բնույթ: Դրանք կազմավորվում են արժեքի օրենքի գործողության ոլորտում և դրանց օբյեկտներն ունեն ապրանքի հատկություններ: Գույքային հարաբերությունների մեծ մասին բնորոշ է այն , որ դրանք ունեն հատուցանելի բնույթ: Դրանք կազմավորվում են արժեքի օրենքի գործողության ոլորտում և դրանց օբյեկտներն ունեն ապրանքի հատկություններ: Գույքային հարաբերությունների մեծ մասին բնորոշ են այն, որ դրանք ունեն հատուցանելի բնույթ: Ըստ նշվածի անձն իր պարտականությունները կատարելու համար իր կոնտրագենտից պետք է պետք է ստանա որոշակի հատուցում: Օրինակ, առքուվաճառքի հարաբերություններում վաճառողը գնորդին է հանձնում ապրանքը և դրա դիմաց ստանում որոշակի գումար՝ գինը: Հատուցումը պետք է լինի համարժեք:

Անձնակն ոչ գույքային հարաբերությունները ծագում են ճշգրիտ դրամական գնահատման չենթարկվող ոչ նյութական արժեքների կապակցությամբ և սերտոեն կապված են դրանք կրողի անձի հետ: Անձնական ոչ գույքային հարաբերությունները ավանդաբար բաժանվում են գույքայինի հետ կապված և գույքայինի հետ չկապված հարաբերությունների:

Գույքային հարաբերությունների հետ յունն անձնական ոչ գույքային հարաբերությունները ծագում են մտավոր յուններ դրակ օբյեկտների՝ մասնավորապես գրականության և արվեստի երկերի , գյուտի , հայտնագործության, արդյունաբերական նմուշի և այլնի կապակցությամբ: Նշված օբյեկտներն ունեն ոչ

նյութկան բնույթ և դրանց ստեղծման արդյունքում յուններ մոտ ծագում են ոչ գույքային իրավունքներ:

Այսպես, գրքի հեղինակին է պատկանում հեղինակության իրավունքը (տվյալ ստեղծագործության հեղինակ ճանաչվելու իրավունքը), անվան իրավունքը (իր անունով, կեղծանունով կամ անանուն ստեղծագործությունը հրապարակելու իրավունքը) և այլն: Անձնական ոչ գույքային իրավունքների հիման վրա ծագում են օբյեկտը որոշակի եղանակով օգտագործելու, դրա համար հատուցում ստանալու իրավունքները և այլն:

Գույքային հարաբերությունների հետ չկապված անձնական ոչ գույքային հարաբերությունները այն հարաբերություններն են, որոնք ծագում են ոչ նյութական բարիքների՝ մարդու անօտարելի իրավունքների և ազատությունների (կյանք, առողջություն, պատիվ արժանապատվություն, գործարար համբավ և այլն) կապակցությամբ: Դրանց ցանկը տրված է քաղաքացիական օրենսգրքի 162-րդ հոդվածում: Նման օբյեկտները չեն կարող գործարքի առարկա հանդիսանալ, չեն կարող փոխանցվել մեկից մյուսին: Այդ կապակցությամբ ծագող գույքային հարաբերությունները չեն կարգավորվում, այլ միայն պաշտպանվում են քաղաքացիական իրավունքով: Այսպես, զանգվածային լրատվության միջոցներով քաղաքացու պա- | տիվն ու արժանապատվությունը վիրավորող տեղեկատվություն յուններ դրա դեպքում կարող են կիրառվել պաշտպանության այն պիսի միջոցներ, ինչպես արատավորող տեղեկությունների հերքումը: Քաղաքացական իրավունքի առարկան կազմող հարաբերությունների բովանդակությունն ու բնույթը պայմանավորում են ճյուղային իրավական կարգավորման մեթոդը և բովանդակությունը: Քաղաքացիաիրավական կարգավորման մեթոդի առանձնակի հատկությունները դրսևորվում են հետևյալ դրույթներում.

- Մասնակիցների գույքային ինքնուրույնությունը: Մասնակիցներից յուրաքանչյուրը սեփականության կամ այլ գույքային իրավունքի հիման վրա ունի առանձնացված գույք, որի հետևանքով կարող է ինքնուրույնաբար տնօրինել այն և կրել գույքային պատասխանատվություն:

- Մասնակիցների իրավահավասարությունը: Մասնակիցները գույքային ինքնուրույնություն ունեցող սուբյեկտներ լինելով ենթակա չեն մեկը մյուսին:

Նրանցից ոչ մեկը մյուսի հանդեպ օժտված չէ իշխանական լիազորություններով և չի կարող թելադրել մյուս կողմին իրենց փոխհարաբերությունների պայմաններին վերաբերող իրավաբանորեն պարտադիր պայմաններ: Մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախա տեսված չէ օրենսդրությամբ (Քաղ.օր հոդվ.1 , կետ 6):

- Մասնակիցների կամքի ինքնավարությունը: Մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի ինքնուրույնաբար որոշել մտնել քաղաքացիական հարաբերությունների մեջ, թե՝ ոչ: Քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ նրանք մտնում և իրավունքներ ու պարտականություններ են ձեռք բերում սեփական նախաձեռնությամբ, ղեկավարվելով իրենց շահերով: Իրավահարաբերությունների մասնակիցներն օրենքի շրջանակներում կարող են սահմանել իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները: Այդ դեպքում նրանք իրականացնում են իրենց հարաբերությունների անհատական իրավական կարգավորում: Քաղաքացիաիրավական գործարքներում սահմանված կանոնները ենթակա են պարտադիր կատարման և խախտման դեպքում պաշտպանվում են պետության կողմից: Քաղաքացիաիրավական կարգավորման համար բնութագր կան է դիսպոզիտիվ եղանակը: Քաղաքացիական իրավունքի նոր մերի զգալի մասն ունի դիսպոզիտիվ բնույթ, որը կողմերին հնա րավորություն է տալիս փոխադարձ համաձայնությամբ բացառել այդ նորմի կիրառումը կամ սահմանել դրանում նախատեսվածից այլ պայման (Քաղ. Օր. 437 հոդվ. Կետ 4): Դիսպոզիտիվ նորմի հատկանիշներից է՝ «եթե այլ բան սահմանված չէ պայմանագրով» (կողմերի համաձայնությամբ) վերապահումը:

- Քաղաքացիական իրավունքների պաշտպանության ինքնատիպությունը: Քանի որ քաղաքացիական հարաբերությունների գերակշռող մասը գույքային

հարաբերություններն են, քաղաքացիաիրավական պատասխանատվությունը ինչպես և քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցների մեծամասնությունը ունի գույքային բնույթ: Դրա էությունը կայանում է նրանում, որ հատուցվում են իրավախախտումից տուժած կողմի գույքային վնասները կամ հօգուտ նրա գանձվում են վնասների չափը չգերազանցող այլ գույք և դրամական միջոցներ (տուժանք): Այլ կերպ ասած՝ պա տասխանատվությունը քաղաքացիական իրավունքում ունի համարժեքության վրա հիմնված հատուցողական բնույթ: Իրավախախտման դեպքում ազդեցությունն իրականացվում է ոչ այնքան իրավախախտողի անձի, որքան նրա գույքային շահերի վրա: Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է առավելապես հայցային կարգով, դատարանի միջոցով:

2.ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԱԿԱՐԳԸ

Իրավունքի տվյալ ճյուղը կազմող նորմերի ներքնապես համաձայնեցված միասնությունն է և դրանց բաժանումն ինքնուրույն մասերի: Իրավունքի այս ճյուղի կողմից կարգավորվող բնագավառում օբյեկտիվորեն գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների համալիրներին համապատասխան իրավական նորմերը խմբավորվում են ինստիտուտների մեջ: Քաղաքացիական իրավունքի համակարգն ընդհանուր գծերով արտացոլված է ՀՀ քաղաքա ցիական օրենսգրքում: Քաղաքացիական իրավունքի համակարգը բաղկացած է երկու մասից՝ ընդհանուր և հատուկ: Ընդհանուր մասի մեջ են մտնում այն դրույթները, որոնք նշանակություն ունեն քաղաքացիական իրավունքի ողջ ճյուղի, նրա բոլոր ինստիտուտների համար: Ընդհանուր մասի առանձնացումը հնարավորություն է ընձեռում խուսափել նույն նորմերի բազմիցս կրկնվելուց: Ընդհանուր մասում են զետեղված քաղաքացիական իրավական կարգավորմանը վերաբերող հիմնադրույթները, քաղաքացիական իրավունքների ծագման, իրականացման և պաշտպանությանը վերաբերող նորմերը, քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին, օբյեկտներին, գործարքներին, ներկայացուցչությանը, հայցային վաղեմությանը վերաբերող նորմերը և այլն:

Բոլոր մնացած ինստիտուտները մտնում են հատուկ մասի մեջ: Հատուկ մասի ինստիտուտները խմբավորվում են չորս ենթաճյուղերում.

1. սեփականության և այլ իրային իրավունքներ,
2. պարտավորական իրավունք,
3. մտավոր սեփականության իրավունք,
4. ժառանգական իրավունք

Քաղաքացիական իրավունքի աղբյուրներն իրենց մեջ ներառում են նորմատիվ իրավական ակտեր, միջազգային պայմանագրեր, գործարար շրջանառության սովորույթներ: Թվարկված աղբյուրների մեջ գերակշռող դեր ունեն նորմատիվ իրավական ակտերը, որոնք բաժանվում են օրենքների և յուններ դրական ակտերի: Օրենքներն իրենց հերթին լինում են՝ հիմնական և ընթացիկ: ՀՀ հիմնական օրենքը Սահմանադրությունն է: Սահմանադրությունը քաղաքացիական իրավունքի գլխավոր

աղբյուրն է և հիմք է հանդիսանում ընթացիկ օրենսդրության համար: Իրավունքի բոլոր ճյուղերն էլ իրենց գլխավոր ելակետային գաղափարները վերցնում են սահմանադրությունից և դրանց համապատասխան մանրամասն կարգավորում են իրենց բնագավառի հասարակական հարաբերությունները: Սահմանադրությունը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք անմիջականորեն վերաբերում են քաղաքացիաիրավական կարգավորման ոլորտին: Այսպես, ըստ Սահմանադրության՝ ՀՀ-ում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը, երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը, սահմանադրությամբ ամրապնդվում է սեփականության իրավունքի իրականացման սահմանները, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, մտավոր սեփականության պաշտպանությունը, արժանապատվության պաշտպանությունը, անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը և այլն: Սահմանադրության այդ դրույթները հիմք են հանդիասնում քաղաքացիաիրավական կարգավորման համար, կանխորոշելով քաղաքացիական օրենսդրության բովանդակությունը:

Քաղաքացիական իրավունքի հաջորդ աղբյուրը՝ օրենսդրությունն է: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը օրենսդրություն ասելով նկատի ունի քաղաքացիական օրենսգիրքը և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքները: Օրենսդրության մեջ առաջնակարգ տեղը պատկանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, որն ամրապնդում է քաղաքացիական շրջանառության նորմատիվ հիմքերը և ըստ էության կարգավորում է քաղաքացիական իրավունքի առարկայի մեջ մտնող բոլոր հասարակական հարաբերությունները: Քաղաքացիական օրենսգիրքը առաջնություն ունի քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքների նկատմամբ: Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն քաղաքացիական օրենսգրքին: Դրանց միջև հակասություն առաջանալու դեպլքում անհրաժեշտ է ղեկավարվել քաղաքացիական օրենսգրքով: Քաղաքացիական օրենսգրքի կարգավորիչ ազդեցու թյունը տարածվում է նաև իրավունքի այլ ճյուղերի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների վրա: Այսպես, ՀՀ քաղ.օր. 1-ին հոդվ. 4-րդ կետի համաձայն ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա

միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվումեն քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով,եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային,հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ: Քաղաքացիական իրավունքի առարկան կազմող հարաբերու յուններ այնքան բազմազան են և բարդ, որ դրանք բավականչափ մանրամասնորեն չեն կարող կարգավորվել նույնիսկ այնպիսի ծա վալուն օրենսգրքի կողմից, ինչպիսին քաղաքացիական օրենս գիրքն է: Այդ պատճառով էլ գույքային և ոչ գույքային հարաբերու թյունները կարգավորվում են նաև օրենքներով: Օրինակ, իրավա բանական անձանց տարբեր կազմակերպական իրավական ձևերի մասին, դրանց պետական գրանցման, սնանկության մասին, ար ժեթղթերի մասին, ապրանքային նշանների մասին և այլն:

Քաղաքացիական իրավունքի աղբյուր են համարվում նաև են թաօրենսդրական ակտերը: Օրինակ, քաղաքացիական իրավուն քի նորմեր պարունակող ՀՀ նախագահի հրամանագրերը, կառա վարության որոշումները, նախարարությունների և գործադիր իշ խանության այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը:

ՀՀ քաղաքացիական իրավունքի աղբյուր են նաև միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը և միջազգային պայմանագ րերը: Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով քաղաքացիական իրավունքը , որպես Հայաստանի Հանրապետության իրավունքի միասնական համակարգի ինքնուրույն և հիմնարար ճյուղ կոչված է կարգավորելու որոշակի խումբ հասարակական հարաբերություններ:

Ինչպես տեսանք քաղաքացիական իրավունքի առարկան կազմող հարաբերությունները օրենսդրորեն ուղղակիորեն բաժանվում են երկու խմբի՝ գույքային և անձնական ոչ գույքային:

Անձնակն ոչ գույքային հարաբերությունները ծագում են ճշգրիտ դրամական գնահատման չենթարկվող ոչ նյութական արժեքների կապակցությամբ և սերտորեն կապված են դրանք կրողի անձի հետ: Անձնական ոչ գույքային հարաբերությունները ավանդաբար բաժանվում են գույքայինի հետ կապված և գույքայինի հետ չկապված հարաբերությունների:

Գույքային հարաբերությունների հետ յունն անձնական ոչ գույքային հարաբերությունները ծագում են մտավոր յուններ դրակ օբյեկտների՝ մասնավորապես գրականության և արվեստի երկերի , գյուտի , հայտնագործության, արդյունաբերական նմուշի և այլնի կապակցությամբ: Նշված օբյեկտներն ունեն ոչ նյութկան բնույթ և դրանց ստեղծման արդյունքում յուններ մոտ ծագում են ոչ գույքային իրավունքներ:

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հասարակագիտության ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց

Վանաձոր 2022

ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թեմա - Գաղափար արժեքների մասին

Կատարող՝ Խնկոյանի հիմնական դպրոցի ուսուցչուհի
Քրիստինե Օհանյան

Ղեկավար՝ Ռուդիկ Վարդանյան

Բովանդակություն

Ներածություն……4

Հիմնական մաս…….5

Եզրակացություն……..12

Գրականության ցանկ……13

Ներածություն

Թեմայի արդկանությունը կայանում է նրանում, որ ժամանակակից հասարակության առջև ծառացել են կարևորագույն խնդիրներ՝բարոյական, ազային և այլն:

Հասարակությունը կազմված է անհատներից, որոնք ունեն ուրույն ներաշխարհ՝ հիմնված արժեքների վրա:Ժամանակակից աշխարհում տեղի են ունենում որակական և բովանդակային փոփոխություններ,որոնք նոր մարտահրավերներ են ստեղծում արժեքային համակարգում՝ կշեռքի նժարին դնելով ազգային, ավանդական արժեքները և համամարդկային արժեքները:Եվ այս բարդ պայմաններումերիտասարդ սերնդի կողմից նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ չիմացության հետևանքով ազգային արժեքները մղվում են երկրորդական պլան,հեշտանում են համաշխարհայնացման կործանարար պահանջները:Զգալի է տարբերությունը նախորդ և մերօրյա սերնդի արժեքների մասին պատկերացումների միջև:Ազգային, առանձնահատկությունները մղվել են ետին պլան՝վտանգելով մշակութային ինքնությունը:Շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ արժեքներ արժեզրկվեցին կամ այլ երանգ ստացան,կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի հիման վրա:Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհը իր արժեքային համակարգով բարդ էր ու անհասկանալի:Հետևաբար,արդի մարտահրավերների պայմաններում պետության ամրապնդման համար կարևոր է ժամանակակից քաղաքական,տնտեսական հարաբերությունները,օրենքները ըմբռնող,ազգային մտածողություն և հայեցի դաստիարակություն ունեցող անհատը և հասարակությունը:

Ինչ է արժեքը:Արժեքների տեսակները

Արժեքը առարկայի կամ կարևոր երևույթի առանձնահատկությունն է, սակայն նրա նշանակությունը և օգտակարությունը սահմանված չէ բնության կողմից:Այն գնահատվում է ոչ միայն օբյեկտի ներքին կառուցվածքով,այլև հիմնվում է կոնկրետ գործողությունների ժամանակ նրան տրված սուբյեկտիվ գնահատականների վրա, որոնք մտնում են հասարակական ոլորտի մեջ,քանի որ մարդը հետաքրքրված է կամ ունի դրա կարիքը:

Արժեքները կարևոր դեր ունեն մարդու սոցիալական և առարկայական իրականության մեջ,որը նրա պրակտիկ վերաբերմունքն է շրջապատող առարկաների և երևույթների նկատմամբ:

Արժեքը օգտագործվում է մի քանի իմաստով.

- <u>Արժեք</u>՝ որպես առարկայի կամ երևույթի բնորոշիչ հատկություն,որի օգնությամբ հասկացվում է նրա նշանակությունը;

Գոյություն ունեն ***նյութական*** և ***հոգևոր*** արժեքներ:

<u>Նյութական արժեքները</u> տեսանելի, շոշափելի,ֆիզիկական գոյություն ունեցող իրողություններն են:

<u>Հոգևոր արժեքները</u> աշխարհայացքի կարևոր բաղադրիչներն են, դրանց միջոցով մարդը ձևավորում է վերաբերմունքը թե արտաքին աշխարհի,թե ինքն իր հանդեպ: Հոգևոր արժեքներ են գաղափարները,սկզբունքները,որոնք որպես կանոն հիմնվում են իդեալների և հասարակությա վրա:

Բանական մարդը դեռևս չի կարող համարվել մարդ եթե չունի հոգևոր արժեքներ: Նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունը կոչվում է ***մշակույթ***:

- <u>Արժեք</u>՝ տնտեսագիտության մեջ օգտագործվում է որպես սպառողական արժեք իմաստով:Այսինքն,նշվում է առարկայի նշանակությունը և օգտակարությունը:
- <u>Արժեք</u>՝ փիլիսոփայության մեջ նշում է օբյեկտի և երևույթի անհատական սոցիալ-մշակութային նշանակությունը:

Փիլիսոփայական հասակացություն համարվող արժեհամակարգի ներքո ենթադրվում են այն արժեքները,որոնք գնահատվում են անհատի կողմից:Արժեքներ են համարվում

- առողջությունը
- սերը

- ընտանիքը, մտերիմները, ընկերները
- նյութական բարեկեցությունը
- հոգևոր արժեքները, կրոնը
- ինքնակրթությունը
- հասարակական դիրքը:

Մարդկանց մոտ այս կամ այն արժեքի օգտակարությունը կախված է նրա ներաշխարհից,մտահորիզոնից,սոցիալական դիրքից և այլն:

Անհատի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջ համակարգ: Անհատի համար կարևոր են 3 հիմնական արժեքները:

- *Արժանապատվություն՝* սեփական ես-ի գիտակցումն է,անձի ինքնագնահատականը:
- *Ազգային արժանապատվություն՝* ինքնահարգանքն է որպես ազգի ներկայացուցիչ:
- *Աշխատասիրություն՝*աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է,այն խիստ կարևոր նշանակություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է:

Այն արժեքները,որոնք կազմում են տվյալ ազգի արժեհամակարգի առանցքը,կոչվում են ***հիմնարար արժեքներ***:

Դրանք են՝

- ազգ,հավաքականություն,
- հայրենիք,տարածք,լեզու,
- հավատ,ծագումնաբանություն,
- միասնական մշակույթ,
- ընդհանուր պետականություն,որն ընդգրկում է ողջ ազգը:

Հայ ժողովրդի ազգային արժեքների մեջ առանձնահատուկ է *Հայոց եկեղեցու* դերը:

Այն արժեքները,որոնք ընդունվում են մի ազգի կողմից և ամբողջանում,ձևավորում են նրա ազգային դիմագիծը,կոչվում են <u>ազգային արժեքներ:</u>

Դրանք սկզբնավորում են ազգին բնորոշ և յուրահատուկ աշխարհզգացողություն,աշխարհընկալման և աշխարհըմբռնման միջոցով:

Այն արժեքները,որոնք ընդունվում են տարբեր ազգերի կողմից,կոչվում են <u>համամարդկային արժեքներ</u>:Այդպիսի,արժեքներ են Բախի և Արամ Խաչատրյանի երաժշտությունը,Սարյանի և Դալիի կտավները և այլն:

Հիմնարար արժեքների մեջ են մտնում

- ազատությունը,
- հավասարությունը,
- արդարությունը,
- մարդու իրավունքները և այն:

Կան նաև ազգային արժեքներ,որոնք ձևավորվում են պատմական արգացման ընթացքում:Ազգին հատուկ արժեքները արտացոլվում են արվեստի,փիլիսոփայության,բարոյականության,կրոնի պատկերացումների տարբեր ձևերով:Ազգի արժեքային համակարգը պետք է ձևավորվի և գործի անհատի՝ հանրության մեջ բնականոն գործելու համար:Անհատը պիտի գիտակցի,թե որ արժեքի կրողն է:

Կան այնպիսի արժեքներ,որոնք մնայուն են,բացարձակ:Օրինակ,բարին,գեղեցիկը,սերը,հայրենասիրությունը:Նմանատիպ արժեքների կրող լինել պարտադիր է և անհատի հայեցողությանը չպետք է թողնել,որովհետև հասարակության առաջընթացի կարևոր պայմանն են:Իսկ ինչ խնդիր կունենա անհատը,եթե ինքն ընտրի լինել հայրենասեր ,թե՝ ոչ,բարի կամ ոչ:Շատ կարևոր է, որ մարդիկ լինեն մնայուն արժեքների կրող,քանի որ արժեքների հիման վրա ենք մենք կայացնում մեր որոշումները:

Արժեքները գործում են որպես մարդկային համընդհանուր իդեալ:Դրանք ներառում են կյանքը,ազատությունը,երջանկությունը,խաղաղությունը,արդարությունը,,իրավունքն ու պարտականությունը:Արժեքները սեմանվում են դաստիարակության և կրթության միջոցով ընտանիքում ,դպրոցում:

Արժեքների մեծ մասը սնվում է էթնիկական նորմերից,վերջիններն էլ անհրաժեշտ են մարդկանց համակեցությունն ապահովելու համար,դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի:Դրանք տարբեր են տարբեր հասարակություններում,նույն հասարակության տարբեր շրջաններում,նույն երկրի տարբեր տարածքներում:Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ և որքան դրանք ավելի պահանջկոտ են, լուրջ արժեհամակարգ պետք է ձևավորել:

Զարգացած մշակույթները ունեն ավելի զարգացած էթիկական նորմեր և դրանք քայքայվելիս առաջանում են արժեհամակարգի խնդիրներ:Այդ է պատճառը,որ տարատեսակ <<ազատություններ> իրենց հետ մեծ վտանգ են բերում:

Կարևոր է դիտարկել բարոյականությունը որպես արժեք:Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են,իսկ արժեքները՝ բունը,ապա բարոյականությունը դրա սաղարթն

է:Բարոյական է այն ամենը,ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց:

Շատ կարևոր է մարդուն դիտարկել իբրև արժեք:Կա տեսակետ,ըստ որի,արժեքն ինքնին չի արտահայտվում,այլ մարդկանց նկատմամբ հարաբերության մեջ է դրսևորվում,և մարդը ինքն իրեն գնահատելով ինքնքիռչակվում է որպես արժեք.<<Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում,երբ արժեք է ներկայացնում միայն մարտնչող մարդը>>,-ասել էԹելման Էռնեստը:

Երբ փլուզվում են արժեքները,խախտվում է համակեցությունը և տարածվում է անարդարությունը:

Արժեք են *մարդը և իր իրավունքները*:Նմանատիպ մոտեցումներ կային վերածննդի ժամանակաշրջանում:Մեկ այլ կարծիքով՝մարդն արժեք է,քանի որ գերագույն արժեք հանդիսացող մարդկային կյանքն է կրում իր մեջ:Բայց մարդկային կյանքն ինքնին չի գոյավորվում,այլ կայանում է մարդու վրա,մարդու միջոցով:Ուրեմն,կարող ենք ընդհանրացնելով ասել,որ ***մարդն արժեք*** է:Այս իմաստով տեղին է հիշել Մակար Մեծին. <<Բարձր են մարդու արժանիքները:Նայիր,ինչպիսին են երկինքը,երկիրը,արեգակը,լուսինը:Նրանց մեջ չէ,որ Տերը բարեհաճում է հանգստանալ,այլ լոկ մարդու մեջ>>:

Արժեքների մեջ ուշադրության արժանի է ***հայրենասիրությունը***:Այն կարևոր է հատկապես փոքր ազգերի համար,առավել ևս,երբ նրանք ապրում են աշխարհաքաղաքական բարդ պայմաններում,շրջապատված թշնամական պետություններով,երբ անընդհատ վտանգված է նրա ֆիզիկական գոյությունը:Ինքնությունը պահպանելու լավագույն ձևը մնում է ազգասիրությունը,հայրենասիրությունը.<<Ինքն իրեն հարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանության հույսը դնում է նախ իր բազկի,և իր զենքի վրա>>[1]:

Ուշադրության է արժանի հայ ժողովրդի՝ որպես էթնոսի բնութագիրը,որի հիմքում ընկած են բարոյական բարձր արժեքները,այն է.

1.*Հայը երբեք պատերազմ չի սկսել առաջինը*,այսինքն գնահատում ենք ազատությունը որպես արժեք:

[1] Գարեգին Նժեհ, Ընտիր երկեր,Երևան,2007,368 ,էջ 27

2.*Հայն անսահման պաշտում է խաղաղությունը և խաղաղության գինը*:<<Խաղաղություն ամենեցուն>>,սա աշխարհի ապահովության հանդեպ անկաշառելի ցանկության մաղթանքն է:

3.*Հայոց ազգը բարոյական ազգ* է,որից բխում են նրա բնավորության լավագույն գծերը, բարոյական արժեքները՝ լայնախոհություն, համբերատարություն, գեղեցիկի, ճշմարիտի, բարու ընկալումը,դյուրահավատությունը,որը նշանակում է,որ նա խաբել չգիտի:

Հայ մարդու արժեքային համակարգի լավագույն դրսևորումը <<Սասնա ծռեր>> էպոսն է:

Այն անհատներն ու ազգերը, որոնք ապրում են արժեքների գոյակցությամբ,բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են,իսկ երբ նվազում են արժեքները,վրա է հասնում ոգու սովը:

Ըստ Շալոմ Շվարցի՝ բազային արժեքների հիմքում ընկած են պահանջմունքները,և,որ հասարակությունների ներսում ուսումնասիրելով բազային արժեքները,կարելի է երկրների միջև մշակութային ընդհանրությունների,մերձավորության կամ հեռավոր պատկեր ստանալ:

Դրանք են՝

- **Իշխանություն**՝ սրա հիմքում ընկած է սոցիալական վերահսկողություն ունենալու նպատակը:
- **Հեդոնիզմ**՝արժեքների հիմքում ընկած նպատակը,հաճույքը կամ հասարակական բավարարվածությունն է:
- **Ինքնուրույնություն**՝վարքի ձևի մտածողություն և ստեղծագործ ակտիվությունը,ինքնությունը:
- **Ավանդականություն**՝ սրա հիմքում ընկած է մշակութային և կրոնական սովորույթների նկատմամբ հարգանքն ու դրանց պահպանումը:
- **Ձեռքբերում** ՝արժեքի հիմքում ընկած նպատակը անձնային հաջողությունն է, սոցիալական ստանդարտների համապատասխան կոմպետենտության ապահովումը:
- **Ստիմուլյացիա**՝արժեքների հիմքում ընկած էօրգանիզմի օպտիմալ ակտիվությունն ապահովելու համար նորարարության,փոփոխության բնական-ֆիզիոլոգիական պահանջմունքները;

- **Ունիվերսալիզմ՝** արժեքի մոտիվացիոն հիմքն են կազմում հասկացումը,հանդուրժողականությունը,մարդկանց բնության պահպանման ցանկությունը:
- **Կամեցողություն՝** հիմքում ընկած էհարաատների բարօրության պահպանումը և ավելացումը:
- **Կոմֆորմություն՝** հիմքում ընկած է սոիալական սպասումներին հակասող կամ ուրիշներին վնասող գործողությունների զսպումը:
- **Անվտանգություն՝** արժեքների հիմքում ընկած է հասարակության,հարաբերությունների և սեփական անձի անվտանգության և կայունության ապահովումը:

Շվարցը վերլուծելով այս տվյալները,եկել է այն եզրահանգման,որ կան 7 մշակութային կողմնորոշումներ,և դրանց վրա կազմել է հասարակությունների մշակութային պրոֆիլներ:Դրանք հակադարձ համեմատական են միմյանց նկատմամբ:[2]

Պատկեր 1[2]



[2] http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12279,

Նմանատիպ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է,որ Հայաստանը նշված առանցքներից ավելի մոտ է գտնվում <<պատկանելիություն>>,<<հիերարխիա >> բևեռներին և գտնվում է <<ներդաշնակություն-վարպետություն>> գրեթե կենտրոնական մասում:Իսկ դա նշանակում է,որ Հայաստանի հասարակությունը կրում է ավանդույթների հանդեպ ակնածանքի,հեղինակության,համեստության արժեքները՝ լայնախոհության ,հետաքրքրասիրության,հաճույքի և բուռն կյանքի արժեքների համեմատ:Հայաստանի հասարակությունը գտնվում է բնության հետ միասնության,աշխարհին խաղաղության և հավակությունների ու խիզախության արժեքային բևեռների մեջտեղում և այլն:

Այսպիսով,ցանկացած երկրում գերակա արժեքների ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս ոչ միայն բնութագրել տվյալ մշակույթը,այլև այն կրող հասարակությանը:

Եզրակացություն

Այսպիսով, արժեքների մասին մտորել են դեռևս հին ժամանակներից: Դրանց կարևորությունը արդիական է մեր օրերում: Արժեքները կարող ենք համակարգել, խմբավորել, բայց առանձին դիտարկել, սահմանազատել ավելի կարևոր և պակաս կարևոր արժեքների, հնարավոր չէ,դրանք մեկ ամբողջություն են:

Մարդկային և հասարակական հարաբերությունները մշտապես զարգանում են,փոփոխվում:Ժողովուրդները և ազգերը բնավորություն են փոխում:Տեղեկատվական տեխնոլոգիաները,պետությունների միջև սերտ շփումները, տնտեսական, քաղաքական, տեղեկատվական մակարակներում նույնպես մեծ ազդեցություն ունեն:Բայց բոլոր դեպքերում դրանց հիմքում ընկած են պահանջմունքների վրա հենվող և պահանջմունքների համապատասխանող արժեքներ:

Արժեքները ամրագրվում են սահմանադրություններում, օրենքներում:

Հիմնարար արժեքները մնայուն են, կարող են որոշակի փոփոխության ենթարկվել,բայց բուն էությունը չփոխել,հակառակ դեպքում մարդը կդադարի մարդ լինել,իսկ ազգերը՝ բարոյալքվել, կործանվել:

Գրականություն

1.Ա.Նալչաջյան,Էթնիկ հոգեբանություն

2.Ա.Պետրոսյան,Բոլոր ժամանակների Հայաստանը

3.Գ.Նժդեհ,Ընտիր երկեր

4.Հասարակագիտություն 8,դասագիրք

5. Հասարակագիտություն 10,դասագիրք

6.https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84%D5%B6%D5%A5%D6%80 ,01.09.2022

7.https://www.google.com/search?q=%D1%86%D0%B5%D0%BD%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D0%B8+%D1%87%D0%B5%D0%BB%D0%BE%D0%B2%D0%B5%D0%BA%D0%B0+%D0%BA%D0%B0%D1%80%D1%82%D0%B8%D0%BD%D0%BA%D0%B8&tbm=isch&ved=2ahUKEwi8oJ7lsvT5AhWWNewKHZk0AakQ2-cCegQIABAA&oq=%D1%86&gs_lcp=CgNpbWcQARgAMgQIIxAnMgQIIxAnMgsIABCABBCxAxCDATIICAAQgAQQsQMyBQgAEIAEMgsIABCABBCxAxCDATIICAAQgAQQsQMyBQgAEIAEMgUIABCABDIFCAAQgARQ_CVY_CVgmF9oAHAAeACAAXiIAewBkgEDMC4ymAEAoAEBqgELZ3dzLXdpei1p,01.09.2022